

Կարիքների գնահատում.
Թ-րաֆիքինգի հակազդման
միջոցառումներ
Հայաստանում



International Organization for Migration

Զեկույցում ներկայացված կարծիքները պատկանում են հեղինակին, և պարտադիր չէ, որ արտացոլեն Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) պաշտոնական դիրքորոշումը: Զեկույցում ներկայացված նյութը և կիրառված նշանները չեն ենթադրում ՄՄԿ-ի կողմից որևէ կարծիքի արտահայտում՝ կապված որևէ երկրի, տարածքի, քաղաքի կամ շրջանի կամ դրանց ղեկավար մարմինների և սահմանների իրավական կարգավիճակի հետ:

ՄՄԿ-ն հավատարիմ է այն սկզբունքին, որ քաղաքակիրթ ու կանոնակարգված միգրացիան շահավետ է միգրանտների և հասարակության համար: ՄՄԿ-ի՝ որպես միջկառավարական կազմակերպության, փոխգործակցությունը միջազգային հանրության իր գործընկերների հետ ուղղված է միգրացիայի ոլորտում առկա մարտահրավերների լուծմանը, միգրացիայի հետ կապված հարցերի վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացմանը, միգրացիայի միջոցով սոցիալ-տնտեսական զարգացման խթանմանը, ինչպես նաև միգրանտների մարդկային արժանապատվության արժևորմանն ու բարեկեցության ապահովմանը:

ՄՄԿ-ն շնորհակալություն է հայտնում ՄՄԿ զարգացման հիմնադրամին սույն հետազոտության իրականացմանը և հրատարակմանը ֆինանսական աջակցություն ցույց տալու համար:

Հրատարակիչ՝ **Միգրացիայի միջազգային կազմակերպություն**
Հայաստանի Հանրապետություն,
Երևան 0010, ՄՄԿ-ի գրասենյակ,
Պետրոս Ադամյան 14, 1-ին հարկ
Հեռախոս՝ (+374 10) 58 56 92
Ֆաքս՝ (+374 10) 54 33 65
Էլ: hwug@iom.int
Կայք՝ www.iom.int

© 2016 Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Սույն հրատարակության ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահվել տեղեկատվական որոնողական համակարգում, կամ փոխանցվել որևէ ձևով կամ մի ջրոցով՝ էլեկտրոնային, մեխանիկական, լուսապատճենահանման, գրառման կամ այլ կերպ՝ առանց հրատարակչի նախնական գրավոր համաձայնության:

Կարիքների գնահատում.
Թրաֆիքինգի հակազդման
միջոցառումներ
Հայաստանում

Պատրաստվել է Միգրացիայի միջազգային
կազմակերպության (ՄՄԿ) հանձնարարությամբ

Հեղինակ՝ Մարիկա Մաքեդամ



IOM Development Fund
DEVELOPING CAPACITIES IN MIGRATION MANAGEMENT



International Organization for Migration

Կարիքների գնահատում:

**Թրաֆիքինգի հակազդման
միջոցառումներ Հայաստանում**

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

Հեղինակը և Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ) ցանկանում են երախտագիտությամբ նշել ՄՄԿ-ի աշխատակազմի անդամների՝ Իլոնա Տեր-Մինասյանի, Նունե Ասատրյանի, Միրա Ալբուի, Ան Նգույենի և Դենիզ Լասսարի, ինչպես նաև Հայաստանում ստորև հիշատակված գործընկերների ավանդն ու աջակցությունը.

Վահրամ Կաժոյան, դեսպան, Միջազգային կազմակերպությունների վարչության պետ, ՀՀ արտաքին գործերի նախարարություն. Լուսինե Հակոբյան, Մարդու իրավունքների և հումանիտար համագործակցության բաժնի երկրորդ քարտուղար, ՀՀ արտաքին գործերի նախարարություն. Սուսաննա Ազատյան, Նախադպրոցական և միջնակարգ կրթության բաժնի պետ, ՀՀ կրթության և գիտության նախարարություն. Տիգրան Գրիգորյան, Միջազգային իրավական փոխօգնության և արտաքին կապերի վարչության պետի տեղակալ, ՀՀ արդարադատության նախարարություն. Վարդան Բադասյան, Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության պետի առաջին տեղակալ, ՀՀ ոստիկանություն. Իրինա Դավթյան, ՀՀ միգրացիոն պետական ծառայության պետի տեղակալ. Ամբակում Գրիգորյան, Հատկապես կարևոր գործերով քննության գլխավոր վարչության պետի տեղակալ, ՀՀ քննչական կոմիտե. Դավիթ Թումասյան, Քրեական գործերի քննության աջակցության վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, ՀՀ քննչական կոմիտե. Արմեն Մարուխյան, Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ, ՀՀ գլխավոր դատախազություն. Ստեփան Շահումյան, Առողջապահական պետական տեսչության գլխավոր մասնագետ, ՀՀ առողջապահության նախարարություն. Մանվել Մայիլյան, Սահմանապահ զորքերի փոխիրամանատար, ՀՀ ազգային անվտանգության ծառայություն. Սյուզաննա Փիլոսյան,

Սահմանապահ զորքերի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՀՀ ազգային անվտանգության ծառայություն. Լուսինե Սարգսյան, իրավական վերլուծության վարչության պետ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ. Վիկտորիա Ավակովա, Թրաֆիքինգի զոհերի նույնացման և աջակցության հարցերով խորհրդի անդամ, Միավորված մեթոդիստների օգնության կոմիտե (ԱՄՔՈՐ), Հայաստան. Ենոք Շատվորյան, Թրաֆիքինգի զոհերի նույնացման և աջակցության հարցերով խորհրդի անդամ, «Հույս և Օգնություն» ՀԿ. Հասմիկ Էդիլյան, Թրաֆիքինգի զոհերի նույնացման և աջակցության հարցերով խորհրդի անդամ, «Ժողովրդավարությունն այսօր» ՀԿ. Քեյթ Պոչապսկի, պաշտպանության հարցերով աշխատակից, Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ (ՄԱԿ ՓԳՀ). Մարիցա Հովհաննիսյան և Կարինե Քեշաբյան, ԱՄՆ պետդեսպարտամենտի Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ ոլորտում համագործակցության բյուրոյի ծրագրի օգնականներ, Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանություն. Դեյվիդ Գուլլետ, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) երևանյան գրասենյակ, ժողովրդավարացման ծրագրի աշխատակից. Օվսաննա Բաբայան, Միգրացիայի և թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետ, ԵԱՀԿ երևանյան գրասենյակ. Նունե Հովհաննիսյան, Ազգային համակարգող, Աշխատանքի միջազգային կազմակերպություն (ԱՄԿ):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ.....	iv
1. Ներածություն.....	1
1.1. Հետազոտության համատեքստ.....	1
1.2. Հետազոտության մեթոդաբանություն	2
1.3. Հետազոտության սահմանափակումներ	8
2. Եզրակացություններ	12
2.1 Նույնացում և ուղղորդում.....	15
2.2 Պաշտպանություն և աջակցություն.....	24
2.3. Հետաքննություն և հետապնդում	35
2.4. Կանխարգելում	48
2.5 Համակարգում և համագործակցություն	61
3. Առաջարկություններ	67
3.1 Նույնացում և ուղղորդում.....	68
3.2 Պաշտպանություն և աջակցություն.....	70
3.3 Հետաքննություն և հետապնդում	73
3.4 Կանխարգելում	76
3.5. Համակարգում և համագործակցություն	79
Հավելվածներ.....	81
Ա. Օգտագործված գրականության ցանկ	81
Բ. Հարցազրույցներին մասնակցած շահառուներ.....	83
Գ. Հարցազրույցների անցկացման գործիք-ձևանմուշ	84
Դ. Հարցման գործիքի ձևանմուշ.....	96
Ե. Գնահատման ցուցիչներ	115

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԹՎ ԳԳ	Թրաֆիքինգի հակազդման կարիքների գնահատման գործիք
ԳՐԵՏԱ	Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագիտական խումբ
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ՄԿ	Միջազգային կազմակերպություն
ՄՄԿ	Միգրացիայի միջազգային կազմակերպության
ՓՀ	Փոխըմբռնման հուշագիր
ՀՀ ԱԱՀՆ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԳԱԾ	Գործողությունների ազգային ծրագիր
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԱՈԼՄ	Ազգային ուղղորդման մեխանիզմ
ՄԹ	Մարդկանց թրաֆիքինգ
ՄՊԾ	Միգրացիոն պետական ծառայություն
ԱՄԷ	Արաբական Միացյալ Էմիրություններ
«ԱՄՔՈՐ»	Միավորված մեթոդիստների օգնության կոմիտե
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԿ ԿՀԿ	ՄԱԿ-ի կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիա

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. Հետազոտության համատեքստ

Սույն հետազոտությունն իրականացվել է Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) հանձնարարությամբ և ֆինանսավորվել անդամ պետությունների միջոցներից ՄՄԿ-ի Զարգացման հիմնադրամի կողմից, որը հանդես է գալիս որպես ՄՄԿ-ի ներքին ֆինանսավորման մեխանիզմ: Սույն ուսումնասիրության նպատակն է.

- հավաքագրել և ի մի բերել շահառուների կարծիքները մարդկանց թրաֆիքինգի ներկայիս իրավիճակի, ինչպես նաև երկրում և տարածաշրջանում ձեռնարկվող հակազդման միջոցառումների վերաբերյալ,
- սահմանել շահառուների մոտեցումները թրաֆիքինգի շուրջ ձևավորված իրավիճակի և միտումների վերաբերյալ, ինչպես նաև ի հայտ բերել նույնացման, ուղղորդման, աջակցության, պաշտպանության, կանխարգելման և համագործակցության ոլորտներում եղած բացերը,
- ձևակերպել առանցքային նշանակություն ունեցող եզրակացություններ և ներկայացնել առաջարկություններ ներկայիս հակազդման միջոցառումների ամրապնդման, ոչ պատշաճ գործընթացների շտկման, ինչպես նաև ներպետական, իսկ հնարավորության դեպքում նաև տարածաշրջանային մակարդակով առկա բացերի լրացման եղանակների վերաբերյալ:

Սույն ուսումնասիրության երկրորդական նպատակն է մշակել արագ գնահատման գործիք (Թրաֆիքինգի հակազդման կարիքների գնահատման գործիք (ԹՀ ԳԳ)), որը կարող է հարմարեցվել տարբեր երկրների և տարածաշրջանների պայմաններին, ինչպես նաև վերանայվել՝ հիմք ընդունելով Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում դրա օգտագործման փորձը:

1.2. Հետազոտության մեթոդաբանություն

Կարիքների գնահատումն իրականացվել է վեց հիմնական փուլերով. 1) երեք երկրներին առնչվող նյութերի գրասենյակային ակնարկ, 2) կարիքների գնահատման գործիքի մշակում, 3) հարցազրույցներ երկրի ներսում 4) էլեկտրոնային հարցումների տարածում, 5) տվյալների մուտքագրում, եզրակացությունների վերլուծություն և գնահատման զեկույցի պատրաստում, 6) գնահատման եզրակացությունների և առաջարկությունների վավերացում ուսումնասիրության առարկա երկրներում անցկացված երեք ազգային աշխատաժողովների շրջանակներում:

Գրասենյակային ակնարկ

Գրասենյակային ակնարկում ընդգրկվել են առանցքային նշանակություն ունեցող փաստաթղթեր, որոնք առնչվում են ուսումնասիրության առարկա երեք երկրներում մարդկանց թրաֆիքինգին, ինչպես նաև կարիքների գնահատման մեթոդաբանությանը: Փորձ է արվել բոլոր երեք երկրներում ընտրել հավասար քանակությամբ փաստաթղթեր: Բացի հեղինակի սեփական հետազոտությունից, որը կոչված եղել ի հայտ բերել տվյալ թեմային առնչվող փաստաթղթեր, հետազոտական զեկույցներ և այլ գնահատումներ, ՄՄԿ-ի ներկայացուցչությունների աշխատակազմը Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում սահմանել է գրասենյակային ակնարկում ընդգրկված հիմնական փաստաթղթերը: Գնահատման գործիքի և վերլուծության շրջանակների մշակման համար ուսումնասիրվել են կարիքների գնահատման մեթոդաբանությունը խորապես լուսաբանող նյութեր: Ուսումնասիրված 100 փաստաթղթից առանցքային նշանակություն ունեցող 61 անվանում ընդգրկվել է օգտագործված գրականության ցանկում (Հավելված Ա):

Կարիքների գնահատման գործիքի մշակում

Ուսումնասիրության առարկա երկրներում փորձարկման նկատառումով գրասենյակային ակնարկի հիման վրա մշակվել են կարիքների գնահատման գործիքի բաղադրիչներ, այդ թվում՝ ձևանմուշ, որը գնահատման զեկույցը կազմելիս կարող է ծառայել որպես ուղղորդում: Այս գործիքը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- մանրամասն հարցազրույցների անցկացման ուղեցույց (Հավելված Գ), որը նախատեսված է ուսումնասիրության

առարկա երեք երկրներում շահառուների հետ ուղղակի հարցազրույցների համար,

- Էլեկտրոնային հարցման ձևանմուշ (Հավելված Դ), որը նախատեսված է ուսումնասիրության առարկա երեք երկրներում ՄՄԿ-ի օժանդակ աշխատակազմի կողմից թարգմանվելու և էլեկտրոնային փոստով տարածվելու համար, և որը պետք է լրացվի և վերադարձվի անկախ խորհրդատուին,
- տվյալների վերլուծության աշխատանքային թերթիկ, որը որպես ուղղորդում նախատեսված է տվյալների վերլուծության համար և գնահատումներ իրականացնող անձանց հնարավորություն է ընձեռում մուտքագրել էլեկտրոնային հարցման և տվյալ երկրում անցկացված մանրամասն հարցազրույցների միջոցով ձեռք բերված տվյալները՝ ստանալով չափագրված նյութեր: Տվյալների վերլուծության աշխատանքային թերթիկում ընդգրկված է նաև համեմատական վերլուծության աղյուսակ, որը բաղկացած է ինչպես շրջանակային, այնպես էլ աշխատանքային ցուցիչներից, որոնք էլ համապատասխանում են հնգական չափորոշիչ նախատեսող հինգ կատեգորիաներին և կոչված են ապահովել ուսումնասիրության առարկա երկրներում թրաֆիքինգի հակազդման միջոցառումների արագ գնահատումը (Հավելված Ե):


Գնահատման գործիքի մշակման գործընթացին զուգահեռ՝ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում ՄՄԿ-ի պատասխանատուներին առաջարկվել է ի հայտ բերել շահառուներ և առաջարկել նրանց մասնակցել մանրամասն հարցազրույցներին կամ հետազոտության անցկացման գործընթացին:

Հարցազրույցներ երկրի ներսում


2016 թվականի հուլիսի 13-ից 25-ն անկախ խորհրդատուներ երեք օրվա ընթացքում անցկացրել է ընդհանուր առմամբ 40 հարցազրույց ուսումնասիրության առարկա երեք երկրներում՝ ներգրավելով 92 անձ և օգտագործելով մանրամասն հարցազրույցի ձեռնարկը:

- Հայաստանում անցկացվել է 16 հարցազրույց 37 անձի հետ (19 տղամարդ և 18 կին):
- Ադրբեջանում անցկացվել է 14 հարցազրույց 36 անձի հետ (28 տղամարդ և 8 կին):
- Վրաստանում անցկացվել է 10 հարցազրույց 19 անձի հետ (6 տղամարդ և 13 կին):

Հարցազրույց տրված անձանց բաշխումն ըստ սեռի




Շահառուների հետ հարցազրույցների ընդհանուր պատկերը




Հարցազրույցների 92 մասնակիցներից 58 տոկոսը եղել է արական սեռի (n=53), իսկ 42 տոկոսն իգական սեռի (n=39): Բոլոր երեք երկրներում հարցազրույցների կեսից ավելին անցկացվել է պետական կազմակերպություններում (n=21): Այս հարցազրույցների անցկացման համար օգտագործվել է հարցազրույցների ձևանմուշը (Հավելված Գ), որը վերանայվել է բոլոր երեք երկրներում քաղված դասերի հիման վրա:

Հարցազրույցներ փված մասնագետների ընդհանուր պատկերը



Հայաստանում հարցազրույց փվածների բաշխումն ըստ սեռի




Հայաստանում անցկացվել է 16 հարցազրույց 37 անձի հետ: Հարցազրույցների կեսը (n=8) անցկացվել է պետական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Էլեկտրոնային հարցումների տարածում

Էլեկտրոնային հարցումները (Հավելված Դ) թարգմանվել և տարածվել են ՄՄԿ-ի կողմից այն շահառուների շրջանում, ովքեր չեն մասնակցել մանրամասն հարցազրույցներին: ՄՄԿ-ի պատասխանատուներին հանձնարարվել է ընտրել մայրաքաղաքներից դուրս իրականացվող գործնական աշխատանքում ներգրավված անձանց: Բացի այդ, մանրամասն հարցազրույցների մասնակիցներին հանձնարարվել է առաջարկել այնպիսի շահառուների, ովքեր կկարողանան պատշաճ կերպով պատասխանել էլեկտրոնային հարցումներին: Հատկանշական է, որ այս հարցին ի պատասխան ստացվեց քիչ առաջարկություններ, ընդ որում մասնակիցների մեծ մասը հաստատեց, որ մանրամասն հարցազրույցներ տվածները հենց իրենք են հանդես գալիս որպես հիմնական շահառուներ: Բացի այդ, էլեկտրոնային հարցումներ ստացողներին առաջարկվեց տարածել դրանք այնպիսի անձանց շրջանում, ովքեր ի վիճակի կլինեն հաղորդել արժեքավոր տեղեկություններ: Որպես լրացված հարցումների հանձնման վերջնաժամկետ ընտրվեց 2016 թվականի հունվարի 31-ը: ՄՄԿ-ի աշխատակիցները կարևոր դերակատարում ստանձնեցին շահառուների հետ պահպանելով հետագա կապը և ապահովելով հարցումների լրացումն ու վերադարձը:


Հարցումներին մասնակցած անձանց դերակատարումը



Տարածված էլեկտրոնային հարցումներին ստացվեց միայն 19 պատասխան, ընդ որում յուրաքանչյուր երկրից ստացված պատասխանների թիվը գրեթե նույն էր (6 պատասխան Հայաստանից, 7 պատասխան Ադրբեջանից և 6 պատասխան Վրաստանից): Հարցվածների մեծ մասը (68%) իգական սեռի էր (n=13): Հարցվածների զգալի մասը միջկառավարական կազմակերպություններից էր:

Վրաստանից բոլոր հարցվածներն իգական սեռի էին՝ ի տարբերություն Ադրբեջանի, որտեղ յոթ հարցվածներից միայն մեկն էր իգական սեռի: Հայաստանում հարցվածներից չորսն իգական սեռի էին, իսկ երկուսը՝ արական: Հարցվածներից ոչ բոլորն էին պատասխանել բոլոր հարցերին:

Հարցմանը ստացված պատասխաններ



Հայաստանում էլեկտրոնային հարցումը տարածվել է ՄՄԿ-ի կողմից Հայաստանում Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով միջգերատեսչական աշխատանքային խմբի օգնությամբ և տեղադրվել է antitrafficking.am կայքում:¹ Էլեկտրոնային հարցումներ է հանձնել վեց անձ, որոնց կեսն ներկայացել է որպես պետական հաստատությունների ներկայացուցիչ:

Տվյալների մուտքագրում, եզրակացությունների վերլուծություն և գնահատման զեկույցի պատրաստում

Բոլոր էլեկտրոնային հարցումների տվյալները, որոնք հավաքագրվել և վերադարձվել են խորհրդատուին, վերլուծության նպատակով մուտքագրվել են համապատասխան աղյուսակներում: Նմանապես, մանրամասն հարցազրույցների վերաբերյալ նշումները մուտքագրվել են տվյալների մուտքագրման համապատասխան աղյուսակում: Այս գործընթացն օգտակար եղավ որակական տվյալների ստացման և ուսումնասիրության առարկա երկրներից մուտքային տվյալների և տեսանկյունների վերլուծության համար: Ստացված տվյալների կենտրոնում համապատասխան թեմաների

¹ Տե՛ս <http://antitrafficking.am/eng/attention-iom-is-conducting-an-online-survey/> (կայքէջի բովանդակությունը ներկայացված է 2016 թ. փետրվարի 25-ի դրությամբ):

հաճախականությունն ու տեսակն էր, ինչը թույլ տվեց գնահատողին եզրակացություններ անել և ի հայտ բերել բացեր՝ համեմատելով դրանք հինգ թեմատիկ ոլորտների հետ և մշակելով դրանց լրացմանն ուղղված առաջարկություններ: Տվյալների մուտքագրումից և վերլուծությունից ստացված չափագրված նյութերը որպես հղում մեջբերվել են գնահատման զեկույցի նախագիծը մշակելիս, իսկ գնահատման զեկույցում ընդգրկվել է մի քանի աղյուսակ, գրաֆիկ և գծապատկեր: Կարիքների գնահատման գործիքների հավաքածուն լրացուցիչ մշակվել է և ներկայացվել ՄՄԿ՝ հետագա հարմարեցման և օգտագործման նպատակով:

Գնահատման եզրակացությունների վավերացում

Ուսումնասիրության առարկա երեք երկրներից յուրաքանչյուրում կազմակերպվել են եզրակացությունների վավերացման աշխատաժողովներ, որոնք կոչված են եղել ներկայացնել զեկույցի եզրակացությունները և շահառուներին առաջարկել վավերացնել իրենց ուշադրությանը ներկայացված առաջարկությունները: Յուրաքանչյուր աշխատաժողովին անցկացվել է հիմնական եզրակացությունների և առաջարկությունների ամփոփ ներկայացում, որի ընթացքում շահառուները բաժանվել են խմբերի՝ յուրաքանչյուր կատեգորիայում բերված առաջարկությունները քննարկելու նպատակով: Զեկույցն ավարտուն տեսքի է բերվել Երևանում 2016 թվականի ապրիլի 28-ին անցկացված աշխատաժողովին ստացված արձագանքի հիման վրա:

1.3. Հետազոտության սահմանափակումներ

Սույն ուսումնասիրության վրա դրված են որոշակի սահմանափակումներ, որոնք հարկ է նշել:

Ուսումնասիրության առարկա բոլոր երեք երկրների վերաբերյալ անհավասար և սահմանափակ տվյալներ Որոշ երկրներում առանցքային նշանակություն ունեցող որոշ փաստաթղթեր արդիական չէին, իսկ այլ երկրներում դրանք համեմատաբար թարմացված էին, ինչի հետևանքով գրասենյակային ակնարկի գործընթացի շրջանակներում ստացված տեղեկություններն աղճատվել են: Որոշ դեպքերում գրասենյակային ակնարկի գործընթացի շրջանակներում օգտագործված փաստաթղթերում տեղ էին գտել բազմաթիվ կրկնություններ, ընդ որում՝ մի քանի տարբեր աղբյուրներում: Առկա

տվյալների հետ կապված և սահմանափակում ակնհայտորեն բխում էր սահմանված տեղեկատվության բնույթից, այն է՝ գրասենյակային ակնարկի գործընթացի շրջանակներում ստացվել են ավելի շատ բովանդակային տեղեկատվություններ թրաֆիքինգի շուրջ ստեղծված իրավիճակի և միտումների, գործերի հետաքննության, հետապնդման, պաշտպանության և աջակցության, քան նույնացման և ուղղորդման, շահառուների միջև համագործակցության և մասնավորապես՝ կանխարգելման վերաբերյալ: Եվ վերջապես, գրասենյակային ակնարկում ընդգրկված փաստաթղթերը սահմանափակվում են անգլերեն լեզվով առկա փաստաթղթերով, ինչի հետևանքով կարող են բացառվել այս թեմային առնչվող տեղեկատվության արժեքավոր աղբյուրներ այլ լեզուներով:

Ուսումնասիրության առարկա երեք երկրներում տարածված հարցումներից վերադարձվել է միայն 19 հարցում (6-ը Հայաստանից, 7-ը Ադրբեջանից և 6-ը Վրաստանից), ինչը նշանակում է, որ հարցումների շրջանակներում ստացված տվյալները խիստ սահմանափակ են: Ավելին, թեև մանրամասն հարցազրույցներում մասնակցել է մի քանի անձ, սակայն նրանցից միայն մի քանիսն է ակտիվ մասնակցել քննարկումներին: Ասվածը հատկապես վերաբերում է Ադրբեջանին, որտեղ հանդիպումներին ներկա են գտնվել բազմաթիվ մասնակիցներ, սակայն նրանց մեծ մասը ակտիվորեն չի մասնակցել քննարկումներին՝ ի տարբերություն Վրաստանի, որտեղ ներկա է գտնվել մասնակիցների նվազագույն թիվ (19 անձ), սակայն որոնց մեծամասնությունն ակտիվ մասնակցել է քննարկումներին:

Ստացված տեղեկությունների սուբյեկտիվ բնույթ Կարիքների արագ գնահատման մեթոդաբանության հիմնական սահմանափակումն այն է, որ նման մեթոդաբանությունը որպես տվյալների առաջնային աղբյուր հիմնված է շահառուների սուբյեկտիվ կարծիքների վրա: Համապատասխանաբար ներկայացված գնահատումը խոցելի է թրաֆիքինգի շուրջ ստեղծված իրավիճակի վերաբերյալ սուբյեկտիվ գիտելիքների (կամ դրանց բացակայության), ինչպես նաև անձնական հայացքների և կանխակալ կարծիքների տեսանկյունից: Թեև գրասենյակային ակնարկի պատրաստման գործընթացը տուժել է վերը շարադրված սահմանափակումներից, սակայն այն որոշակիորեն մեղմացրել է նշված սահմանափակումները: Այդուհանդերձ, քանի որ գնահատումը հիմնված է եղել մանրամասն հարցազրույցների արդյունքների վրա, ուստի վերջնական գնահատման զեկույցը և առաջարկությունները ներկայացնում են ավելի շուտ թրաֆիքինգի հակազդման միջոցառումների արդյունավետության վերաբերյալ

շահառուների ունեցած տեսանկյունները, քան նման միջոցառումների իրական արդյունավետությունը:

Նմուշների ընտրության հարմարություն և ընտրության կողմնակալություն Գնահատման գործընթացի շրջանակներում ստացված տեղեկությունների ակնհայտ սուբյեկտիվ բնույթին գումարվում է շահառուների նույնացմանն ու հավաքագրմանը բնորոշ ընտրության կողմնակալությունը: Հաշվի առնելով կարիքների գնահատման գործընթացին աջակցելու հարցում ՄՄԿ-ի ունեցած կարևոր դերակատարումը, հնարավոր է, որ շահառուները և նրանց տեսանկյուններն արտացոլեն ավելի շուտ թրաֆիքինգի հակազդման հարցում ՄՄԿ-ի որդեգրած մոտեցումն ու հաստատված կոնկրետ գործընկերությունները, քան ուսումնասիրության առարկա երկրներում կարծիքների համալիր հետազոտությունը: Բացի այդ, ընտրության կողմնակալության գործոնը նույնպես կարող էր անդրադառնալ ներկայացված պատասխանների վրա: Զեկույցը պատրաստվել է ՄՄԿ-ի հանձնարարությամբ, բոլոր երեք երկրներում հենց ՄՄԿ-ի աշխատակազմն է ընտրել համապատասխան մասնակիցներին, իսկ շատ դեպքերում աշխատակազմի անդամները ներկա են գտնվել հանդիպումներին:

Ստացված տվյալներում արտացոլված են մայրաքաղաքում տրված պատասխանները, և դրանցում չեն արժարժվում այլ տարածաշրջաններում շահառուների առջև ծառայած մարտահրավերը, քանի որ մայրաքաղաքներից դուրս շահառուների հետ հարցազրույցներ չեն անցկացվել: Մասամբ հարցման գործընթացը կոչված էր վերացնել այս սահմանափակումը և խրախուսել պատասխանների ստացումը մայրաքաղաքներից դուրս աշխատող շահառուներից, այդուհանդերձ, յուրաքանչյուր երկրից ստացված հարցումների թիվը բավականին փոքր է: Համապատասխանաբար, ստացված տվյալները չեն արտացոլում համազգային մակարդակով առկա մարտահրավերները և մոտեցումները, չեն անդրադառնում տարածաշրջանային և տեղական մակարդակով առկա տարբերություններին և բավականին աղճատված են մայրաքաղաքներից ստացված պատասխաններով:

Կիրառված մեթոդաբանության սահմանափակումներից է նաև գնահատմանը մասնակցած անձանց ինքնուրույն ընտրությունը: Հնարավոր է, որ կարիքների գնահատմանը (էլեկտրոնային հարցման կամ մանրամասն հարցազրույցի շրջանակներում) մասնակցելու ցանկություն հայտնած անձինք ունենան որոշակի դրական կամ բացասական մոտեցումներ, որոնք կտարբերվեն գնահատմանը մասնակցել չցանկացած անձանց մոտեցումներից: Ավելին,

Նրանցից ստացված տեղեկությունների սուբյեկտիվ բնույթը կարող է պայմանավորված լինել նաև այն քաղաքական և սոցիալական լարվածությամբ, որն առկա է ուսումնասիրության առարկա երկրների կոնկրետ համատեքստում:

Գործնական բնույթի սահմանափակումներ Կարիքների գնահատման գործընթացի իրականացման համար սահմանված ժամկետը՝ մտահոգացումից մինչև վերջնական հանձնման պահը, կազմել է չորս ամիս՝ ութ ամսվա կտրվածքով: Գնահատումն իրականացվել է մեկ անձի կողմից՝ ՄՄԿ-ի նյութատեխնիկական և մեկնաբանական աջակցությամբ: Իրականացված վերլուծությունը և տվյալների մուտքագրման գործընթացը հավանաբար կարող էին ավելի մանրամասն լինեին, եթե ծրագրումներդրվեր ավելի շատ մարդ-ժամ: Լեզվական նկատառումները նույնպես առաջացրել են որոշակի սահմանափակումներ, որոնց հաղթահարման համար պահանջվել է ՄՄԿ-ի թարգմանչական աջակցությունը: Հարցազրույցներ անցկացնող անձը ստիպված է եղել հենց ինքը ձեռագիր նշումներ կատարել հարցազրույցների ընթացքում, իսկ հարցազրույցների ձայնագրությունը չի կատարվել:

Այլ սահմանափակումներ Ստացված տեղեկությունների համաձայն՝ Հարավային Կովկասի երկրների միջև առկա քաղաքական լարվածությունը բացասաբար է անդրադարձել թրաֆիքինգի հակազդման ոլորտում համագործակցության վրա, և կարող է նաև ազդած լինի ներկայացված պատասխանների վրա այն դեպքերում, երբ համապատասխան անձինք գնահատման շրջանակներում ցանկացել են իրենց երկիրը ավելի հզոր ներկայացնել ուսումնասիրության առարկա այլ երկրների համեմատ: Հաշվի առնելով գոյություն ունեցող լարվածությունը՝ սույն ուսումնասիրությունը վերաձևակերպվել է, իսկ դրա համեմատական բնույթը փոխվել, ինչը նշանակում է, որ գնահատման գործիքի համեմատական կարողությունների արդյունավետ փորձարկումը անհնար է եղել:

Վերջին հաշվով, ուսումնասիրության առարկա երեք երկրների վերաբերյալ եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնող ի սկզբանե նախատեսված զեկույցի փոխարեն մշակվեցին ձևափոխված երեք տարբեր զեկույցներ: Սույն զեկույցում ներկայացված են Հայաստանին վերաբերող եզրակացություններ ու առաջարկություններ:

2. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանը համարվում է հիմնականում ծագման և տարանցիկ երկիր, թեև գնալով այն ավելի հաճախ դառնում նաև նպատակակետ երկիր:

Որպես ծագման երկիր Հայերի համար հիմնական նպատակակետ երկրներն են՝ Արաբական Միացյալ Էմիրությունները (ԱՄԷ), Թուրքիան, Ռուսաստանի Դաշնությունը և Հունաստանը: Թրաֆիքինգի զոհ դարձած հայ կանայք և աղջիկները տեղափոխվում են Թուրքիա և ԱՄԷ սեռական շահագործման նպատակով: Վերջին տարիներին հարկադիր աշխատանքը գնալով ավելի հաճախ դասվում է շահագործման առավել մտահոգիչ ձևերի շարքը, այդուհանդերձ, սեռական շահագործման նպատակով իրականացվող թրաֆիքինգն արժանանում է ավելի մեծ ուշադրության. հարցման շրջանակներում վեց հարցվածներից հինգը որպես թրաֆիքինգի առավել հաճախ ենթարկվող խումբ նշել են չափահաս կանանց: Ըստ որոշ հետազոտությունների, աշխատանք փնտրող արական սեռի միգրանտները խոցելի են Թուրքիայում և Ռուսաստանի Դաշնությունում, հատկապես՝ շինարարության և փոքր մասնավոր բիզնեսի ոլորտում, հարկադիր աշխատանքի նպատակով թրաֆիքինգի ենթարկվելու տեսանկյունից (Gen 1, Arm 15՝ էջ 12, Arm 16՝ էջ 8): Հայտնի են նաև Թուրքիայում տնային ծառայության նպատակով հայերի շահագործման դեպքեր (Arm 15՝ էջ 12): Հարցվածներից մեկը նշեց նաև օրգանների հեռացման մի դեպք, որը տեղի էր ունեցել 2012 թվականին, երբ Շրի Լանկայում հեռացվել էր ազգությամբ հայ մի տուժողի երիկամը, ընդ որում գործում ներգրավված են եղել հանցակիցներ Իսրայելից (ովքեր յուրաքանչյուր անձին վճարել են 2 000 ԱՄՆ դոլար) և նախկին Խորհրդային Միությունից: Այս հանցանքը գործած անձին մեղադրանք է ներկայացվել 132-րդ հոդվածով, և նա դատապարտվել է ութ տարվա ազատազրկման (Arm 27՝ էջ 51):

Որպես նպատակակետ երկիր կամ ներքին թրաֆիքինգ Հայաստանը գնալով ավելի հաճախ ճանաչվում է որպես նպատակակետ երկիր: Թեև էլեկտրոնային հարցման շրջանակներում բոլոր հարցվածները ($n=6$) Հայաստանը նշել են որպես ծագման երկիր, սակայն նրանց միայն կեսն է ($n=3$) ընդունել այն հանգամանքը, որ Հայաստանը հանդես է գալիս նաև որպես նպատակակետ երկիր: Հարցման շրջանակներում բոլոր վեց հարցվածները «հարկադիր

աշխատանք կամ ծառայություններ» պատասխանը նշել են որպես Հայաստանում շահագործման առավել տարածված ձևերից մեկը, ընդ որում նրանցից չորսը նշել է «պոռնկության շահագործում», իսկ երկուսը՝ «սեռական շահագործման այլ ձևեր» պատասխանները: Հարցվածներից երկուսն ավելացրել են շահագործման այլ ձևեր, այդ թվում՝ «հարկադրական մուրացկանություն» և «մանկական աշխատանք»: Համապատասխան գրականությունում որպես կարևոր և մտահոգիչ խնդիր է նշվել մանկական աշխատանքի շահագործումը գյուղատնտեսության, անասնաբուժության, շինարարության, արդյունաբերության, առևտրի և ծառայությունների մատուցման պաշտոնական և ստվերային հատվածներում, ինչպես նաև տներում և փողոցներում, սակայն այստեղ դիտվում է տեղեկությունների սուր պակաս (Arm 6՝ էջեր՝ 7-9, Gen 1): Տղաները թրաֆիքինգի են ենթարկվում հարկադիր աշխատանքի, իսկ կանայք ու աղջիկները պոռնկության մեջ ներքաշվելու նպատակով, ընդ որում հարկադրական մուրացկանությամբ զբաղվելու նպատակով երկրի ներսում թրաֆիքինգի են ենթարկվում ինչպես տղաները, այնպես էլ կանայք ու աղջիկները (Gen 1, Arm 8՝ էջ 23, էջ 26): Վեց հարցվածներից հինգը որպես շահագործման տարածված վայր նշել են «փողոցները»: Հարցվածներից երեքը նշել է մանկական աշխատանքին ավելի շատ անդրադառնալու անհրաժեշտությունը, իսկ նրանցից մեկը, մասնավորապես, նշել է մուրացկանության խնդիրը:

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) կողմից 2015 թվականին պատրաստված զեկույցում նշվում է, որ «աշխատանքային շահագործումը Հայաստանում հիմնականում կարող է ավելի շուտ վերագրվել Աշխատանքային օրենսգրքի խախտումներին», քան հարկադիր աշխատանքի և աշխատանքային թրաֆիքինգի դեպքերին (Arm 30՝ էջ 8), եզրակացնելով, որ «Հայաստանի տնտեսության մասնավոր հատվածում մարդկանց թրաֆիքինգ գոյություն չունի, և նույնիսկ եթե այն առկա է, ապա նման դեպքերն այնքան սահմանափակ են, որ դրանք ի հայտ չեն բերվում սահմանափակ թվով դիտարկումների միջոցով»: Այնուամենայնիվ, նշված զեկույցում հաստատվում է հարկադիր աշխատանքի և աշխատանքային շահագործման նպատակով թրաֆիքինգի ենթարկվելու առումով մեծ և ֆինանսապես անկայուն ընտանիքների զգալի խոցելիությունը (Arm 30՝ էջ 22): ԵԱՀԿ-ի ուսումնասիրությունը եզրակացնում է, որ երեխաների իրավունքների խախտումները, մանկական աշխատանքի վատթարագույն ձևերը, իսկ որոշ դեպքերում հարկադիր աշխատանքը պահանջում են համապատասխան մարմինների միջամտությունը (Arm 30՝ էջ 41):

2014 թվականին Հայաստանում առաջին անգամ հայտնաբերվեցին սեռական շահագործման նպատակով Հայաստան թրաֆիքինգի ճանապարհով տեղափոխված չինացի կանայք, իսկ 2014 թվականի դեկտեմբերին այս առիթով Քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածով չինացի քաղաքացիների դեմ հարուցվեց քրեական գործ (Arm 27, էջ 1): Բացի այդ, 2006 թվականին Հայաստանում հայտնաբերվեցին թրաֆիքինգի ենթարկված չորս մերկապարուհիներ Ռուսաստանի Դաշնությունից և Ուկրաինայից (Arm 15՝ էջ 12): Թրաֆիքինգի ռուսաստանցի զոհեր Հայաստանում հայտնաբերվել են նաև 2008 և 2009 թվականներին (համապատասխանաբար՝ 13 և 11 անձ), ընդ որում դիտվել է թրաֆիքինգի դեպքերի աճ նաև Հայաստանի ներսում (Arm 20՝ էջ 10): Հարցվածներից երեքը, ովքեր քննարկել են թրաֆիքինգի միտումները, թրաֆիքինգը բնութագրել են որպես նահանջող խնդիր, իսկ մնացած երկուսը համարել են, որ այն ոչ աճում է, ոչ էլ պակասում:

Թրաֆիքինգ իրականացնողների և թրաֆիքինգի զոհերի ընդհանրական նկարագրեր

2007 թվականին անցկացված կարիքների գնահատման շրջանակներում նշվեց, որ հայկական իրավասու մարմիններում տարածված է այն պատկերացումը, որ թրաֆիքինգ իրականացնողները գործում են առանձին, այլ ոչ թե ավելի լայն հանցավոր ցանցի շրջանակներում (Arm 16՝ էջ 8): Նշված պատկերացումը հաստատվել է ներկայիս գնահատման ընթացքում՝ հարցեր հարուցելով այն բանի շուրջ, թե ինչն է ընկալվում որպես «կազմակերպված հանցավոր խումբ», և արդյո՞ք նման ընկալումը համապատասխանում է Անդրազգային հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 2-րդ հոդվածի «ա» կետում ամրագրված իմաստին: Արդյունքների վավերացման աշխատաժողովին հայտնի դարձավ, որ կազմակերպված հանցավոր խումբ համարվելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածում ամրագրված շեմն ավելի ցածր է, քան Անդրազգային հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայում ամրագրված շեմը՝ միաժամանակ հարցեր հարուցելով այն առնչությամբ, թե ինչպես է պատահել, որ թրաֆիքինգը չի ընկալվում որպես կազմակերպված հանցավորությանը բնորոշ հանցատեսակ: Թրաֆիքինգ իրականացնողների և նրանց զոհերի ընդհանրական նկարագրեր ներկայացրեց հարցազրույց տված անձանցից միայն մեկը, ով նշեց, որ թրաֆիքինգ իրականացնողները կարող են լինել թե արական, թե իգական սեռի, սակայն նրանք սովորաբար ազգությամբ հայ են և բնակվում են Հայաստանում, Ռուսաստանի Դաշնությունում, Թուրքիայում և ԱՄԷ-ում: Տվյալ անձը նշեց նաև, որ Հայաստանում թրաֆիքինգը որպես այդպիսին չի կրում կազմակերպված բնույթ:

2.1 Նույնացում և ուղղորդում

2014 թվականի «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Նույնացման և աջակցության մասին օրենք) 2015 թվականի հունիսին ուժի մեջ մտավ՝ ըստ էության փոխարինելով 2008 թվականի Ազգային ուղղորդման մեխանիզմները (ԱՈւՄ-ներ)² և ուղղորդման մեխանիզմին տալով օրենսդրական նորմի կարգավիճակ (Arm 27՝ էջ 34): Նախկին ԱՈւՄ-ներով ամրագրվում է նույնացման երեք փուլ, որոնք պետք է իրականացվեն միմյանց հետ համագործակցող հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ներ), ոստիկանության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ՀՀ ԱԱՀՆ) և դատարանների կողմից: Այս երեք փուլերն էին.

- **Նախանույնացում**, զոհի նախնական հայտնաբերում, որն իրականացվում է պատասխանատու մարմինների կողմից կամ որոշակի հաստատված չափորոշիչների կիրառմամբ,
- **միջանկյալ նույնացում**, որն իրականացվում է հետաքննող մարմնի կողմից, որն էլ որոշում է, թե արդյոք համապատասխան անձը պետք է ճանաչվի թրաֆիքինգի զոհ քրեական օրենսգրքի համաձայն հարուցված քրեական գործերի շրջանակներում,
- **վերջնական նույնացում**, իրականացվում է դատարանի կողմից: Այն դեպքերում, երբ գործը դատարան չէր հասնում, անձին տուժող ճանաչելու մասին որոշումը կայացվում էր քրեական հետապնդումն իրականացնող մարմնի կողմից և հիմք է ծառայում վերջնական նույնացման համար:

2012 թվականին Եվրոպայի խորհրդի մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի հարցերով փորձագիտական խումբը (ԳՐԵՏԱ) հայտնեց, որ նույնացման նշված փուլերը բերում էին նրան, որ նույնացման սկզբնական փուլում զոհերը կարող էին ստանալ շատ ավելի քիչ աջակցություն, քան որպես այդպիսիք նույնացված զոհերը միջանկյալ և վերջնական փուլերում (Arm 20՝ էջ 28): Նույնացման և աջակցության մասին օրենքն ընդունվել էր մասամբ ի պատասխան նշված եզրակացության:

2 ՀՀ կառավարության թիվ N1385-N որոշում, 20 նոյեմբերի 2008թ.

Նույնացման գործընթաց

Նույնացման և աջակցության մասին օրենքում ամրագրվում են ենթադրյալ և նույնացված թրաֆիքինգի զոհերի նույնացման, աջակցության, պաշտպանության և վերաինտեգրման չափանիշային ընթացակարգերը, որոնք պետք է ընդունվեն բոլոր ազգային և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության կողմից (1-ին և 2-րդ հոդվածներ): Օրենքով նախատեսվում է ստեղծել Նույնացման հանձնաժողով, որը պետք է հանդես գա որպես անձին «զոհ», այն է՝ թրաֆիքինգի և (կամ) շահագործման ենթարկված անձ ճանաչելու լիազորությամբ օժտված միակ մարմինը՝ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում զետեղված սահմանման համաձայն, կամ էլ 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ ճանաչել նրան որպես «հատուկ կատեգորիայի զոհ», այն է՝ «մարդկանց թրաֆիքինգի և (կամ) շահագործման ենթարկված անձ, որը հայտնաբերման պահին եղել է երեխա կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձ»: Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ հասարակական կազմակերպությունները և պետական մարմինները հավասարապես ներկայացված են հանձնաժողովի կազմում, որը բաղկացած է հասարակական կազմակերպությունների, գլխավոր դատախազության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև ՀՀ ոստիկանության ներկայացուցիչներից: Հանձնաժողովը համապատասխան կարգավիճակը որոշում է անդամների բաց քվեարկությամբ, մեծամասնական սկզբունքով, իսկ ծայների հավասար բաշխման դեպքում նախապատվությունը տրվում է հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների դիրքորոշմանը, այլապես ծայների հավասար բաշխման դեպքում որոշիչ է հանձնաժողովի նախագահի ծայնը (11-րդ հոդվածի 1-ին մաս):

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախագահությամբ գործող հանձնաժողովը բաղկացած է պետական և ոչ պետական դերակատարներից, որոնք իրավասու են իրականացնել նախանույնացում՝ հնարավորինս շատ տեղեկություններ հավաքելով ենթադրյալ զոհի վերաբերյալ և ինքնուրույն որոշելով, թե ինչպես ստանալ տեղեկություններ (օրինակ՝ հայտնաբերված անձի կամ այլոց հետ հարցազրույցների, քննության, փաստաթղթերի կամ այլ միջոցներով) (12-րդ հոդված): Դիվանագիտական առաքելությունները,

միջազգային, հասարակական և այլ կազմակերպությունները, ինչպես նաև իրավապահ մարմինները կարող են աջակցել, եթե հայտնաբերված անձինք գտնվում են այլ պետության տարածքում (15-րդ հոդված): Տեղեկատվության հաղորդումը տեղի է ունենում հայտնաբերված անձին ընդունելուց 24 ժամվա ընթացքում. իրավասու մարմինը հայտնում է նույնականացման հանձնաժողովի նախագահին (ինչպես նաև ՀՀ արտաքին գործերի նախարարություն և ՀՀ ոստիկանություն, եթե համապատասխան անձը հայտնաբերվել է այլ պետության տարածքում, կամ եթե նա Հայաստանում գտնվող օտարերկրացի է) (16-րդ հոդված): Նախանույնացման փուլից հետո իրավասու մարմինը գրավոր ծանուցում է նույնացման հանձնաժողովի նախագահին, ով նիստ է հրավիրում երկու օրվա ընթացքում: Համապատասխան անձը ներկա է գտնվում նիստին միայն իր նախաձեռնությամբ կամ հանձնաժողովի պահանջով: Նիստի արդյունքում հանձնաժողովը կարող է անձին զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչել՝ շնորհելով նրան հատուկ կարգավիճակ, ինչպես նաև Աջակցության և պաշտպանության մասին օրենքի համաձայն՝ աջակցություն և պաշտպանություն ստանալու իրավունք, կամ (2) անձին զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ չի ճանաչում՝ դրանով իսկ դադարեցնելով պաշտպանությունն ու աջակցությունը կամ (3) երկարացնում է նախանույնացման փուլը: Հանձնաժողովի որոշումը կարող է բողոքարկվել (18-րդ հոդված):

Ձոռերի մասին իրավասու վարչական մարմինների փեղեկանալու եղանակներ

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության պետական միգրացիոն ծառայությունը (ՄՊԾ) անցկացնում է հարցազրույցներ ապաստան հայցողների հետ՝ ՀՀ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի համաձայն: Վերջերս օրենքը լրամշակվել է այնպես, որ ապաստանի դիմած թրաֆիքինգի զոհերը նույնականացվում են որպես հատուկ կարիքներ ունեցող անձինք (8-րդ հոդված), իսկ ՄՊԾ-ն ունի որոշակի ընթացակարգային պարտավորություններ (50-րդ հոդված): Գործնականում ՄՊԾ-ն պարտավոր է քայլեր ձեռնարկել իր պարտավորությունների իրականացումն ապահովելու համար: Թեև ՄՊԾ-ն օժտված է նույնացման լիազորություններով նույնացման և աջակցության մասին օրենքի ներքո, սակայն գործնականում ապաստան հայցողների շրջանում ոչ մի դեպք ի հայտ չի բերվել: Թեև հարցազրույցների ընթացքում հիշատակվել է, որ ՄՊԾ դիմող ապաստան հայցողները կամ փախստականներն այլ առումներով չէին գտնվում խոցելի դիրքում (քանի որ նրանց մեծ մասը կրթված

և որևէ մասնագիտություն ունեցող ազգությամբ հայեր էին), սակայն հետագայում ստացված տեղեկություններից պարզ դարձավ, որ նրանց շրջանում իրականում եղել են խոցելի դիրքում գտնվող անձինք, այդ թվում՝ խոշտանգումների ենթարկված անձինք, հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձինք և ի թիվս այլոց միայնակ ծնողներ, ինչից կարելի է ենթադրել, որ կարող է անհրաժեշտություն առաջանալ հատուկ կարիքներ ունեցող անձանց նույնացման շրջանակներում հստակեցնել և ներդաշնակեցնել խոցելիության սահմանումը: Ակնհայտ է, որ ապաստան հայցողների նախնական գրանցման և նրանց հետ անցկացվող հարցազրույցների շրջանակներում օգտագործվող ձևաթղթերում նախատեսված չեն թրաֆիքինգին վերաբերող որևէ չափանիշային հարցեր: Հարցազրույց տված անձանցից մեկը մտահոգություն հայտնեց այն կապակցությամբ, որ ապաստան հայցողների նախնական գնահատման և թրաֆիքինգի հնարավոր զոհերի նույնացման միջև կա տարանջատում, ինչը լուծում պահանջող բացթողումներից է:

Ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) մաս կազմող սահմանապահները գտնվում են Հայաստանից մեկնող կամ Հայաստան վերադարձող զոհերի հետ շփման առաջնագծում: 2014 թվականի Նույնացման և աջակցության մասին օրենքի ընդունումից առաջ սահմանապահների կողմից նույնացման դեպքերի բացակայությունը մատնանշվում էր որպես Հայաստանի թույլ կողմերից մեկը, ինչը պայմանավորված էր նույնացման հստակ չափորոշիչների, մեթոդաբանական ուղեցույցների և համաձայնեցված չափորոշիչների բացակայությամբ, ինչպես նաև այնպիսի գործիքների և մեթոդների առկայությամբ, որոնք խոչընդոտում էին համագործակցությունը պետական գերատեսչությունների և քաղաքացիական հասարակության միջև: Նույնացման և աջակցության մասին օրենքը ՄՊԾ-ին ընձեռում է ենթադրյալ զոհերի մասին ոստիկանությանը տեղեկություններ ուղարկելու լիազորություններ և իրավունք է ընձեռում թրաֆիքինգի գործերով նախաձեռնողական հետաքննության շրջանակներում գործի դնել հետաքննչական օպերատիվ հնարքներ: Այդուհանդերձ, հարցազրույցի ընթացքում ԱԱԾ-ն ներկայացնող հարցվածները նշեցին, որ եթե անձը չի ներկայանում որպես թրաֆիքինգի զոհ, ապա սահմանային անցակետերի աշխատակիցներն ի վիճակի չեն իրենց առօրյա աշխատանքում նույնացնել զոհերին և կարող են միջամտել միայն այն դեպքերում, երբ կասկած կա, որ մեկնող անձը թրաֆիքինգի զոհ է: Բացի այդ, հարցվածները նշել են, որ երկիր մուտք գործողները սովորաբար չեն ներկայանում որպես զոհեր: 2015 թվականին ի հայտ բերված թրաֆիքինգի բոլոր հնարավոր և սակավաթիվ դեպքերը

վերաբերում էին հայերին, ովքեր վտարվել են այն երկրներից, որտեղ ենթարկվել էին շահագործման:

Լուրջ մտահոգություն է արտահայտվել աշխատանքի տեսչության նույնացման կարողությունների նվազեցման կապակցությամբ (n=4): 2013 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի տեսչությունը միացվեց ՀՀ առողջապահության նախարարության Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության հետ:³ 2015 թվականի հունվարին ՀՀ կառավարությունը լրամշակեց աշխատանքային օրենսգիրքը՝ կասեցնելով աշխատանքի պայմանների ստուգումներ իրականացնելու Առողջապահական պետական տեսչության լիազորությունները և սահմանափակելով դրանք միայն աշխատանքի պայմանների անվտանգության կամ առողջապահական խախտումների հետ կապված բողոքների հիման վրա իրականացվող ստուգումներով: ԱՄՆ պետդեպարտամենտի մարդկանց թրաֆիքինգի մասին զեկույցում շեշտը դրվում է նույնացման և ուղղորդման գործում աշխատանքի տեսուչների դերակատարման ամրապնդման վրա, ինչը պետք է իրականացվի անակնկալ այցելությունների, ինչպես նաև հարկադիր աշխատանքի հանգեցնող գործելակերպի (օրինակ՝ պայմանագրերի դրույթների կատարումն ապահովելու համար անձը հաստատող փաստաթղթերի ի պահուստ վերցնելը) վերաբերյալ իրազեկվածության բարձրացման միջոցով: ԳՐԵՏԱ-ն նաև նշում է, որ աշխատանքային շահագործման հետ կապված խնդիրները սրվում են առհասարակ աշխատանքի վատ պայմանների նկատմամբ բարձր հանդուրժողականությամբ, ինչը բերում է նրան, որ աշխատանքային վեճերի մեծ մասը դուրս է մնում արդարադատության համակարգից (Arm 20՝ էջ 28), ինչպես նաև այն հանգամանքով, որ ՀՀ օրենսդրությամբ հարկադիր աշխատանքը քրեականացված է, սակայն ոչ սահմանված:⁴

Որոշ աղբյուրներում նշվել է արտասահմանում թրաֆիքինգի զոհերին նույնացման գործում Հայ Առաքելական Եկեղեցու, ինչպես նաև հայ սփյուռքի մշակութային կենտրոնների և կազմակերպությունների դերակատարումը (Arm 12՝ էջ 84): Այնուամենայնիվ, հարցվածներից ոչ ոք չմատնանշեց ՀՀ սփյուռքի նախարարության կամ Հայ Առաքելական Եկեղեցու դրական դերակատարումը թրաֆիքինգի հնարավոր զոհերի նույնացման գործում, ընդ որում հարցվածներից մեկը վերջինիս դերակատարումը չէր կանխատեսում, սակայն պատկերացնում էր, որ Հայաստանի կյանքում եկեղեցու կարևոր դերակատարումը կարող է գործի դրվել իրազեկվածության բարձրացման համար:


3 Որոշում թիվ 857-Ն, 25 հուլիսի 2013թ.

4 Տես Բաժին 2.5 «Էտաքննություն և հետապնդում»:

Ինքնանույնացում

Ինքնանույնացմանն ապավինելու մասին հարցն ի հայտ եկավ հարցազրույցների անցկացման ընթացքում. հարցազրույց տված անձանց ավելի քան մեկ քառորդը (=5) նշեց, որ հնարավոր զոհերի նույնացման ուղղությամբ քայլեր կարող են ձեռնարկվել, միայն եթե զոհն ինքը որպես այդպիսին ներկայանա համապատասխան մարմիններ: Այդուհանդերձ, առկա տեղեկություններով ինքնանույնացման դեպքերը Հայաստանում սակավաթիվ են: Համապատասխան գրականության մեջ և հարցազրույցների ընթացքում արժարժված հիմնախնդիրներից մեկն այն էր, որ շահագործման ենթարկված տղամարդիկ հազվադեպ են դիմում ինքնանույնացման, ինչը պայմանավորված է իրենց բաժին հասած փորձությունների վերաբերյալ ունեցած անոթի զգացումով: Հաճախ նույնիսկ իրենց ընտանիքների անդամներն անտեղյակ են նրանց զոհ դառնալու հանգամանքների մասին:

4.3.1.5. Ցուցիչներ, նախնական բացահայտման ստուգման ցանկեր կամ նույնացման այլ գործիքներ




Պարզ չէ, թե արդյոք թրաֆիքինգի զոհերն ունեն ինքնանույնացման միջոցների վերաբերյալ տեղեկություններ ստանալու պատշաճ հնարավորություններ, թե ոչ: «Միավորված մեթոդիստների օգնության կոմիտե» (ԱՄԲՈՐ) և «Հույս և օգնություն» հասարակական կազմակերպություններում գործում են թեժ գծեր, որոնք օգտագործվում են ոչ միայն որպես միգրացիայի և թրաֆիքինգի, այլև որպես թրաֆիքինգի ենթարկված և այլ անձանց առաջարկվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրներ: Ըստ ունեցած տեղեկությունների՝ այս թեժ գծերին հազվադեպ են զանգեր ստացվում, ընդ որում ստացված զանգերի ընդհանուր թվից միայն մի քանիսն են վերաբերում թրաֆիքինգի հետ կապված հարցերին: Նման իրավիճակի ենթադրյալ պատճառներից է այն հանգամանքը, որ Հայաստանում գործում է տարբեր հարցերին (օրինակ՝ ընտանեկան

բռնությանը) վերաբերող մի քանի թեժ գիծ, ուստի որոշ հարցումները հասցեագրվում են այլընտրանքային թեժ գծերին:

Նույնացման չափորոշիչներ և ցուցիչներ

Հարցվածների կեսը (n=3) համապատասխան ցուցիչները, նախնական բացահայտման ստուգման ցանկերը և նույնանման այլ գործիքները համարել են «պատշաճ», իսկ հարցվածներից երկուը դրանք գնահատել են որպես «լիովին պատշաճ»: Այդուհանդերձ, հարցազրույցների շրջանակներում ցուցիչներին և նախնական բացահայտման ստուգման ցանկերին վերաբերող հարցերին պատասխանած բոլոր հինգ հարցվածներն էլ նշել են, որ նման գործիքները չեն օգտագործվում զոհերի նույնացման համար՝ բացառությամբ ԱՄԾ-ի կողմից, որն ըստ ունեցած տեղեկությունների ՄՄԿ-ի կողմից պատրաստված բրոշյուրները և նյութերը, այդ թվում՝ կանանց և աղջիկների նույնացման համար օգտագործվող ստուգման ցանկը տարածել է բոլոր սահմանային անցակետերում: Նշվել է նաև արական սեռի թրաֆիքինգի զոհերի նույնացման չափորոշիչների բացակայությունը:

Նույնացված և ուղղորդված զոհեր



Ըստ ունեցած տեղեկությունների՝2014 թվականին ստեղծվել է պետական և ոչ պետական դերակատարներից բաղկացած միջգերատեսչական աշխատանքային խումբ, որը կոչված է հիմնականում զբաղվել սահմանային անցակետերում միջգերատեսչական համագործակցության, ինչպես նաև ապաստան հայցողների և պաշտպանության հատուկ կարիքներ ունեցող այլ անձանց նույնացման և ուղղորդման հարցերով՝ մշակելով համապատասխան հրահանգների նախագծեր, նույնացման ու ուղղորդման գործնական միջոցներ, ինչպես նաև առաջարկություններ ներկայացնելով համապատասխան

մարմիններին նման փաստաթղթերի ընդունման վերաբերյալ (Arm 27' էջ 34): Ըստ ունեցած տեղեկությունների՝ Մարդականց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով աշխատանքային խումբը սկսել է իր աշխատանքը սահմանային անցակետերից ապաստան հայցողների ուղղորդման չափանիշային աշխատանքային ընթացակարգերի մշակման ուղղությամբ՝ նպատակ ունենալով նպաստել 2016 թվականի հունվարին ուժի մեջ մտած «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում կատարված լրամշակումների կենսագործմանը:

Հարցվածները նույնացման և ուղղորդման մեխանիզմները բնութագրել են կամ որպես «լիովին պատշաճ» (n=3), կամ որպես «պատշաճ» (n=3): Հինգ հարցվածներից չորսը համարել են, որ զոհերը «միշտ» նույնացվում են և ուղղորդվում աջակցության ծառայություններ, իսկ վեց հարցվածներից երկուսը՝ նշել են, որ այդպես է պատահում «հաճախ»: Այնուամենայնիվ, զոհերի առանձին կատեգորիաներին վերաբերող հարցերին տրված պատասխանների մեջ դիտվեցին որոշակի տարբերություններ: Հարցվածներից մեկը նշեց, որ տղամարդիկ հազվադեպ են նույնացվում, իսկ օտարերկրացիները երբեք չեն նույնացվում՝ բացատրելով այս իրողությունը նրանով, որ տղամարդիկ հաճախ հրաժարվում են ընդունել, որ զոհ են դարձել, իսկ օտարերկրացիներն անմիջապես տեղափոխվում են իրենց ծագման երկրներ: Գործնականում համարվում է, որ թրաֆիքինգի դեպքերի իրական թիվը շատ ավելի մեծ, քան նույնացված դեպքերի թիվը (Arm 20' էջ 10): Հարցազրույցի շրջանակներում հարցվածների գրեթե կեսը նշել է, որ Հայաստանում թրաֆիքինգի հակազդման հիմնական խոչընդոտն ու մարտահրավերը նույնացումն է՝ մտահոգություն հայտնելով այն կապակցությամբ, որ զոհերը հաճախ չեն նույնացվում աշխատանքի տեսչության կրճատված լիազորությունների և զոհերի մոտ ինքնանույնացման պատրաստակամության բացակայության պատճառով, ինչպես նաև այն հանգամանքի բերումով, որ շահագործման մեծ մասը տեղի է ունենում այլ երկրներում:

Որպես մտահոգիչ իրողություն արժարժվել է երեխաների նույնացման հարցը: Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի վերաբերյալ ԱՄՆ վերջին զեկույցում նշվում է, որ ոստիկանության կողմից սոցիալական ծառայություններ մատուցողների մոտ ոչ բոլոր երեխաների ուղղորդման դեպքերի պատճառով հարկադրված մուրացկանության և շահույթ ստանալու նպատակով սեռական շահագործման վերաբերյալ վիճակագրական տվյալներում տվյալ հիմնախնդիրը կարող է ըստ հարկի չարտացոլվել (Arm 19' էջ 4): Հայաստանում անչափահաս օտարերկրացի կամ անչափահաս քաղաքացիություն չունեցող զոհերի հետ կապված դեպքեր չեն արձանագրվել (Arm 27' էջ 15): 2013-2015

թվականների ընթացքում թրաֆիքինգի դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրում մեծ ուշադրություն է դարձվում երեխաների թրաֆիքինգի դեպքերի նույնացման ամրապնդմանը՝ երեխաների հետ աշխատող անձնակազմի իրազեկվածության բարձրացման, ինչպես նաև թրաֆիքինգի հնարավոր մանկահասակ զոհերի նույնացման թեմայով համապատասխան աշխատակիցների վերապատրաստման միջոցով (Arm 17):

Նույնացման և ուղղորդման ցուցիչներ


		ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ցուցիչներ		ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ցուցիչներ	
		1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ
1.1	Մարդկանց թրաֆիքինգի ազգային ուղղորդման մեխանիզմ (ԱՌՄ), որով սահմանվում են դերակատարներն ու պատասխանատուները	Առկա են մարդկանց թրաֆիքինգին հատուկ վերաբերող ազգային ուղղորդման մեխանիզմներ	ԱՌՄ-ը սահմանում է շահառուների իրավասությունները, համակարգումը, պաշտպանությունը և աջակցությունը	ԱՌՄ-ում ընդգրկված են պետական և ոչ պետական դերակատարներ, որոնք գիտեն իրենց գործառնությունը	Պետական և ոչ պետական դերակատարներն ԱՌՄ-ի շրջանակներում ուղղորդում և աջակցում են զոհերին
1.2	Նույնացման պաշտոնական գործընթացներ	Առկա են զոհերի նույնացման պաշտոնական գործընթացներ	Ջոհերի նույնացման պաշտոնական գործընթացները շաղկապված են ուղղորդման մեխանիզմների հետ	Նույնացման պաշտոնական գործընթացներն օգտագործվում են հետևողականորեն	Շահառուները նկատում են, որ նույնացման գործընթացները բարձրացում են ծառայությունների հասանելիությունը
1.3	Ցուցիչներ, նախնական բացահայտման ստուգման ցանկեր և նույնացման այլ գործիքներ	Առկա են նույնացման գործիքներ, իսկ շահառուները տեղյակ են դրանց մասին և կարող են դրանցից օգտվել	Նույնացման գործիքները վերաբերում են թրաֆիքինգի գործակալ (այն է՝ բոլոր տեսակի) դրսևորումներին	Որոշ շահառուների կողմից օգտագործվում են նույնացման գործիքներ (մասամբ արդյունավետ)	Բոլոր շահառուների կողմից օգտագործվում են նույնացման գործիքներ (լիովին արդյունավետ)
1.4	Ինքնանույնացման մեխանիզմներ (օրինակ՝ թեժ գծեր, պաստառներ, հայտարարություններ)	Առկա են ինքնանույնացման մեխանիզմներ	Հանրությունն ըստ հարկի տեղեկացված է ինքնանույնացման մեխանիզմների մասին	Որոշ զոհեր իրենք են կատարում իրենց նույնացումը (մասամբ արդյունավետ)	Շահառուները նկատում են ինքնանույնացման աճ
1.5	Կապ ուղղորդման մեխանիզմների և պաշտպանության ու աջակցության ծառայությունների միջև	Գործող պաշտպանության ու աջակցության ծառայությունները շաղկապված են ուղղորդման մեխանիզմների հետ	Ջոհերի ուղղորդումը պայմանավորված չէ իրավապահ մարմինների հետ՝ նրանց համագործակցությամբ	Ուղղորդման մեխանիզմների արդյունքում որոշ նույնացված զոհերին մատուցվում են ծառայություններ	Ուղղորդման մեխանիզմների արդյունքում բոլոր նույնացված տուժած անձանց մատուցվում են ծառայություններ

Նշում՝ կանաչով նշված են այն ոլորտները, որոնցում հնարավոր է բարելավում:

2.2 Պաշտպանություն և աջակցություն

2013-2015 թվականների ազգային ծրագրում ընդգրկված է դրույթ աջակցությունն ու օգնությունը որպես հիմնական նպատակ ընդգրկելու մասին: Նույնացման և աջակցության մասին օրենքում նշվում է, որ աջակցությունը մատուցվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ վերջինիս տարածաշրջանային ստորաբաժանումների կողմից տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ, իսկ պաշտպանության մատուցումը վերապահված է ՀՀ ոստիկանությանը: 20-րդ հոդվածում ամրագրվում է այն աջակցությունն ու պաշտպանությունը, որը «զոհերը» և «հատուկ կատեգորիաների զոհերը» պետք է ստանան նախանույնացման փուլում (21-րդ հոդված): 24-րդ հոդվածը «հատուկ կատեգորիայի զոհերին» իրավունք է ընձեռում այլ զոհերի հետ մեկտեղ օգտվել աջակցության և պաշտպանության ծառայություններից, ինչպես նաև լրացուցիչ աջակցությունից, այդ թվում՝ մանկահասակ զոհերի պարագայում օգտվել իրավաբանի կողմից իրենց շահերի ներկայացման իրավունքից մինչև չափահասության տարիքի հասնելը:

4.1.5. Ռիսկի գնահատումներ



Հարցման շրջանակներում ընդգրկված հարցվածները բժշկական և հոգեբանական խնամքը համարել են «լիովին պատշաճ» (n=1), «որոշ չափով պատշաճ» (n=4) և «պատշաճ միայն որոշ զոհերի համար» (n=1): Ինչ վերաբերում է գործնականում զոհերին վերապահված աջակցության ծառայություններին, ապա հարցման մեջ ընդգրկվածները, ընդհանուր առմամբ, դրանք համարում են բարձր որակի: Հարցվածներից չորսը «համաձայն» էին, որ թրաֆիքինգի օտարերկրացի և հայ զոհերն օգտվում են ծառայությունների նույն մակարդակից, իսկ հարցվածներից երկուսը «լիովին համաձայն» էին տվյալ պնդմանը: Զոհերին սպառնացող

վտանգների, սպառնալիքների, ինչպես նաև նրանց անվտանգության և պաշտպանության կարիքներ որոշման նպատակով իրականացվող ռիսկերի գնահատումներում ակնհայտ են որոշ բացեր: Հարցվածներից չորսը ռիսկերի գնահատումը համարեցին «որոշ չափով պատշաճ», հարցվածներից մեկը դրանք համարեց «պատշաճ միայն որոշ զոհերի համար», իսկ մեկ հարցված դրանք համարեց «ոչ բավարար»:

Իրավասու մարմինների հետ համագործակցելու ցանկություն չունեցող զոհերին հասանելի անբավարար աջակցության խնդիրը նշվել է նաև անցյալում (Arm 1՝ էջ 174, GRETA Arm 20՝ էջեր 7, 28): Այնուամենայնիվ, 2014 թվականին ընդունված Նույնացման և աջակցության մասին օրենքը տարածվում է Հայաստանի քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանում կամ այլուր հայտնաբերման պահին փախստականի կարգավիճակ ունեցող անձանց վրա (5-րդ հոդված): Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասում լրացուցիչ պարզաբանվում է, որ


«Զոհերի և հատուկ կատեգորիայի զոհերի պաշտպանության և աջակցության ձևերը, տեսակները, տևողությունը, չափերը որևէ կերպ չեն կարող փոխկապակցված կամ պայմանավորված լինել իրավապահ մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող գործողություններին նրանց մասնակցության հանգամանքով: Աջակցության և պաշտպանության տրամադրումը չի կարող հետապնդել տրամադրված ծառայությունների դիմաց այլ ծառայություններ կամ որևէ փոխհատուցում ստանալու ակնկալիք»:

Այն հանգամանքի միանշանակ հաստատումը, որ համագործակցությունը կամ համագործակցության բացակայությունն առանձնացված են զոհերին մատուցվող ծառայություններից, տվյալ օրենքի ուժեղ կողմերից է: Հարցման մեջ ընդգրկվածները հավասարապես բաժանված էին ըստ «համաձայն» (n=2), «լիովին համաձայն» (n=2) կամ «չունեմ հստակ կարծիք» (n=2) պատասխանների այն հարցին, թե արդյոք իրավասու մարմինների հետ համագործակցող և չհամագործակցող զոհերն օգտվում են ծառայությունների նույն մակարդակից:

Ապաստարաններ

Հարցման մեջ ընդգրկվածներից բոլորը (n=6) թրաֆիքինգի զոհերին հասանելի ապաստարանների ծառայությունները համարել են կամ «լիովին պատշաճ» կամ «որոշ չափով պատշաճ»: Հարցվածներից երկուսը տվել են «լիովին համաձայն», իսկ երեքը «համաձայն» պատասխան այն հարցին, թե արդյոք արական և իգական սեռի զոհերն օգտվում են ծառայությունների նույն մակարդակից, ընդ որում հարցվածներից մեկը տվեց «համաձայն չեմ» պատասխանը՝ մատնանշելով արական սեռի զոհերի համար ապաստարանի բացակայությունը: Այս բացթողումը հստակ արտացոլված է նաև համապատասխան գրականությունում (Arm 1՝ էջ 174, Arm 27՝ էջ 40, Arm 20՝ էջ 31): Հարցազրույցներին մասնակցած անձինք հաստատեցին, որ ապաստարանները չունեն թրաֆիքինգի արական սեռի զոհերին տեղակայելու հնարավորություն (բացառությամբ արական սեռի անչափահաս խնամարկյալների, ովքեր կարող են տեղավորվել իրենց մայրերի հետ): Երևանում գործում է թրաֆիքինգի իգական սեռի զոհերին աջակցության ծառայություններ մատուցող երկու ապաստարան, որոնցից մեկը «Հավատ և օգնություն» ՀԿ-ի կարճաժամկետ ապաստարանն է, իսկ մյուսը՝ «ԱՄՔՈՐ»-ի երկարաժամկետ ապաստարանը: Եթե ապաստարան է հարկավոր արական սեռի զոհերի համար, ապա այլընտրանքային կացարան է տրամադրվում վարձակալված բնակարաններում: Հարցազրույցներին մասնակցած անձինք նշել են, որ երբևէ չի արձանագրվել այնպիսի իրավիճակ, երբ տղամարդիկ ունեցել են ապաստարանի կարիք և չեն ստացել այն:

Հ.4.2.1. Արական և իգական սեռի զոհերը օգտվում են ծառայությունների նույն մակարդակից



«Հույս և գնություն» ՀԿ-ի կողմից («Ժողովրդավարությունն այսօր» ՀԿ-ի հետ համատեղ) գործարկվող իգական սեռի զոհերի համար նախատեսված կարճաժամկետ ապաստարանում 2003 թվականից ի վեր տեղակայվել է 120 անձ: Ապաստարանը մատուցում է իրավաբանական, հոգեբանական և բժշկական աջակցություն, ինչպես նաև մասնագիտական ուսուցում: 2015 թվականին այստեղ տեղակայվել է երկու հոգի, սակայն տվյալ գնահատման իրականացման պահին այն թափուր էր: «ԱՄՔՈՐ»-ի կողմից (նույնպես «Ժողովրդավարությունն այսօր» ՀԿ-ի հետ համատեղ) գործարկվող երկարաժամկետ ապաստարանը մատուցում է երկարաժամկետ վերաինտեգրման աջակցության ծառայություններ և կարող է շարունակել աշխատել այն անձանց հետ, ովքեր թրաֆիքինգի զոհերից վերադասակարգվում են որպես օգնության կարիք ունեցող անձինք: Ապաստարանը մատուցում է հոգեբանական և նյութական աջակցություն, բժշկական խնամք (ինչպես շտապ, այնպես էլ այլ տեսակի բուժօգնություն), գրավոր և բանավոր թարգմանության ծառայություններ, կրթության հասանելիություն երեխաների համար, ինչպես նաև իրավական աջակցություն քրեական ընթացակարգերի ժամանակ (Arm 1' էջ 173, Arm 15' էջ 22): Չնայած նրան, որ ներկա պահին ապաստարաններում գտնվող զոհերի փոքր թիվը կարելի է բացատրել առհասարակ Հայաստանում նույնացված թրաֆիքինգի զոհերի փոքր թվով, սակայն համապատասխան գրականության մեջ նշվում է, որ սեռական շահագործման զոհերից շատերը նախընտրում են չդիմել աջակցության և անանուն կերպով վերադառնալ իրենց տներ՝ խարանավորումից զերծ մնալու համար այնպիսի իրավիճակում, երբ վաստակելու համար սեռական բնույթի ծառայությունների մատուցումն արժանանում է խիստ պարսավանքի (Gen 2' էջ 43): «ԱՄՔՈՐ»-ն աշխատում է նաև ապաստարանային համակարգից դուրս գտնվող կամ ապաստարանները լքած անձանց հետ:

Համապատասխան գրականությունում մատնանշվում է մանկահասակ զոհերին մատուցվելիք մասնագիտացված ծառայությունների բացակայությունը, քանի որ երեխաների փոքր թվի պատճառով նրանց համար առանձին ապաստարաններ չեն գործում: Անչափահաս զոհերը տեղավորվում են մեծահասակների համար նախատեսված ապաստարաններում կամ ուղղորդվում են համապատասխան ծառայություններ՝ կախված իրենց տարիքից: Անչափահասները կարող են վերադարձվել իրենց ընտանիքներ կամ ուղղորդվել երեխաների աջակցության կենտրոններ (Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն, Հայ օգնության ֆոնդի կենտրոն) կամ երեխաների խնամքի այլ հաստատություններ (Arm 27' էջ 8-9, Arm 1'

Էջ 174, Gen 1, Arm 20' Էջ 31): Նույնացման և աջակցության մասին օրենքի համաձայն երեխաները դասվում են հատուկ կատեգորիայի զոհերի շարքը: Նույնացման և աջակցության մասին օրենքը չի մասնավորեցնում առանց ուղեկցության երեխաներին մատուցվելիք աջակցության և պաշտպանության ծառայությունները, սակայն նշում է, որ նրանք «ապահովվում են ընտանեկանին առավել մոտ սոցիալ-կենցաղային պայմաններով» և «հիմնական կրթությամբ» (22-րդ հոդվածի 10-րդ և 12-րդ մասեր): Հարցազրույցների անցկացման ընթացքում նշվեց, որ Աշխատանքային խումբն անդրադառնում է թրաֆիքինգի մանկահասակ զոհերի նույնացման և ուղղորդման հատուկ մեխանիզմների բացակայության խնդրին և մշակում է նման մեխանիզմներ:


Վերականգնում, վերաինտեգրում և վերադարձ

Համապատասխան գրականության մեջ նշվում է, որ «Հույս և օգնություն», «ԱՄՔՈՐ» և «Ժողովրդավարությունն այսօր» հասարակական կազմակերպությունները ֆինանսավորման պակասի պատճառով ունեն որոշակի խնդիրներ ապաստարանները լքող, աշխատանքի և ապահով կացարանի հարցում դժվարությունների բախվող զոհերին աջակցելու առումով: Նշվել է, որ զոհերի համար միկրովարկերի հասանելիությունը, հավանաբար, կարող է օգտակար լինել, սակայն դիտվում է նման վարկերի ֆինանսավորման պակաս (Arm 15' Էջ 24): Զոհի համաձայնությամբ «ԱՄՔՈՐ»-ը կապ է պահպանում ապաստարանները լքած անձանց հետ, ընդ որում հոգեբանը և սոցիալական աշխատողը պարբերաբար կապվում են նրանց հետ հեռախոսով, իսկ անհրաժեշտության դեպքում նաև այցելում նրանց: Հիմնական մտահոգիչ հարցերը կապված են ուսուցման, աշխատանքի և կացարանի ապահովման հետ (Arm 27' Էջ 41): Այս վերջին հարցի առնչությամբ հարցազրույց տված անձանցից մեկը նշեց, որ թրաֆիքինգի զոհերը հանդես են գալիս որպես առաջնահերթ խումբ սոցիալական բնակարանների ստացման համար, սակայն վստահ չէր, թե ինչպես է նման մոտեցումը կիրառվելու գործնականում: Այդուհանդերձ, հարցվածներից մեկն էլ նշեց, որ թրաֆիքինգի զոհերն ընդգրկված չեն որպես առաջնահերթ խումբ սոցիալական բնակարանների ստացման համար:

Հարցման մեջ ընդգրկված վեց հոգուց հինգը կրթական, աշխատանքի որոնման և մասնագիտական ուսուցման ծառայությունները գնահատեցին որպես «որոշ չափով պատշաճ», իսկ նրանցից մեկը դրանք համարեց «պատշաճ ոմանց համար»: Նպատակակետ երկրներում աջակցությունը զոհերի ինտեգրմանը հարցվածներից երեքի կողմից գնահատվեց որպես «պատշաճ

ումանց համար», իսկ նրանցից մեկն այն համարեց «որոշ չափով պատշաճ»: Ներկայացվեցին տարբեր տեսանկյուններ այն հարցի վերաբերյալ, թե արդյոք զոհերին ծագման երկրներ վերադարձնելու հարցում մատուցվող աջակցությունը բավարար է, թե ոչ: Հարցվածներից երկուսն աջակցությունը տվյալ հարցում համարեցին «լիովին պատշաճ», իսկ երկուսն էլ այն գնահատեցին են որպես «որոշ չափով պատշաճ», սակայն հարցվածներից մեկը գտավ, որ աջակցությունը «պատշաճ է միայն որոշ զոհերի համար», իսկ մեկն էլ այն գնահատեց որպես «անբավարար»: Ծագման երկրներ վերադարձի և այնտեղ ինտեգրման հարցում աջակցության անբավարարությունը բացատրելիս ստացվեցին պատասխաններ, որոնք անդրադառնում են Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների բացակայությանը, ծագման երկրների հետ ավելի լավ համագործակցության անհրաժեշտությանը, ինչպես նաև զոհերի վերադարձի և վերաինտեգրման համար ֆինանսավորման անհրաժեշտության հարցերին: Հարցվածներից մեկը թրաֆիքինգի հակազդման միջոցառումների առումով որպես հիմնական մարտահրավեր մեջբերեց վերականգնման խնդիրը՝ նշելով, որ հաճախ զոհերը պարզապես վերադարձվում են այն համայնքներ, որտեղ դեռևս առկա են նրանց ի սկզբանե թրաֆիքինգի նկատմամբ խոցելի դարձրած նպաստավոր գործոնները, իսկ մարդկանց հետ աշխատող սոցիալական աշխատողների պակասն էլ ավելի է սրում վերականգնման հարցում առկա մարտահրավերները: Ըստ ունեցած տեղեկությունների՝սույն գնահատման անցկացման պահին շրջանառության մեջ էր գտնվում Հայաստան թրաֆիքինգի զոհերի վերադարձին վերաբերող ենթաօրենսդրական ակտ:


Հ.4.1.9. Ծագման երկրներ վերադարձի աջակցություն



Թրաֆիքինգի դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրում (նպատակ 4, ռազմավարություն 4) առանձին ամրագրված

Է վերադարձող թրաֆիքինգի ենթարկված քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված նոր նախաձեռնությունները, սակայն դրանցում խոսք չի գնում Հայաստանում թրաֆիքինգի օտարերկրյա այն զոհերի ինտեգրման մասին, ովքեր չեն կարող վերադառնալ իրենց ծագման երկրներ: Հարցազրույցների ընթացքում վերաինտեգրման հարցն արժարժվել է վեցից երկու հարցազրույցների շրջանակներում՝ պաշտպանության և աջակցության ծառայությունների անչլությամբ: Նշված անձանցից երկուսն էլ հիշատակեցին գործնականում հասարակական կազմակերպությունների կողմից մատուցվող վերաինտեգրման ծառայությունները՝ նշելով թրաֆիքինգի զոհերին վերաինտեգրման ծառայությունների մատուցման գործում պետության ավելի մեծ ներգրավման անհրաժեշտությունը:

4.1.10. Ծագման երկրներում վերաինտեգրվելու աջակցություն



22-րդ հոդվածի 15-րդ մասով ամրագրված է թրաֆիքինգի զոհերի ապահով վերադարձը Հայաստան կամ Հայաստանից իրենց ծագման երկրներ՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության համակարգմամբ: Ապահով վերադարձի կազմակերպման ընթացակարգը պետք է սահմանվի ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ: Գործնականում ՄՄԿ-ն աջակցություն է մատուցում Կամավոր աջակցված վերադարձի ընթացակարգերի միջոցով (Arm 20՝ էջ 33): Նույնացման և աջակցության մասին օրենքի 22-րդ հոդվածի 17-րդ մասով օտարերկրյա զոհը կարող է ստանալ ժամանակավոր կացության թույլտվություն և (կամ) աշխատանքի թույլտվություն:

Իրավաբանական օգնություն և փոխհատուցում

Նույնացման և աջակցության մասին օրենքի համաձայն պետությունը՝ հանձինս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի

Նախարարության, պետք է զոհերին մատուցի իրավաբանական աջակցություն, որն օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ մասում սահմանվում է որպես «իրավաբանական խորհրդատվություն, ինչպես նաև անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով փաստաբանական օգնության կազմակերպում»։ Օրենքում բացակայում են նման օգնության մատուցման մանրամասները, ուստի պահանջվում է ենթաօրենսդրական ակտ, որով այս դրույթը կստանա գործնական կիրառում։ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը ենթադրաբար նախատեսում է անվճար իրավաբանական աջակցություն Նույնացման հանձնաժողովի կողմից որպես թրաֆիքինգի զոհեր ճանաչված անձանց համար։ 2015 թվականին ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը լրամշակվեց, և դրանում ամրագրվեց ոչ դրամական վնասների փոխհատուցման մասին դրույթը։ Հարցման մեջ ընդգրկվածներից մեկը զոհերին մատուցվող քաղաքացիական և քրեական աջակցությունը համարեց «լիովին պատշաճ», իսկ մեկն էլ այն գնահատեց որպես «պատշաճ միայն որոշ զոհերի համար»։ Մեծամասնությունը (n=4) այն համարեց «որոշ չափով պատշաճ»։ Հարցազրույցների անցկացման ընթացքում բացատրվեց, որ իրավաբանական աջակցությունն այժմ մատուցվում է հասարակական կազմակերպությունների կողմից, որոնք դիմում են փաստաբաններին և հոգում են վերջիններիս ծախսերը սեփական միջոցներից։ Մտահոգություն արտահայտվեց նաև այն հարցի առնչությամբ, որ որոշ դատավորներ և իրավաբաններ կարող են բացասական վերաբերմունք ցուցաբերել թրաֆիքինգի զոհերի նկատմամբ և ըստ հարկի չընկալել այն խոցելի դրությունը, որում վերջիններս գտնվում են, ինչպես նաև չհասկանալ շահագործական իրավիճակում մնալու իրենց պատճառները։ Համապատասխանաբար, հարցվածները շեշտեցին այն հարցի կարևորությունը, որ իրավաբանական աջակցության նախաձեռնությունների շրջանակներում հարկ է ապահովել նաև իրավաբանական ծառայությունների որակը և նշանակված փաստաբանների արհեստավարժությունը։

Պաշտպանության և աջակցության հարցերին անդրադարձող վեց հարցազրույցներից չորսի ընթացքում որպես առանցքային հարց արծարծվեց փոխհատուցման խնդիրը։ Նույնացման և աջակցության մասին օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով թրաֆիքինգի զոհերի համար նախատեսվում է միանվագ դրամական փոխհատուցում։ 22-րդ հոդվածի 16-րդ կետը նախատեսում է, որ բոլոր զոհերին

«տրվում է միանվագ դրամական փոխհատուցում ստանալու հնարավորություն»։ Դրամական

փոխհատուցման տրամադրումը ուղղված է մարդկանց թրաֆիքինգի և (կամ) շահագործման ենթարկվելու ընթացքում անձի կրած վնասների մասնակի փոխհատուցմանը և որևէ կերպ չի կարող փոխարինել կամ սահմանափակել զոհի՝ օրենքով սահմանված կարգով հանցավորից փոխհատուցում ստանալու իրավունքը»:

Փոխհատուցումը որպես առանցքային նշանակություն ունեցող առաջնահերթ հարց արծարծելիս հարցազրույց տված անձանցից մեկը նշեց, որ փոխհատուցման ներառումն օրենսդրության մեջ դրական քայլ է, սակայն շեշտադրեց կենսագործման մեխանիզմ ստեղծելու անհրաժեշտությունը: 2013–2015թթ. ազգային ծրագիրը նախատեսում է նման մեխանիզմի ստեղծման վերաբերյալ առաջարկությունների մշակում, ինչն ըստ որոշ տեղեկությունների ընդգրկված է Աշխատանքային խմբի օրակարգում: Աշխատանքային խմբի կազմում ստեղծվել է ենթախումբ, որում ընդգրկված են ոստիկանության և ՀԿ-ների ներկայացուցիչներ, և որը կոչված է որոշել փոխհատուցման միանվագ գումարի չափը, ինչպես նաև սահմանել դրա վճարման մեխանիզմը: Սույն գնահատման պատրաստման պահին շրջանառության մեջ գտնվում էր մի ենթաօրենսդրական ակտ, որը մշակվել էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից: Այս համատեքստում հարցազրույց տված անձանցից մեկը նշեց, որ փոխհատուցումը զոհերին պետք է վճարվի սկսած նրանց տրամադրվող պաշտպանության և աջակցության ամենավաղ փուլից (տույնացումից կարճ ժամանակ անց), այլ ոչ թե պաշտպանության և աջակցության գործընթացի վերջում, ինչպես, ըստ երևոյթին, առաջարկվել էր:

Մշտադիտարկում

Նույնացման և աջակցության մասին օրենքի 26-րդ հոդվածով ամրագրված է, որ Նույնացման հանձնաժողովը և իրավասու մարմինները յուրաքանչյուր եռամսյակ Խորհրդին հաշվետվություն են ներկայացնում մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ, իսկ Խորհուրդը ՀՀ Ազգային ժողով ներկայացնում է տարեկան զեկույց: Չորրորդ և ներկայումս գործող Ազգային ծրագրի 5-րդ բաժինը կրում է «Ուսումնասիրությունների կատարում, մշտադիտարկում և գնահատում» անվանումը և դրա համաձայն Թրաֆիքինգի հարցերով խորհրդին կից Աշխատանքային խումբը պատասխանատու է այս ծրագրի միջանկյալ (տարեկան) և ավարտական (երեք տարին մեկ) մշտադիտարկման անցկացման համար: Այս մեխանիզմներն ուղղված

են ազգային ծրագրի կենսագործման մշտադիտարկմանը, սակայն դրանք չեն նախատեսում պաշտպանության և աջակցության որևէ նվազագույն չափանիշներ, որոնցով այդ աջակցությունը կչափագրվի, ինչպես նաև չեն նախատեսում այն հարցի չափագրման միջոցներ, թե որքանով են նշված պաշտպանության և աջակցության շահառուներն իրականում օգտվում իրենց մատուցվող ծառայություններից: Սույն գնահատման անցկացման պահին աշխատանքային խումբը ստանում էր շահառուների առաջարկությունները, որպեսզի պատրաստեր Ազգային ծրագրի իրագործման մասին իր ավարտական զեկույցը, որն էլ օգտագործվելու է հինգերորդ ազգային ծրագրի մշակման համար: Հարցազրույց տված անձանցից մեկը մտահոգություն արտահայտեց այն առնչությամբ, որ մշտադիտարկումն իրականացվում էր միայն այն հարցը հսկելու համար, թե արդյոք նշված միջոցառումներն ունեցել են դրական ազդեցություն, թե ոչ:

Հարցազրույցների անցկացման ընթացքում որպես առանցքային նշանակություն ունեցող հարց շեշտադրվեց միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող մշտադիտարկումը, ընդ որում ազգային ծրագրերի մշակման ընթացքում պետք է օգտագործվեն ԳՐԵՏԱ-ի և Մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ ԱՄՆ պետդեպարտամենտի զեկույցների եզրակացությունները: Ըստ ունեցած տեղեկությունների՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն իրականացնում է պաշտպանության և աջակցության ծառայությունների որոշակի մշտադիտարկում, ինչպես նաև արտահերթ կարգով այցելում է ապաստարաններ: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը լիազորված է միայն իր տարեկան և արտահերթ զեկույցներում լուսաբանել մարդու իրավունքների չարաշահումներն ու խախտումները, սակայն նա չի անդրադարձել թրաֆիքինգի հակազդման հարցերում եղած որևէ բացթողումներին: Կարճ ասած՝ թրաֆիքինգի զոհերին մատուցվող պաշտպանության և աջակցության ծառայությունների մշտադիտարկումը տեղի է ունենում արտահերթ հիմունքներով և չի առաջնորդվում որևէ շրջանակային չափորոշիչներով կամ նվազագույն չափանիշներով: Ըստ ունեցած տեղեկությունների՝ մշակվել են ապաստարաններում օգտագործվելիք շրջանակային ցուցիչներ, որոնք ներկայումս քննարկվում են շահառուների, այդ թվում՝ Աշխատանքային խմբի կողմից:

Պաշտպանության և աջակցության ցուցիչներ

	ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ցուցիչներ		ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ցուցիչներ	
	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ
2.1 Պաշտպանության և աջակցության ծառայությունների (ապաստարան) ֆինանսավորում	Նախատեսված են հատկացումներ պետական բյուջեից պաշտպանության ու աջակցության ուղղակի ծառայությունների համար	Նախատեսված են հատկացումներ պետական բյուջեից հասարակական կազմակերպությունների կամ քաղաքացիական հասարակության աջակցության ծառայությունների համար	Բյուջեից հատկացումների չափը մասնակիորեն բավարարում է ֆինանսավորման կարիքները	Բյուջեից հատկացումների չափն ամբողջությամբ բավարարում է ֆինանսավորման կարիքները
2.2 Թրաֆիքինգից տուժած անձանց համար հատուկ նախատեսված ժամանակավոր պաշտպանության ու աջակցության ծառայությունների հասանելիություն	Առկա է ապաստարանի պայմաններում (բժշկական, հոգեբանա-սոցիալական, իրավաբանական) ծառայությունների ամբողջական փաթեթ	Ապաստարաններում չտեղակայված զոհերին հասանելի է (բժշկական, հոգեբանա-սոցիալական, իրավաբանական) ծառայությունների ամբողջական փաթեթ	Թրաֆիքինգի զոհերի մեծ մասի համար հասանելի են որոշ ծառայություններ՝ առանձին վերապահումներով	Թրաֆիքինգի զոհերին հասանելի են բոլոր ծառայություններն առանց որևէ վերապահումների
2.3 Վերականգնման, վերաինտեգրման և վերադարձի երկարաժամկետ ծառայություններ	Առկա են վերականգնման և վերաինտեգրման շրջանակներ	Առկա են բնակության և վերադարձի շրջանակներ	Վերականգնման և վերաինտեգրման գործում պատշաճ պետական օժանդակություն	Պետությունը պատշաճ կերպով ներգրավված է ապահով և կամավոր վերադարձի իրականացման գործում
2.4 Պաշտպանության և աջակցության ծառայությունների տարբերակում	Պաշտպանության և աջակցության ծառայությունները տարբերակվում են ըստ հատուկ կարիքների	Անդրադարձ է կատարվում երեխաների (օրինակ՝ լավագույն շահերի որոշում) և քաղաքացի չիանդիսացող անձանց (օրինակ՝ կացության իրավունք) հատուկ կարիքներին	Պաշտպանության և աջակցության ծառայությունները բավարարում են որոշ անձանց առանձին հատուկ կարիքները	Պաշտպանության և աջակցության ծառայությունները բավարարում են բոլոր անձանց բոլոր հատուկ կարիքները
2.5 Պաշտպանության և աջակցության ծառայությունների պատշաճ չափանիշ	Սահմանվում է պաշտպանության ու աջակցության ծառայությունների նվազագույն չափանիշ	Առկա են պաշտպանության ու աջակցության ծառայությունների մշտադիտարկման շրջանակներ	Պաշտպանության և աջակցության ծառայությունները մշտադիտարկվում են ներքին գնահատմամբ	Պաշտպանության և աջակցության ծառայությունները մշտադիտարկվում են արտաքին գնահատմամբ (այդ թվում զոհերի արձագանքի հիման վրա)

Նշում՝ կանաչով նշված են այն ոլորտները, որոնցում հնարավոր է բարելավում:

2.3. Հետաքննություն և հետապնդում

Հայաստանը միացել է բոլոր հիմնական միջազգային փաստաթղթերին, թեպետև այն դեռևս չի անդամակցել Միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիային և չի վավերացրել այն:

Վավերացում կամ անդամակցում	Հայաստան
ՄԱԿՀԿ ՝ Կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա (2003թ.)	2003թ.
Թրաֆիքինգի մասին արձանագրություն ՝ Մարդկանց և հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգը կանխելու, կասեցնելու և պատժելու մասին արձանագրություն (2003թ.)	2003թ.
ՔՔԻՄԴ ՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (1976թ.)	1993թ.
SUՄԻՄԴ ՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (1976թ.)	1993թ.
ՌԻՎԿ ՝ Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա	1993թ.
ԿԻՎԿ ՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (1981թ.)	1993թ.
ԽԴԿ ՝ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա (1987թ.)	1993թ.
ԵԻԿ ՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (1990թ.)	1993թ.
ՀԻԿ ՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա (2008թ.)	2010
ՄԱԸԱԿ ՝ Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների մասին միջազգային կոնվենցիա (2003թ.)	Ստորագրված 2013թ., վավերացված և անդամակցած չէ
ԵՆ Թրաֆիքինգի մասին կոնվենցիա ՝ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Եվրոպայի խորհրդի 2005 թվականի կոնվենցիա [CETS թիվ 197] (2008թ.)	2008թ. (վավերացված է)
C029 ՝ Հարկադիր աշխատանքի մասին 1930 թվականի կոնվենցիա (թիվ 29)	2004թ.
C105 ՝ Հարկադիր աշխատանքի վերացման մասին 1957 թվականի կոնվենցիա (թիվ 105)	2004թ.
C182 ՝ Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի մասին 1999 թվականի կոնվենցիա (թիվ 182)	2004թ.

2014 թվականին «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազորությունների շրջանակներում ստեղծվեց ՀՀ քննչական կոմիտեն, որը կոչված է կազմակերպել և իրականացնել ենթադրյալ հանցագործությունների նախաքննությունը (այդ թվում՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածով, 132-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 168-րդ հոդվածով, 261-րդ և 262 հոդվածով) հետևելով ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածով նախատեսված լիազորություններին: Նշվածը ՀՀ ոստիկանության քննչական վարչության և ՀՀ պաշտպանության նախարարության քննչական վարչության միաձուլման արդյունք էր, որից հետո ստեղծվեց նոր անկախ Քննչական կոմիտեն: Այն գործառույթները, որոնք նախկինում իրականացվում էին Մարդկանց թրաֆիքինգի, թմրամիջոցների ապօրինի շրջանառության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ՀՀ ոստիկանության բաժնի կողմից, այժմ փոխանցվեցին Քննչական կոմիտեի կազմում գործող Առանձնապես ծանր հանցագործությունների գլխավոր վարչությանը: Ոստիկանության աշխատակիցներն արձագանքում են կատարված հանցագործությունների մասին ստացված տեղեկություններին և տաս օրվա ընթացքում իրականացնում են նախաքննություն՝ պարզելու, թե արդյոք տվյալ հանցագործությունը կատարվել է, թե ոչ, և այնուհետև կամ գործը փոխանցում են Քննչական կոմիտեին ամբողջական հետաքննության համար, կամ գործը փակում են ապացույցների բացակայության պատճառով: ՀՀ գլխավոր դատախազությանը վերապահված է ոստիկանության (և ԱԱԾ-ի) վերահսկման գործառույթը: Դեպքերի մեծ մասը դատախազություն են ուղարկվում Քննչական կոմիտեից:

Օրենսդրական դաշտ

Թրաֆիքինգն առաջին անգամ քրեականացվել է 2003 թվականին, երբ ՀՀ Քրեական օրենսգրքում մտցվեց 132-րդ հոդվածը, որը 2006 թվականին ստացավ հետագա լրամշակումներ՝ արտացոլելով ՄԱԿ-ի մարդկանց թրաֆիքինգի մասին արձանագրության մեջ գետեղված սահմանումը, իսկ 2011 թվականին լրամշակվեց նախատեսված պատժամիջոցները խստացնելու նպատակով: 2008 թվականի Ազգային ուղղորդման մեխանիզմների Ընդհանուր դրույթների 1-ին հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում թրաֆիքինգը սահմանվում է որպես.

...շահագործման նպատակով իրականացվող մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, պարտակելը կամ ստանալը ուժի սպառնալիքով կամ

դրա կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու, կամ ուրիշ անձի կողմից վերահսկող անձի համաձայնությունը ստանալու համար վճարումների կամ շահերի ձևով կաշառելու ճանապարհով:

Շահագործումը նվազագույնը ներառում է այլ անձանց մարմնավաճառության շահագործումը կամ սեռական շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ստրկության և համանման սովորույթները, անազատ վիճակը կամ մարմնի մասերի կորզելը: Ավելին՝

- ա. Մարդկանց թրաֆիքինգի զոհի համաձայնությունը այնպիսի պլանավորված շահագործմանը, որի մասին խոսվում է սույն Կանոնակարգի 2(1) ենթակետում, հաշվի չի առնվում, եթե օգտագործվել է 2(1) ենթակետում նշված ներգործության միջոցներից որևէ մեկը,
- բ. Շահագործման նպատակով երեխա հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, պարտակելը կամ ստանալը համարվում է «մարդկանց թրաֆիքինգ» նույնիսկ այն դեպքում, երբ դրանք կապված չեն սույն ենթակետում նշված միջոցներից որևէ մեկի հետ:

2014 թվականի Նոյնացման և աջակցության մասին օրենքում «մարդկանց թրաֆիքինգը կամ շահագործումը» 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում սահմանվում է որպես.

...շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև մարդուն շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խաբեության կամ վստահությունը չարաշահելու, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ նրան վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ ստանալու կամ այդպիսիք խոստանալու միջոցով: Սույն օրենքում որպես մարդկանց թրաֆիքինգ կամ շահագործում է սահմանված նաև շահագործման նպատակով երեխային

կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձին հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև այդպիսի անձանց շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը:

Քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասով մարդկանց թրաֆիքինգը սահմանվում է որպես.

...շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև մարդուն շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խաբեության կամ վստահությունը չարաշահելու, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ նրան վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ ստանալու կամ այդպիսիք խոստանալու միջոցով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:

Շահագործումը սպառիչ կերպով սահմանվում է 132-րդ հոդվածի 4-րդ մասով որպես՝

...շահագործում են համարվում այլ անձի՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, օրգանները կամ հյուսվածքները վերցնելը:

Թեև թրաֆիքինգի սահմանումները բարդ են և տարբերվում են միմյանցից, սակայն հարցման մեջ ընդգրկվածները դրական էին տրամադրված օրենսդրական դաշտի առումով, իսկ նրանց մեծ մասը

«լիովին համաձայն» էր կամ «համաձայն» էր, որ համապատասխան սահմանումը բավարար է և պատշաճ, և ըստ հարկի քրեականացնում է թրաֆիքինգի բոլոր ձևերը:

Հարցեր օրենսդրական դաշտի վերաբերյալ

	Լիովին համաձայն են	Համաձայն են	Չունեն հստակ կարծիք	Համաձայն չեն	Կտրականապես համաձայն չեն
5.1.1. «Մարդկանց թրաֆիքինգ» հասկացության սահմանումը բավարար է և պատշաճ:	n=3	n=2			
5.1.2. Մարդկանց թրաֆիքինգի բոլոր ձևերն արդյունավետ կերպով քրեականացվում են օրենքով:	n=3	n=2			
5.1.3. Թրաֆիքինգի և դրա հետ առնչվող այլ հիմնախնդիրների (օրինակ՝ կանանց դեմ ուղղված բռնություն, միգրացիա և այլն) լուծման համար գործող իրավական դաշտը բավարար է և պատշաճ:	n=1	n=2	n=2		

Նշում՝ Հարցվածների ընդհանուր թիվը՝ n=6
 Հարցման մեջ ընդգրկված և այս հարցերին պատասխանած հարցվածների ընդհանուր թիվը՝ n=6

Այն դրույթը, որ տուժած անձի համաձայնությունը նշանակություն չունի, հետևողական կերպով չի արժարժվում բոլոր սահմանումներում: Հարցվածներից մեկը նշեց, որ հնարավոր է թրաֆիքինգի գործերով հետապնդում իրականացնել, նույնիսկ եթե զոհը տվել է շահագործման ենթարկվելու իր համաձայնությունը, մինչդեռ հարցվածներից մյուսը համարեց, որ թեև համաձայնության նշանակություն չունենալու հանգամանքը պարզ ամրագրված է օրենսդրության մեջ, գործնականում այն դժվար է կիրառել, քանի որ գործերը մեծապես հիմնված են զոհի ցուցմունքի վրա: Համապատասխան գրականությունից կարելի է եզրակացնել, որ զոհի համաձայնության առկայության հանգամանքից ելնելով հետապնդում իրականացնող մարմինները դժկամություն են դրսևորում 132-րդ հոդվածի կիրառման հարցում (Arm 16՝ էջ 17): Տպավորություն է ստեղծվում, որ նախկինում տարածված այն պատկերացումները, որ որպես մարմնավաճառ աշխատելու համար իրենց համաձայնությունը տված կանայք չեն կարող թրաֆիքինգի զոհ համարվել (Arm 15՝ էջ 10, Arm 16՝ էջ 7), փոխվել են երկրի մայրաքաղաքում այս ոլորտում գործող մասնագետների մակարդակով: Հարցազրույցներին մասնակցած անձինք հայտնեցին, որ կենտրոնական վարչության աշխատակիցները քաջ գիտակցում

են այն հանգամանքը, որ զոհերի տրված համաձայնությունը նշանակություն չունի, սակայն այդքան էլ պարզ չէ, թե արդյոք առաջնագծում գործող այն աշխատակիցների մոտ, ովքեր կարող են նույնացնել զոհերին, նույնպես կա բավարար ընկալում:

Ապաքրեականացման հարցում Նույնացման և աջակցության մասին օրենքի 8-րդ հոդվածը «մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց ազատում է այն իրավախախտումների համար քրեականավարչական պատասխանատվությունից, որոնցում ներգրավված է եղել հարկադրաբար՝ իր նկատմամբ իրականացված մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ընթացքում»: Քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ թրաֆիքինգի զոհը «ազատվում է իր կատարած ոչ մեծ կամ միջին ծանրության այն հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունից, որոնցում ներգրավված է եղել իր նկատմամբ իրականացված թրաֆիքինգի կամ շահագործման ընթացքում և այդ արարքները կատարել է հարկադրանքի ներքո»: Ապաքրեականացման մասին դրույթի կիրառման օրինակներից է 2012 թվականին զոհին իր շահագործման վիճակում գտնվելու օրոք իր կողմից գործած խաբեության համար պատասխանատվությունից ազատելու դեպքը, ինչպես նաև 2013 թվականին շահագործման վիճակում թրաֆիքինգի զոհին գողության համար պատասխանատվությունից ազատելու դեպքը (Arm 27՝ էջ 49): 2014 թվականին չեն արձանագրվել նույնացված զոհերի ոչ պատշաճ կալանավորման դեպքեր կամ այն պատճառով, որ նման հանցագործություններ չեն կատարվել, կամ էլ այն պատճառով, որ համապատասխան անձինք ազատվել են քրեական պատասխանատվությունից այն հանցագործությունների համար, որոնք նրանց կողմից կատարվել են հարկադրանքի տակ (Gen 1, Arm 20՝ էջեր 7, 35):

Հետաքննություն, հետապնդում և դատապարտում

2012 թվականին ԳՐԵՏԱ-ն տեղեկացվեց, որ դատարանների կողմից քննության առնված դեպքերի մեծ մասը վերաբերում էր կանանց սեռական շահագործման, երեխաների հարկադրական մուրացկանության, ինչպես նաև կանանց աշխատանքային շահագործման դեպքերին, ընդ որում տղամարդկանց շահագործման դեպքերը հազվադեպ էին քննության առնվում՝ հաշվի առնելով հարկադիր աշխատանքի նպատակով թրաֆիքինգի և աշխատանքային պայմանագրի խախտումների տարբերակման հետ կապված բարդությունները: Այս եզրակացությունը հաստատվեց հարցազրույցների անցկացման ընթացքում, երբ հարցվածներից մեկը նշեց, որ հետաքննության շեշտադրումը միշտ եղել է սեռական

շահագործման վրա, իսկ հիմնականում արտերկրում տեղի ունեցող հարկադիր աշխատանքի դեպքերի հայտնաբերման և հետաքննության մասով դիտվում է փորձի ակնհայտ պակաս:

Վերջին տարիներին արձանագրված դեպքերի թվի մասին ստացվել են տարբեր տեղեկություններ: Հարցվածներից մեկը նշեց, որ 2013 թվականին արձանագրվել է 11 դեպք (10 անձանց դեմ հարուցվել է գործ, ճանաչվել է 19 զոհ՝ 8 կին և 11 անչափահաս): ՀՀ կառավարության զեկույցում նշվում է, որ 2013 թվականին մարդկանց թրաֆիքինգի հատկանիշներով հարուցվել է 17 գործ, որոնցից 4-ը փոխանցվել է նախորդ տարվանից, 2-ը վերաբացվել է նոր հանգամանքների բերումով, իսկ 11 գործ նոր է հարուցվել: 17 գործերից 7-ն ուղարկվել է դատարան, և 6 քրեական գործով դատապարտվել է 15 անձ (Arm 18՝ հավելված 3, էջ 36): ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի կողմից պատրաստած զեկույցում նշվում է, որ 2013 թվականին հետաքննվել է 14 դեպք, հետապնդում է իրականացվել է 10 անձի նկատմամբ, իսկ 15 անձ դատապարտվել է:⁵ ԱՄՆ պետդեպարտամենտի թրաֆիքինգի մասին զեկույցում նշվում է, որ 2013 թվականին հարուցվել է 10 նոր գործ, դատական հետապնդում է իրականացվել 12 պաշտպանյալի դեմ, իսկ 15 անձ դատապարտվել է: 2014 թվականի առնչությամբ հարցվածներից մեկը նշեց, որ այդ տարում արձանագրվել է 10 դեպք (9 անձանց դեմ իրականացվել է հետապնդում, ճանաչվել է 13 զոհ՝ 11 կանայք, 1 անչափահաս և 1 տղամարդ): ԱՄՆ պետդեպարտամենտի թրաֆիքինգի մասին զեկույցում հաստատվում է, որ 2014 թվականին արձանագրվել է թրաֆիքինգի 10 նոր դեպք, ընդ որում նախորդ տարվանից փոխանցվել է ևս 4 գործ, իսկ 2014-ին հետապնդում է իրականացվել 7 պաշտպանյալի նկատմամբ (նախորդ տարիներին փակված 1 գործ կրկին բացվել էր նոր հանգամանքների ի հայտ գալու բերումով), և դատապարտվել է 7 մարդավաճառ (5-ը՝ սեռական շահագործման և 2-ը՝ աշխատանքային շահագործման համար): ԱՄՆ աշխատանքի դեպարտամենտի տվյալներով 2014 թվականին հետաքննվել է հարկադրական մուրացկանության մեկ դեպք, որի կապակցությամբ մեղադրանք է ներկայացվել երկու անձի, ովքեր կանգնել են դատարանի առջև (Arm 19՝ էջ 4):⁶


5 Իրականացված հետապնդումների համեմատ դատապարտվածների ավելի բարձր թիվը պայմանավորված է նրանով, որ որոշ դեպքերում գործերը փոխանցվում են նախորդ տարվանից:

6 ԳՐԵՏԱ-ն նշել է նաև, որ 2008-2014 թվականներին հարուցվել է յոթ գործ երեխաներին աշխատանքային շահագործման ենթարկելու և նրանց մուրացկանության մեջ ներքաշելու կապակցությամբ, ընդ որում երկու գործի պարագայում խոսքը գնում էր ընտանիքի անդամների կողմից աշխատանքային շահագործման մասին (Arm 27՝ էջեր 22-23):

2015 թվականի առնչությամբ հարցվածներից մեկը նշեց, որ այդ տարում արձանագրվել է 8 դեպք (4 անձանց դեմ իրականացվել է հետապնդում, 6անաչվել է 9գոհ՝ 6կին և 3անչափահաս): Այդուհանդերձ, մեկ այլ աղբյուրի համաձայն այդ տարում արձանագրվել է 15 դեպք, մեկ այլ աղբյուրն էլ պնդում էր, որ արձանագրվել է 14 դեպք (10 դեպք կապված սեռական շահագործման և 4 դեպք կապված հարկադիր աշխատանքի հետ): Համապատասխանաբար, գրանցվել է երկու տարբեր կարծիք այն հարցի վերաբերյալ, թե արդյոք դեպքերի քանակը աճում է (ըստ մասնագետներից մեկի՝ աճում է, ինչը պայմանավորված է ինչպես թրաֆիքինգի թվերի աճով, այնպես էլ հետաքննելու կարողությունների բարձրացմամբ), թե նվազում է (ըստ հարցվածներից երկուսի՝ այդ մասին են վկայում վիճակագրական տվյալները): Մասնագետներից մեկն էլ նշեց, որ չի արձանագրվել ո՛չ աճ, ո՛չ էլ նվազում: Թեև մասնագետներից մեկը նշեց, որ այլ երկրների համեմատ՝ հետաքննությունների և հետապնդումների թիվը ցածր է Հայաստանում թրաֆիքինգի դեպքերի ցածր թվի շնորհիվ, մյուսը նշեց, որ այլ երկրների և դրանց ազգաբնակչության համամասնությամբ Հայաստանում արձանագրված թվերն այդքան էլ ցածր չեն:⁷

Վերապատրաստում և կարողությունների ձևավորում

Հ.5.1.6. Իրավապահ մարմինների աշխատակիցների թրաֆիքինգի հարցերով վերապատրաստումը և կարողությունների ձևավորման մեխանիզմները պատշաճ են




Իրավասու մարմինները հայտնել են ԳՐԵՏԱ-ին, որ վերապատրաստումն, այդ թվում՝ ոստիկանության վերապատրաստումը թրաֆիքինգի, շահագործման և անչափահասների հետ աշխատանքի թեմաներով իրականացվում է 2013-2015թթ. ազգային ծրագրի

⁷ Հայաստանի ազգաբնակչությունը կազմում է մոտավորապես 3 միլիոն մարդ:

համաձայն: Ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանումն աջակցություն ստացավ «ԱՄՔՈՐ» և «Հույս և օգնություն» հասարակական կազմակերպություններից, որոնք գործում են մի քանի պետական գերատեսչությունների հետ համատեղ: Անվտանգության ազգային ծառայությունում անցկացվեցին դասընթացներ սահմանապահների համար հարկադիր աշխատանքի, թրաֆիքինգի, անկանոն միգրացիայի և վիճակագրական տվյալների թեմաներով: Բացի այդ, ՄՄԿ-ն անցկացրել է վերապատրաստում զոհերի հայտնաբերման և աջակցության թեմայով (Arm 27՝ էջ 58): ԱՄՆ պետդեպարտամենտի թրաֆիքինգի մասին զեկույցում նշվում է, որ 2014 թվականին ՀՀ ոստիկանության ակադեմիայում ՀՀ կառավարության կողմից վերապատրաստվել է շուրջ 600 ոստիկանության աշխատակից և սպա, իսկ ՀՀ արդարադատության նախարարությունը թրաֆիքինգին վերաբերող թեմաներն ընդգրկել է ուղղիչ հաստատությունների 60 պաշտոնատար անձանց և 720 աշխատակիցների համար մարդու իրավունքներին նվիրված պարտադիր վերապատրաստման շրջանակներում (Gen 1):

Հ.5.1.9. Դատախազների և դատավորների թրաֆիքինգի հարցերով վերապատրաստումը և կարողությունների ձևավորման մեխանիզմները պարզաճ են



Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի եզրակացությունների վերաբերյալ ԱՄՆ աշխատանքի դեպարտամենտի 2015 թվականի զեկույցում նշվում է, որ ՀՀ ոստիկանության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակիցները 2014 թվականին անցել են թրաֆիքինգի հակազդման վերապատրաստում, այդ թվում՝ մանկահասակ զոհերի հետ հարցազրույցների անցկացման թեմայով, իսկ ոստիկանությունը մշակել է մոդուլներ անչափահասների արդարադատության թեմայով և վերապատրաստել է 24 աշխատակից:

Չնայած այս ամենին՝ հանցագործությունների մանկահասակ զոհերի հետ հարցազրույցների անցկացման թեմայով իրավապահ մարմինների համար նախատեսված վերապատրաստումը զեկույցում համարվում է անբավարար (Arm 19՝ էջ 4): Վերապատրաստումների այս հաճախականությունը հաստատվում է հարցազրույցների ընթացքում: Քննչական կոմիտեի ներկայացուցիչները նշեցին, որ Արդարադատության ակադեմիայում ուսուցում ստացած քննիչները պետք է յուրաքանչյուր երկու տարին մեկ վերապատրաստվեն, այդ թվում՝ պետք է 2-ժամանոց դասընթաց անցնեն թրաֆիքինգի թեմայով, և նշեցին, որ 2015 թվականին 40 քննիչ վերապատրաստվեց երեխաների թրաֆիքինգի թեմայով: Ոստիկանության ակադեմիան անցկացնում է կարճ դասընթացներ նվիրված տարբեր թեմաներին, այդ թվում՝ թրաֆիքինգին: Ըստ ունեցած տեղեկությունների՝ «Հույս և օգնություն» ՀԿ-ն վերապատրաստում է ոստիկանության աշխատակիցներին և աշխատում է զոհերի նկատմամբ իրավապահների վերաբերմունքը փոխելու և երեխաների հետ նրանց աշխատանքի կարողություններն ամրապնդելու ուղղությամբ: Բացի այդ, կան տեղեկություններ, որ 2015 թվականին սահմանային անցակետերի 43 աշխատակից վերապատրաստում է անցել թրաֆիքինգի զոհերի նույնացման թեմայով:

Թեև հարցազրույցներ տված և հարցման մեջ ընդգրկվածները, ընդհանուր առմամբ, վերապատրաստումը համարեցին պատշաճ, սակայն ակնհայտ է, որ թրաֆիքինգի գործերով հետաքննությունների շրջանակներում հատուկ հետաքննչական հնարքների կիրառման, ինչպես նաև հարկադիր աշխատանքի և աշխատանքային շահագործման տարբերակման թեմաներով վերապատրաստումը կարող է կատարելագործվել: Հարցվածներից մեկը նշեց, որ 2011 թվականի ԵԱՀԿ-ի թրաֆիքինգի հակազդման քրեական արդարադատության ուսումնական ձեռնարկը (նախատեսված է դատախազների, ոստիկանության աշխատակիցների, դատավորների, սահմանապահների և աշխատանքի տեսուչների համար) կարող է թարմացվել՝ ընդլայնելով իր սեռական շահագործման շեշտադրումը և ընդգրկելով լրացուցիչ նյութեր հարկադիր աշխատանքի և այլ երկրների լավագույն ընթացակարգերի վերաբերյալ: Մարդու իրավունքների պաշտպանը որևէ դեր չի խաղում քրեական արդարադատության մարմինների աշխատակիցների վերապատրաստման գործում, և նախատեսվում է անցկացնել ոստիկանության աշխատակիցների վերապատրաստում արդու իրավունքների վրահիմնված թրաֆիքինգի հակազդման մոտեցումների թեմայով: Հարցվածներից երեքը որպես մտահոգություն առաջացնող հիմնական հարց հիշատակեցին

դատավորների վերապատրաստումը, քանի որ քննիչներն ու դատախազները մասնագիտացված են, իսկ դատավորները՝ ոչ: Այս առումով հիշատակվեցին 2015 թվականին դատավորների համար հասարակական և միջազգային կազմակերպությունների աշխատանքների թեմայով կազմակերպված որոշ դասընթացներ: Կարողությունների ձևավորման մեկ այլ մարտահրավերը կապված էր փորձագիտության ապահովման հետ՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հետ առնչվող պաշտոններում զբաղված աշխատակազմի բարձր շրջանառության լույսի ներքո: Այս հարցը միանշանակ բարձրացվել է երկու հարցազրույցների ընթացքում, և ակնհայտ էր քրեական արդարադատության շրջանակներից դուրս:

Ջոհերի և վկաների պաշտպանություն

Քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածով ամրագրված են զոհերի և վկաների պաշտպանության դրույթները, որոնց համաձայն պաշտպանիչ միջոցառումները պարտադիր են այն դեպքերում, երբ առկա են ֆիզիկական վնասահասցնելու սպառնալիքներ: Նույնացման և աջակցության մասին օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ հնարավոր զոհերի, զոհերի և հատուկ կատեգորիայի զոհերի, ինչպես նաև նրանց օրինական ներկայացուցիչների համար կարող է ապահովվել լրացուցիչ անվտանգություն այն դեպքերում, երբ առկա են որոշակի տեղեկություններ և հանգամանքներ, որոնց դեպքում նման պաշտպանության անհրաժեշտությունը դառնում է ակնհայտ: Դեռևս բացակայում են նման դրույթների իրականացման մեխանիզմները կամ ֆինանսավորումը. հարցազրույց տված անձանցից մեկը՝ նշեց, որ 2016 թվականի ապրիլին կսկսի գործել զոհերի և վկաների պաշտպանության մասին նոր օրենսդրական ակտ, սակայն Վավերացման աշխատաժողովին բացատրվեց, որ խոսքը գնում է ապահով վերադարձի վերաբերյալ կառավարության կայացվելիք որոշման մասին (<< կառավարության որոշում թիվ 21.04.16): Մինչ օրս զոհերի և վկաների պաշտպանության մեխանիզմի բացակայությունը չի վնասել հետաքննության և հետապնդման գործընթացին, ընդ որում ԱՄՆ պետդեպարտամենտի թրաֆիքինգի մասին 2015 թվականի զեկույցում նշվում է, որ վերջին մի քանի տարիներում պետության կողմից պաշտոնապես ճանաչված բոլոր զոհերն աջակցել են ոստիկանության կողմից իրականացվող հետաքննության ընթացքին (Gen 1): Հարցազրույց տված անձանցից երեքը որպես զոհերի հաստատական աջակցության պատճառ նշեցին Քննչական կոմիտեի և հասարակական կազմակերպությունների միջև հաստատված ամուր համագործակցությունը: Նման համագործակցությունը հիմնված

չէ որևէ փոխըմբռնման հուշագրի կամ այլ պայմանավորվածության վրա, այլ կազմակերպվում է արտակարգ հիմունքներով՝ ելնելով հաստատված գործելակերպից: Հետաքննության ընթացքում երեխաների բարօրությունն ապահովելու նպատակով Քննչական կոմիտեն չի համագործակցում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ, թեպետև, ըստ ունեցած տեղեկությունների՝ «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հետ նախագծվում է համագործակցության պայմանագիր, որը կոչված կլինի ապահովել մանկական հոգեբանների ավելի լավ ներգրավումը հետաքննության գործընթացում: 2013-2015թթ. ազգային ծրագիրը նախատեսում է ՀՀ իրավապահ համակարգում ստեղծել առանձին մասնագիտացված բաժին, որը կոչված կլինի ապահովել դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանությունը: Այնուամենայնիվ, ըստ ոստիկանության աշխատակիցների՝ զոհերի պաշտպանությունն առհասարակ անհրաժեշտ չէ, քանի որ հենց իրենք փորձում են չիմանալ, թե որտեղ են ապաստարան գտել զոհերը և կապվում են նրանց հետ միայն հասարակական կազմակերպությունների միջոցով:

Նախաձեռնողական և հատուկ հետաքննչական հնարքներ

Թեև հարցվածներն ընդհանուր առմամբ բարձր գնահատեցին իրավապահ մարմինների կարողությունները, սակայն երկու հարցազրույցների ընթացքում նշվեց, որ աշխատանքային շահագործման հարցում դիտվում է ընկալման պակաս, որը հետաքննության և հետապնդման հիմնական խոչընդոտն է: 2007 թվականի զեկույցում նշվեց, որ զոհերի ցուցմունքի վրա մեծապես հիմնվելու հանգամանքը խոչընդոտ էր թրաֆիքինգի կազմակերպիչների դատապարտման ճանապարհին, քանի որ թրաֆիքինգի դեպքերի հայտնաբերմանն ուղղված նախաձեռնողական հետաքննության դեպքերը խիստ հազվադեպ են (Arm 16՝ էջեր 16, 23-25): 2012 թվականին ԳՐԵՏԱ -ն արձագանքեց այս մտահոգությանը՝ որպես հիմնական առաջարկություն նշելով նախաձեռնողական հետաքննության և հատուկ հետաքննչական հնարքների կիրառման ամրապնդումը, որ կոչված կլինի հետաքննել երեխաների հետ կապված, ինչպես նաև աշխատանքային շահագործման դեպքերը (Arm 20՝ էջ 37): Սույն գնահատման ընթացքում հարցազրույց տված անձանցից երեքը վկաների ցուցմունքը բնութագրեցին որպես արդյունավետ հետապնդման հիմնական արգելք, երկուսը նշեցին, որ ցուցմունքը կարող է փոխվել, իսկ մեկն էլ մատնանշեց փոքր համայնքներում զոհերից ցուցմունք ստանալու հետ կապված

բարդությունները այն դեպքերում, երբ մարդկանցից պահանջվում է ցուցմունք տալ իրենց հարևանների դեմ: Հարցագրույց տվածներից երեքը մատնանշեց նախաձեռնողական հետաքննության հարցում եղած բացթողումները: Ըստ ունեցած տեղեկությունների՝ հատուկ հետաքննչական հնարքները և զուգահեռ ֆինանսական հետաքննությունը գտել են իրենց կիրառումը (առաջինը՝ 2010թ. և 2011թ. գործի շրջանակներում, երբ հետաքննությունը հաջողված ավարտ ունեցավ նախքան շահագործման պահը, քանի որ արձանագրվել էր հավաքագրման դեպք, երկրորդը՝ Հայաստանում ռուս կանանց սեռական շահագործման գործի շրջանակներում), սակայն ընդհանուր կարծիքն այն է, որ դրանք բավարար չեն:

Հեղաքննության և հեղապնդման ցուցիչներ

		ՇՐՋԱՆԱԿԱՑԻՆ ցուցիչներ		ԱՇԽԱՏԱՆ-ՔԱՅԻՆ ցուցիչներ	
		1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ
3.1	Մարդկանց թրաֆիքինգի քրեականացում	Վավերացվել են առանցքային միջազգային փաստաթղթեր (Անդրազգային հանցավորության դեմ ՄՄԿ-ի կոնվենցիա և Անձանց, հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգը կանխարգելելու, զսպելու և պատժելու մասին արձանագրություն, հարկ եղած դեպքում՝ տարածաշրջանային փաստաթղթեր)	Թրաֆիքինգը քրեականացված է (այն է՝ առանցքային տարրերը, հիմնական ձևերը քրեականացվել են) միջազգային սահմանման համաձայն	Թրաֆիքինգին առնչվող օրենսդրական նորմերն օգտագործվում են թրաֆիքինգի դեպքերի հետապնդման համար	Մեղավորները դատապարտվում են գործած հանցանքի ծանրությանը համամասն նշանակված պատժով
3.2	Թրաֆիքինգի զոհերի ազատում քրեական պատասխանատվությունից և (կամ) պատժից	Օրենսդրական նորմերում ամրագրված է զոհերի ազատումը քրեական պատասխանատվությունից թրաֆիքինգի ենթարկվելու ժամանակ գործած արարքների համար	Օրենսդրական նորմերով ամրագրված է այն դրույթը, որ զոհի համաձայնությունը նշանակություն չունի	Կան տվյալներ, որ թրաֆիքինգի զոհերը չեն պատժվում կամ ենթարկվում քրեական պատասխանատվության թրաֆիքինգից բխող արարքների համար	Քրեական արդարադատության հարցերով զբաղվող մասնագետների շրջանում կա իրազեկվածություն այն դրույթի մասին, որ թրաֆիքինգի գործերով դատական կարգով հետապնդման դեպքերում զոհի համաձայնությունը նշանակություն չունի

3.3	Իրավասու մարմինների կողմից իրականացվող հետաքննություն, հետապնդում և դատապարտում	Օրենքի կամ քաղաքականության շրջանակներում նշանակված իրավասու մասնագիտացված դերակատարներ կամ հաստատություններ	Համապատասխան օրենքով կամ քաղաքականությամբ սահմանվում են իրավասու իրավապահ իրամիջնների հստակ դերակատարումները	Մասնագիտացված հաստատություններն օպերատիվ և ռազմավարական առումով իրավասու են իրականացնել հակազդական հետաքննություններ	Մասնագիտացված հաստատություններն օպերատիվ և ռազմավարական առումով իրավասու են իրականացնել նախաձեռնողական հետաքննություններ
3.4	Քրեական արդարադատության մարմինների աշխատակիցների կարողություններ	Իրավաբանական և (կամ) քաղաքական դաշտի մեխանիզմները նախատեսում են դասընթացներ թրաֆիքինգի հակազդման թեմայով	Թրաֆիքինգի հակազդման թեմայով դասընթացները հարմարեցված են ազգային կարիքների և կարողությունների բացերին	Քրեական արդարադատության մարմինների աշխատակիցները մասնակցում են միանգամայ կամ ժամանակ առ ժամանակ անցկացվող դասընթացներին	Քրեական արդարադատության մարմինների աշխատակիցները կամ շարունակական դասընթացներին
3.5	Հատուկ հետաքննչական հնարքներ	Օրենսդրական նորմեր թրաֆիքինգի հակազդման համար հատուկ հետաքննչական հնարքների օգտագործման վերաբերյալ	Օրենսդրական նորմեր կամ քաղաքականության ուղղորդում մարդկանց թրաֆիքինգի գործերում հատուկ հետաքննչական հնարքների օգտագործման վերաբերյալ	Իրավասու մարմինները տեղյակ են և (կամ) ժամանակ առ ժամանակ օգտագործում են հատուկ հետաքննչական հնարքներ	Իրավասու մարմինները պարբերաբար և (կամ) ընդունված կարգով գործածում են հատուկ հետաքննչական հնարքներ

Նշում՝ կանաչով նշված են այն ոլորտները, որոնցում հնարավոր է բարելավում:


2.4. Կանխարգելում

ԱՄՆ պետդեպարտամենտի թրաֆիքինգի մասին 2015 թվականի զեկույցում կանխարգելման ուղղությամբ Հայաստանի գործադրված ջանքերը բնութագրվում են որպես «ակտիվ»՝ նշելով թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայով լրատվամիջոցների մրցույթի համար ֆինանսական միջոցներ հատկացնելու պարտավորությունը, երիտասարդների, աշխատանքային միգրանտների և համայնքային ներկայացուցիչների համար նախատեսված աշխատաժողովներն ու սեմինարները, ազգային և տարածաշրջանային չափանիշներին նվիրված սոցիալական գովազդը, ինչպես նաև թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման դասընթացներն աշխատանքի տեսուչների, իրավապահ մարմինների աշխատակիցների, քաղաքացիական

ծառայողների, սոցիալական աշխատողների, հասարակական կազմակերպությունների, մանկավարժների, լրատվամիջոցների, ուսանողների, ինչպես նաև նախքան նշանակումը դիվանագիտական մարմինների աշխատակիցների և գլխածառայողների համար (Gen 1): ՀՀ մարդկանց թրաֆիքինգի հարցերով խորհրդին կից գործող աշխատանքային խմբի թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ 2013 թվականի զեկույցում ներկայացվում են իրազեկվածության բարձրացման, աշխատաժողովների անցկացման, աղքատության նվազեցման, գործազրկության հաղթահարման, վերաինտեգրման ծրագրերի, հեռուստահաղորդումների և լրագրողական էթիկայի ամրապնդման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները (Arm 18):

Լրատվամիջոցներ և իրազեկվածության բարձրացում

Հ.6.1.3. Թրաֆիքինգի ռիսկերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման կարխարգելման ծարգրերը պատշաճ են և արդյունավետ



2013–2015 թվականների ազգային ծրագիրը որպես առանցքային նպատակ ներառում է հանրության իրազեկվածության բարելավումը և ամրագրում է ութ ռազմավարություն, այդ թվում՝ իրազեկվածության բարձրացում ռիսկային խմբերի շրջանում, տեղեկատվական նյութերի տրամադրում սահմանային անցակետերում, հասարակական կազմակերպություններից ստացված տեղեկատվության տարածում ամբուլատոր բժշկական հաստատություններում, քննարկումների, աշխատաժողովների, երիտասարդների համար նախատեսված դասընթացների և իրազեկվածության բարձրացմանն ուղղված այլ միջոցառումների կազմակերպում, շուկայում երիտասարդների մրցունակության բարելավմանն ուղղված միջոցառումներ և աշխատանքային պրակտիկայի հնարավորություններ, արտերկրում գտնվող հայերին տեղեկատվության տրամադրում դիվանագիտական


առաքելությունների միջոցով, իրազեկվածության բարձրացում բանակում, խաղաղապահ ուժերի և արհմիությունների շրջանում: Ազգային ծրագրում ամրագրված իրազեկվածության բարձրացման այլ նպատակներից են հանրության հետ ուղղակիորեն առնչվող պետական մարմինների աշխատակիցների իրազեկվածության բարձրացումը, ինչպես նաև դպրոցներում անցկացվող դասընթացների միջոցով անչափահասների թրաֆիքինգի կանխարգելումը:

«Առողջապահության նախարարությունն ապահովում է թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ տեղեկատվության տարածումն ամբուլատոր հիվանդների շրջանում, մինչդեռ «Ասպրոտի և երիտասարդության հարցերի նախարարությունը 2014 թվականին իրականացրել է իրազեկվածության բարձրացման ծրագիր Սիսիան քաղաքում, իսկ «Ասպրոտի նախարարությունը 2014 թվականի առաջին կեսին տարածել է համապատասխան նյութեր արտերկրում գտնվող հայերի շրջանում: 2009 և 2010 թվականներին «Ասպրոտի և գիտության նախարարությունը համագործակցել է ՄՄԿ-ի հետ՝ մշակելով ծնողների, ուսուցիչների և ուսանողների համար նախատեսված ձեռնարկներ, որոնք կոչված էին դպրոցական ուսումնական ծրագրում ներառել դասընթացներ թրաֆիքինգի հակազդման թեմայով (Arm 7՝ էջ 3, Arm 27՝ էջեր 13-14): «Ասպրոտի նախարարությունը հաստատել է նշված ձեռնարկների որպես լրացուցիչ կրթական նյութերի օգտագործումը 9-րդ և 12-րդ դասարանների «Հասարակագիտություն» առարկայի ուսումնական ծրագրի շրջանակներում:

«ԱՄՔՈՐ» և «Ժողովրդավարությունն այսօր» հասարակական կազմակերպությունները պատրաստել են հեռուստահաղորդումներ և սոցիալական գովազդի հոլովակներ, ինչպես նաև բրոշյուրներ և անձնագրերի ներդիրներ, որոնք բաժանվում են սահմանային անցակետերում և ավիաընկերություններում (Arm 15՝ էջ 17): «ԱՄՔՈՐ»-ի թռուցիկները տարածվել են նաև մետրոպոլիտենի վագոններում, ավիատոմսերի վաճառքի գործակալություններում, օտարերկրյա ուսանողների համար նախատեսված հոստելներում, բեռնատարների վարորդների շրջանում, դպրոցների գրադարաններում և մշակութային կենտրոններում: Թեժ գծի հեռախոսահամարները գովազդվել են Երևանի չորս վարչական շրջաններում՝ 346 շենքերի 810 վերելակներում: «ԱՄՔՈՐ»-ը հարկադիր աշխատանքի և թրաֆիքինգի թեմայով սեմինարներ է անցկացրել 38 գյուղական համայնքներում (Arm 27՝ էջեր 24-25): 2015 թվականի հունիսին «Աուդիո-վիզուալ լրագրողների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը ցուցադրել է սոցիալական գովազդի չորս հոլովակ, որոնցում

պատկերված են եղել թրաֆիքինգի տարբեր ձևերը, այդ թվում՝ անչափահասների հարկադրական մուրացկանությունը և սեռական շահագործումը: Վարձատրության դիմած սեռական բնույթի ծառայություններ մատուցող անձանց և թրաֆիքինգի վերաբերյալ 2013 թվականի մի ուսումնասիրության մեջ շեշտադրվեց զանգվածային լրատվամիջոցների ներգրավման անհրաժեշտությունը, դպրոցներում և հանրության լայն շերտերի շրջանում իրազեկվածության բարձրացումը, որն ուղղված կլինի թրաֆիքինգի զոհերի, մասնավորապես՝ սեռական բնույթի ծառայությունների մատուցման ոլորտում ներգրավված զոհերի նկատմամբ հանրության բացասական վերաբերմունքի փոփոխությանը (Arm 26՝ էջ 46):

Հ.6.1.1. Բուն պատճառներին անդրադարձող կանխարգելման ծրագրերը բարելավվում են



2007 թվականի մի զեկույցում հարցականի տակ առնվեց թրաֆիքինգի լուսաբանումը լրատվամիջոցներում, քանի որ սեռական շահագործման դեպքերը ներկայացվում էին որպես ցնցող պատմություններ, իսկ որոշ զոհերի իրական ինքնությունը բացահայտվում էր (Arm 15՝ էջ 16): 2012 թվականին ԳՐԵՏԱ-ն մտահոգություն արտահայտեց լրագրողների կողմից զոհերի անձնական տվյալների հրապարակման առնչությամբ (Arm 20՝ էջ 21): Հարցվածներից մեկը նույնպես բարձրացրեց այս հարցը՝ նշելով, որ լուսաբանման ընթացքում լրատվամիջոցների թույլ տված սխալները կարող են ազդել թրաֆիքինգի զոհերի անվտանգության վրա: Դրան ի պատասխան ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ: «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունն անցկացնում է մրցանակաբաշխությունը՝ մարդկանց թրաֆիքինգի լուսաբանման լավագույն դրսևորումները խրախուսելու համար (Arm 27՝ էջեր 24-25): «Աուդիո-վիզուալ լրագրողների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունն իրականացրել է լրագրողների

որակավորման բարձրացմանն ուղղված ծրագիր և գործարկում է www.antitrafficking.am կայքէջը, որը հանդես է գալիս որպես երկլեզու տեղեկատվական հարթակ (կայքէջում նախատեսվում է ավելացնել նյութեր նաև ռուսերեն լեզվով), ինչպես նաև էջ «Facebook» սոցիալական ցանցում՝ որպես ռեսուրս լրագրողների համար (Arm 2՝ էջեր 3-4, Arm 27՝ էջեր 24-25): Լրատվամիջոցների դերակատարումը բարձրացնելու ռազմավարություններն արտացոլված են ներկայիս ազգային ծրագրում, որտեղ ամրագրված է համագործակցությունը զանգվածային լրատվամիջոցների հետ: www.antitrafficking.am կայքէջը պարբերաբար թարմացվում է, աշխատանքային և մասնագիտական էթիկայի թեմայով կազմակերպվում են քննարկումներ, որոնք կոչված են բարձրացնել լրագրողների իրազեկվածությունը և ուսումնասիրել տեղեկատվության մատուցման հարցում որդեգրած մոտեցումները:

Հ. 6.1.4. Լրատվամիջոցների ներգրավվածությունը թրաֆիքինգի ռիսկերի իրազեկման գործում բարելավվում է



Չնայած այս գովելի ջանքերին՝ մարդկանց թրաֆիքինգի հակազդման ճանապարհին որպես հիմնական մարտահրավեր կամ արգելք հարցվածներից մի քանիսն ընդգծեցին տեղեկատվության պակասը: Կանխարգելման հետ կապված հարցերին անդրադարձաժողով հարցվածներից չորսը որպես իրենց կարծիքով հիմնական բացթողում կամ մարտահրավեր մատնանշեցին իրազեկվածության բարձրացմանն ուղղված լրացուցիչ միջոցառումների անհրաժեշտությունը: Հիշատակվեց արտասահման մեկնող միգրանտների շրջանում իրազեկվածության բարձրացման անհրաժեշտությունը, և քանի որ Հայաստանը դժկամությամբ է ընդունում աշխատուժ մատուցող երկրի իր կարգավիճակը, ուստի այս հանգամանքը կարող է հնարավոր արգելք դառնալ ամբողջական տեղեկատվության ստացման համար, միգրանտները (օրինակ՝ Ռուսաստան մեկնող աշխատանքային միգրանտները) հաճախ չունեն համապատասխան

տեղեկություններ և խոցելի են շահագործման ենթարկվելու առումով, ինչը վկայում է մեկնումից առաջ կողմնորոշման անհրաժեշտության մասին: Կանայք, ընտանեկան հարաբերությունների վատթարացման պայմաններում հաճախ չունեն տեղեկատվություն ստանալու հնարավորություն, ինչը կարող է բերել նրան, որ նրանք դառնան թրաֆիքինգի զոհ: Սահմանային անցակետերի աշխատակիցները հայտնում են, որ թրաֆիքինգի վտանգների մասին ազդարարող պաստառները փակցված են սահմանային անցակետերում, իսկ թեժ գծերի հեռախոսահամարները ներկայացնող բրոշյուրները տարածվում են Հայաստանից դուրս եկող անձանց շրջանում: Նման տեղեկատվություն չի մատուցվում երկիր մուտք գործող անձանց:⁸

Անդրադարձ խոցելիության և բուն պատճառների խնդրին

Գործազրկությունը, բարդ տնտեսական իրավիճակը (հատկապես գյուղական վայրերում) և գենդերային անհավասարությունը մատնանշվել են որպես թրաֆիքինգին և շահագործմանը նպաստող հիմնական գործոններ, մասնավորապես՝ այն կանանց պարագայում, ովքեր բախվում են դժվարությունների Հայաստանում տնտեսական հնարավորություններ հայթայթելիս և հետագայում դառնում թրաֆիքինգ իրականացնողների կեղծ խոստումների զոհ (Arm 11՝ էջեր 7, 23): Որպես թրաֆիքինգի նկատմամբ առանձնապես խոցելի խումբ նշվել են գիշերօթիկ հատուկ հաստատություններում տեղակայված հայ երեխաները, ինչպես նաև ազգությամբ հայ միգրանտները, փախստականները և երկրի ներսում տեղահանված անձինք (Gen 1): Մարմնավաճառությամբ զբաղված կամ զբաղվող հայ կանայք խիստ խոցելի են սեռական շահագործման նպատակով թրաֆիքինգի ենթարկվելու տեսանկյունից, իսկ վարձատրության դիմած սեռական բնույթի ծառայություններ մատուցող անձանց խարանավորումը բացասաբար է անդրադառնում թրաֆիքինգի զոհերին մատչելի զբաղվածության հնարավորությունների առկայության վրա՝ դրանով իսկ բարձրացնելով նրանց խոցելիությունը թրաֆիքինգի նկատմամբ: 2013 թվականի զեկույցում ի հայտ են բերվել ծննդյան գրանցման գործընթացում առկա որոշ բացթողումներ, որոնք կարող են նպաստել ապաքաղաքացիության⁹ առաջացմանը,

8 Երկիր մուտք գործելու կամ երկրից մեկնելու պահին հեղինակը նման պաստառներ կամ բրոշյուրներ չի նկատել:

9 Ուսումնասիրություն Հայաստանում ծնունդների գրանցման ընթացակարգի վերաբերյալ՝ խնդիրներ և դրանց հաղթահարման հեռանկարներ (Երևան, Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ և Քաղաքական հասարակության ինստիտուտ, 2013թ.):

ինչը հարցազրույցների ընթացքում ներկայացվել է որպես թրաֆիքինգի նկատմամբ խոցելիությանը նպաստող երևույթ (Arm 20, էջ 26), թեպետև հարցվածներից մեկն ընդգծեց, որ ծնունդների ճնշող մեծամասնությունն այժմ գրանցվում է: Հարցազրույցների անցկացման ընթացքում մտահոգություն բարձրաձայնվեց նաև դպրոցից դուրս մնացած և աշխատանքի նպատակով Ռուսաստանի Դաշնություն ուղարկվող տղաների աճող թվի առնչությամբ, իսկ Ռուսաստանի Դաշնությունում շինարարությամբ զբաղվող սեզոնային միգրանտները (որոնց ոչ պաշտոնական թիվը կազմում է տարեկան 100 000 մարդ) նշվեցին որպես խիստ խոցելի խումբ, որը զրկված է զբաղվածության այլընտրանքային հնարավորություններից:

Նման պայմաններում 2013–2015թթ. ազգային ծրագրի հիմնական նպատակն է իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք կոչված կլինեն բարելավել սոցիալ-տնտեսական պայմանները և կանխել մարդկանց թրաֆիքինգը: Նախատեսված ռազմավարություններից են՝ բիզնես աջակցությունը խոցելի խմբերին, այդ թվում՝ մասնագիտական ուսուցումը և ֆինանսական աջակցության մատուցումը, մասնագիտական դասընթացները գործազուրկ անձանց, հատկապես գյուղատնտեսական նշանակության հող ունեցող աշխատանք փնտրողների համար, կրկին զոհ դառնալուց զերծ մնալու համար մասնագիտական դասընթացները և զբաղվածությունը թրաֆիքինգի զոհերի սոցիալական վերաինտեգրման համար, զբաղվածության ծրագրերի և նախաձեռնությունների իրականացումը վերադարձող թրաֆիքինգի հայ զոհերի վերաինտեգրման համար, աջակցությունը, այդ թվում՝ տեղեկատվական աջակցությունն աշխատանքի շուկայում երիտասարդների մրցունակության ապահովման համար և մասնագիտական կողմնորոշումը, ինչպես նաև գործատուների մոտ աշխատանքային պրակտիկայի կազմակերպումը գործազուրկ և հաշմանդամություն ունեցող անձանց համար: Չունենալով ազգային ծրագրի իրագործման ավարտական զեկույցը՝ դժվար է որոշել, թե արդյոք իրականացվել են այդ քայլերը, և արդյոք չափագրվել է դրանց ազդեցությունը: Այս ռազմավարությունների կենսագործման համար պատասխանատու շահառուները դրանք հարցազրույցների ընթացքում առանձին չեն քննարկել:

Հարցազրույցների ընթացքում հիշատակվել է «Մարդը կարիքի մեջ» հասարակական կազմակերպության աշխատանքը, որը ուղղված է եղել փոքր ձեռնարկությունների ստեղծմանը՝ մարդկանց Հայաստանում մնալու համար հնարավորություններ ստեղծելու նպատակով: Որպես թրաֆիքինգի կանխարգելման անուղղակի միջոց հիշատակվեց նաև կառավարության այն նախաձեռնությունը,

ըստ որի գիշերօթիկ դպրոցների պատանի շրջանավարտներին պետք է հատկացվեն բյուջետային միջոցներ բնակարանների վարձակալության համար: Նշվեց միգրանտների և աշխատանք փնտրողների, ինչպես նաև նրանց շրջանում իրական և հնարավոր զոհերի համար Միգրանտների ռեսուրս կենտրոնի կարևորագույն դերակատարումը:


Հարցվածներից մեկը համարեց, որ գենդերային խտրականության հարցը չի արժանանում բավարար ուշադրության: ԳՐԵՏԱ-ի գնահատման երկրորդ փուլում փորձ է արվել պարզել այն քայլերը, որոնք ձեռնարկվել են մարդկանց թրաֆիքինգի գենդերային հայեցակետերին անդրադառնալու և գենդերային հավասարությունը քաղաքականություններում ընդգրկելու համար՝ նպատակ ունենալով կանխել մարդկանց թրաֆիքինգը և պայքարել դրա դեմ, ինչպես նաև պաշտպանել և խթանել զոհերի իրավունքները, այդ թվում՝ նախատեսել արտոնություններ կանանց և աղջիկների համար: Դրան ի պատասխան չեն բերվել առանձին քաղաքականությունների կամ միջոցառումների օրինակներ (Arm 27՝ էջ 3), ընդ որում ազգային ծրագրում գենդերային կամ այլ բնույթի խտրականության հարցին որևէ անդրադարձ չի արվում:

Բուն պատճառների և նպաստող գործոնների ընկալմանն ուղղված հետազոտություն

Պետական ոչ մի մարմին չի զբաղվում տարբեր պետական գերատեսչություններից ստացված տեղեկատվությունների բաղադրամասեր և վերլուծությամբ, իսկ հասարակական կազմակերպությունները չունեն բավարար ֆինանսական և մարդկային ռեսուրսներ նույնացված զոհերից ստացված տեղեկություններն ընդհանրացնելու համար (Arm 15՝ էջ 10): 2012 թվականին ԳՐԵՏԱ-ն նշեց, որ քրեական գործերի վերաբերյալ վիճակագրական տվյալները հավաքագրվում են ՀՀ ոստիկանության և ՀՀ գլխավոր դատախազության կողմից, իսկ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հավաքագրում է տվյալներ ազգային ուղղորդման մեխանիզմների միջոցով և դրանց շրջանակներից դուրս հասարակական կազմակերպություններից աջակցություն ստացած զոհերի թվի վերաբերյալ, ընդ որում ստացված տվյալները փոխանցվում են Միջգերատեսչական խորհրդին, որն էլ պատրաստում է համապատասխան զեկույցներ: Նշվել է նաև, որ հասարակական կազմակերպությունները հավաքագրում են տվյալներ աջակցություն ստացած թրաֆիքինգի զոհերի վերաբերյալ և հեռախոսազանգեր են ստանում թեժ գծերի միջոցով: Այնուամենայնիվ, ԳՐԵՏԱ-ն նաև

Նշեց թրաֆիքինգի հակազդման բոլոր հայեցակետերի վերաբերյալ տվյալների հավաքագրման համակարգի բացակայությունը: 2010-2012թթ. ազգային ծրագրում ընդգրկվել էին տվյալների շտեմարաններ, իսկ 2012 թվականին Միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոնի հետ համատեղ մշակվեցին դրանցից երկուսը՝ մեկը զոհերի վերաբերյալ (տնօրինվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից), մյուսն էլ թրաֆիքինգ իրականացնողների վերաբերյալ (տնօրինվում է ՀՀ ոստիկանության կողմից) (Arm 20՝ էջ 21): 2013-2015թթ. ազգային ծրագրում հետազոտությունների անցկացման կամ տվյալներ հավաքագրման հարցը չի արծարծվում: Հարցազրույցների տվածներից երկուսը տվյալների հավաքագրումը համարեցին բավարար՝ մեջբերելով տվյալների հավաքագրման գործում տարբեր պետական նախարարությունների դերը, որոնք համապատասխան տվյալները ներկայացնում են աշխատանքային խմբին, որն էլ դրանք փոխանցում է Միջգերատեսչական խորհրդին վերլուծության համար: Այդուհանդերձ, հարցվածներից չորսը համարեց, որ նշված հետազոտությունները բավարար չեն՝ նշելով ՀՀ ոստիկանության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և հասարակական կազմակերպությունների ունեցած տվյալներում եղած տարաձայնությունները, ըստ ընդհանրական նկարագրերի անձանց նույնացնելու կարողության բացակայությունը (օրինակ՝ Միգրացիոն պետական ծառայություն դիմած անձանց պարագայում), ինչպես նաև այնպիսի առանձին հարցերի վերաբերյալ լրացուցիչ հետազոտություններ իրականացնելու անհրաժեշտությունը, ինչպիսիք են՝ դեպի Ռուսաստանի Դաշնություն աշխատանքային միգրացիան և Հայաստանում սիրիացիների աշխատանքային պայմանները:

Հ. 6.1.7. Թրաֆիքինգի պահանջարկին անդրադարձող կանխարգելման ծրագրերը պատշաճ են և արդյունավետ



Միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվել են հատուկ ուսումնասիրություններ: Հարցազրույցների անցկացման ընթացքում պարզ դարձավ հետազոտության մեթոդաբանության հուսալիությունն ապահովելու կարևորությունը, օրինակ՝ հարկադիր աշխատանքի վերաբերյալ Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) կողմից իրականացված մի ուսումնասիրություն չի ընդունվել թերի մեթոդաբանության պատճառով, ինչպես նաև այն հիմնավորմամբ, որ դրանում հավասարության նշան է դրվել աշխատանքային շահագործման և հարկադիր աշխատանքի նպատակով թրաֆիքինգի միջև: Ավելի վերջերս ԱՄՆ պետդեպարտամենտի Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ ոլորտում միջազգային համագործակցության բյուրոյի ֆինանսավորմամբ ԵԱՀԿ-ն իրականացրած «Փորձարկային ուսումնասիրություն Հայաստանում հարկադիր աշխատանքի և աշխատանքային թրաֆիքինգի վերաբերյալ» խորագրով զեկույցն ավելի լավ ընդունվեց (Arm 30, մեջբերվում է 2.2 բաժնում): Սույն գնահատման հարցման բաղադրիչի շրջանակներում նույնպես ի հայտ բերվեց հետազոտությունները բարելավելու անհրաժեշտությունը՝ մասնավորապես պետական մարմինների կողմից իրականացվող հետազոտությունների մասով:

Թրաֆիքինգի բուն պատճառների վերաբերյալ անցկացվում են հետազոտություններ և հավաքագրվում են տվյալներ

	Լիովին համաձայն են	Համաձայն են	Չունեն հստակ կարծիք	Համաձայն չեն	Կտրականորեն համաձայն չեն
6.1.5. Պետական իրավասու մարմինների կողմից իրականացվող հետազոտությունները պատշաճ են և արդյունավետ		n=3	n=1	n=2	
6.1.6. Ոչ պետական մարմինների կողմից իրականացվող հետազոտությունների պատշաճ են և արդյունավետ		n=5		n=1	

Նշում՝ Հարցվածների ընդհանուր թիվը՝ n=6

Անդրադարձ պահանջարկի խնդրին

2011 թվականի ապրիլին քրեական օրենսգրքի 132.3 հոդվածով քրեականացվեց որևէ անձի ծառայություններից օգտվելը, եթե հայտնի է, որ վերջինս հանդիսանում է թրաֆիքինգի զոհ: Հարցվածներից երկուսն այս դրույթը հիշատակեցին որպես պահանջարկին անդրադառնալու միջոց՝ նշելով, որ այն կիրառվել է միայն մեկ անգամ, երբ համապատասխան անձի ծառայություններից օգտվողը գիտեր, որ նա զոհ է, քանի որ վերջինս դիմել էր նրան օգնության համար նախքան իր շահագործման հետևանքով մատուցված ծառայություններից օգտվելը: Հարցվածներից մեկը նշեց, որ այս դրույթի կիրառման հիմնական բարդությունը պայմանավորված է նրանով, որ դեպքերի մեծ մասը տեղի է ունենում արտերկրում: Պահանջարկի նվազեցման ուղղությամբ որևէ այլ աշխատանքներ չեն նկատվել:

Հայաստանում իրականացված ուսումնասիրության մեջ որպես պահանջարկը խթանող գործոններ մեջբերվում են՝ հաճախորդների «երիտասարդացմամբ» և առցանց պոռնկագրության հեշտ հասանելիությամբ պայմանավորված սեռական բնույթի ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճը, վարձատրության դիմած սեռական բնույթի ծառայություններ մատուցող ավելի երիտասարդ տարիքի անձանց նկատմամբ պահանջարկի աճը երիտասարդ հաճախորդների շրջանում, Իրանից ժամանած զբոսաշրջիկների և ռուս զինվորականների (տեղակայված են Գյումրիում) կողմից դրսևորվող պահանջարկը, ինչպես նաև տղամարդկանց ամուսնության ավելի ուշ տարիքը (Arm 26՝ էջեր 8-9, 26, 45-46): Պահանջարկը խթանող այս կամ այլ գործոններին ի պատասխան որևէ միջոցառումներ չեն նախատեսվել:

Միգրացիայի կառավարում

2013 թվականին միգրացիայի և դրա շուրջ ձևավորված ինստիտուցիոնալ դաշտը ՄՄԿ-ն բնութագրեց որպես ապակենտրոնացված և բարդ, քանի որ այն բաղկացած է Միգրացիոն պետական ծառայությունից (որը ՀՀ տարածքային կառավարման նախարարության մաս է կազմում), Հյուսիսատոսական վարչությունը և Իրավաբանական վարչությունը (որոնք ՀՀ արտաքին գործերի նախարարության մաս են կազմում), արտերկրում գտնվող հայերի պարագայում՝ ՀՀ սփյուռքի նախարարությունը, ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը (պատասխանատու է սահմանների կառավարման համար և մասնակցում է անկանոն միգրացիայի դեմ պայքարին), ինչպես նաև ՀՀ ոստիկանությունը (պատասխանատու

է անկանոն միգրացիայի, այդ թվում՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի համար): ՀՀ արդարադատության նախարարությունը և ՀՀ առողջապահության նախարարությունը նույնպես մասնակցում են միգրացիայի կառավարման որոշ առանձին հայեցակետերին: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատասխանատու է աշխատանքային միգրացիայի կարգավորման համար: 2013-2015թթ. ազգային ծրագրում ամրագրված հիմնական արդյունքներից մեկը նախատեսում է, որ կանոնավոր միգրացիայի միջոցով ՀՀ քաղաքացիները պետք է ունենան պայմանագրային հիմունքներով օտարերկրյա պետություններում աշխատանք գտնելու ավելի մեծ հնարավորություններ, իսկ աշխատանքային միգրացիայում ներգրավված ՀՀ քաղաքացիների իրավունքների ու շահերի պաշտպանությունը պետք է բարելավվի: Ուսումնասիրության առկա տվյալներից անհնար է պարզել, թե արդյոք այս նախանշված արդյունքն իրականացվել է, թե ոչ:

2003 թվականին Հայաստանը ստորագրել, սակայն դեռևս չի վավերացրել Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների մասին միջազգային կոնվենցիան, որը խրախուսում է միգրանտ աշխատողների թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված միջոցառումները:

Կանխարգելման ցուցիչներ

		ՇՐՋԱՆԱԿԱՑԻՆ ցուցիչներ		ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՆ ցուցիչներ	
		1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ
4.1	Կանխարգելման ծրագրեր, որոնք կոչված են անդրադառնալ բուն պատճառներին և խոցելիության գործոններին	Առկա է ռազմավարություն և (կամ) քաղաքականություն, որը կոչված է թեթևացնել տնտեսական խնդիրները, խտրականությունը և այլ բուն սոցիալ-տնտեսական պատճառները	Համապատասխան ռազմավարությամբ և (կամ) քաղաքականությամբ ճանաչվում և հասցեական գործողությունների թիրախ են դառնում խոցելիության համապատասխան և հատուկ ձևերը և (կամ) առանձնապես խոցելի խմբերը	Կան տվյալներ բուն պատճառների և խոցելիության խնդիրների լուծմանն ուղղված կանխարգելման ծրագրերի մասին	Կան տվյալներ խոցելի անձանց և խմբերին ուղղված հասցեական կանխարգելման ծրագրերի մասին

4.2	Իրագեկման բարձրացում և լրատվամիջոցների ներգրավում տեղեկատվության տարածման գործում	Առկա է ռազմավարություն և (կամ) քաղաքականություն, որը կոչված է բարձրացնել իրագեկվածությունը թրաֆիքինգի վերաբերյալ և ստեղծել թեժ գիծ	Առկա է ռազմավարություն և (կամ) քաղաքականություն, որը կոչված է ներգրավել և իրավագործել լրատվամիջոցները՝ իրագեկվածություն բարձրացման նպատակով	Ձեռնարկվում են իրագեկման բարձրացման աշխատանքներ, ստեղծվել և գործում է թեժ գիծ	Լրատվամիջոցների լուսաբանումը ճշգրիտ է և պատասխանատու (չի վնասում) տուժած անձանց, հնարավոր գոհերի կամ այլ անձանց նկատմամբ
4.3	Հետազոտություններով և տվյալների հավաքագրմամբ ակտիվ զբաղվող հետազոտական հաստատություններ	Առկա է տվյալներ հավաքագրման պետական համակարգ, որը կոչված է հավաքագրել և մշակել տվյալները թրաֆիքինգ իրականացնողների և նրանցից տուժած անձանց վերաբերյալ	Հետազոտական հաստատությունները պաշտոնապես զբաղվում են թրաֆիքինգի վերաբերյալ տվյալների հավաքագրմամբ և հետազոտություններով	Բուն պատճառների, միտումների և պահանջարկի վերաբերյալ անցկացվում են հետազոտություններ և հավաքագրվում են տվյալներ	Կան տվյալներ, որ կանխարգելման ռազմավարությունները հիմնված են առկա տվյալների վրա (այն է՝ օգտագործում են տվյալներն ու հետազոտությունները)
4.4	Պահանջարկի խնդրի լուծմանն ուղղված սոցիալական և տնտեսական ծրագրեր	Առկա է քաղաքականություն, որը կոչված է անդրադառնալ պահանջարկի հարցերին, այդ թվում՝ ներգրավելով աշխատաշուկաները՝ շահագործական աշխատանքային գործելակերպը կանխելու նպատակով	Առկա են մասնավոր հատվածի և (կամ) քաղաքացիական հասարակության խմբերի հետ համագործակցության պայմանագրեր և (կամ) պայմանավորվածություններ, որոնք կոչված են անդրադառնալ պահանջարկի խնդրին	Կան տվյալներ աշխատաշուկաների մշտադիտարկման և կարգավորման միջոցառումների ամրապնդման վերաբերյալ	Կան տվյալներ թրաֆիքինգից տուժած անձանց կողմից մատուցվող ծառայություններից օգտվող թիրախային սպառողների նկատմամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ
4.5	Մարդկանց թրաֆիքինգի դեմ ուղղված սահմանապահ միջոցառումներ և միգրացիայի կարգավորում	Առկա են ռազմավարություններ, որոնք կոչված են կանխել թրաֆիքինգը և շահագործումը սահմանային և միգրացիոն վերահսկողության համատեքստում	Առկա է ռազմավարություն, որը կոչված է ապահովել պարբերական միգրացիոն հնարավորություններ՝ թրաֆիքինգի նկատմամբ խոցելիությունը նվազեցնելու նպատակով	Կան տվյալներ թրաֆիքինգի նկատմամբ խոցելիության նվազեցմանն ուղղված կանոնավոր միգրացիայի հնարավորությունների աճի մասին	Կան տվյալներ թրաֆիքինգի և միգրանտների շահագործման կանխարգելման միջոցառումների (օրինակ՝ միգրանտների գրանցման և (կամ) իրագեկման միջոցով) մասին

Նշում՝ կանաչով նշված են այն ոլորտները, որոնցում հնարավոր է բարելավվում:

2.5 Համակարգում և համագործակցություն

Միջգերատեսչական համակարգում և համագործակցություն

Հայաստանում չի նշանակվել ազգային համակարգող: Այդուհանդերձ, թրաֆիքինգի դեմ ուղղված քայլերը Հայաստանում իրականացվում են 2007 թվականին ստեղծված Մարդկանց թրաֆիքինգի հարցերով միջգերատեսչական խորհրդի կողմից: 10 Փոխվարչապետը, ով նաև ՀՀ տարածքային կառավարման նախարարն է, նախագահում է խորհուրդը, որի կազմում ընդգրկված են նախարարներ և պաշտոնատար անձինք 17 պետական մարմիններից՝ Նույնացման և աջակցության մասին օրենքում սահմանված կարգով: Միջգերատեսչական խորհրդի գործունեությունը կազմակերպելու համար ստեղծվել է աշխատանքային խումբ, որը նախագահում է ՀՀ արտաքին գործերի նախարարության միջազգային կազմակերպությունների վարչության պետը: Աշխատանքային խմբի կազմում ընդգրկված են նախարարությունների և այլ պետական մարմինների ներկայացուցիչներ, ընդ որում երկու ամիսը մեկ անցկացվում են նիստեր, որոնց մասնակցում են միջազգային և հասարակական կազմակերպություններ: Աշխատանքային խումբը Խորհրդին ներկայացնում է կիսամյա և տարեկան զեկույցներ, որոնք հրապարկվում են ՀՀ կառավարության կայքում: 11 Խորհուրդը և աշխատանքային խումբը պարբերաբար անցկացնում է հանդիպումներ, որոնք կոչված են հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ ապահովել ազգային ծրագրի կենսագործումը:

Ներկայումս գործում են փոխըմբռնման հուշագրեր պետական մարմինների և երեք հասարակական կազմակերպությունների միջև, ընդ որում «ԱՄԲՈՐ»-ն օգտվում է պետության մշտական աջակցությունից: Նախարարությունը «ԱՄԲՈՐ»-ի հետ կնքում է տարեկան պայմանագիր «Թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ» ծրագրի իրականացման համար սուբսիդավորում տրամադրելու մասին (Arm 27՝ էջ 61): 2012 թվականին ԳԲԵՏԱ-ի զեկույցի համաձայն համագործակցությունը պետական դերակատարների և հասարակական կազմակերպությունների միջև

10 2007թ. դեկտեմբերի 6 թիվ N 861-Ա որոշմամբ

11 Սույն գնահատման անցկացման պահին 2014 և 2015 թվականների զեկույցները առցանց հասանելի չէին:

լավ էր ընթանում, սակայն գոյություն ունեցող կանոնակարգը և գործող հուշագրերը որոշ դեպքերում չէին ապահովում հասարակական կազմակերպությունների կողմից նույնացված հնարավոր զոհերի հասանելիությունը, ինչը պայմանավորված էր զոհերի նույնացման ընթացակարգային սահմանափակումներով: Թեև հասարակական կազմակերպությունները և պետական մարմինները սովորաբար միջոցներ են գտնում անձանց աջակցելու համար, սակայն նման համագործակցությունը պայմանավորված է անձնական հարաբերություններով, այլ ոչ թե թրաֆիքինգի հակազդման համակարգի ինստիտուցիոնալ արձագանքով: Աշխատանքային խմբի գովելի գործունեությունը հիշատակած անձանց մեծ մասը նշել է, որ վերջինիս հաջողության պատճառը «հիմնված է անձնական հարաբերությունների վրա»՝ որպես կարևորագույն մեջբերելով «մարդկային գործոնը»: Քանի որ արդյունավետ համագործակցությունը կախված է դրանում ներգրավված անհատներից, ուստի ըստ մասնակիցների այն տուժում է ուստիկանության և դատախազության աշխատակիցների շրջանառության բարձր գործակցից: Հետևաբար, նույնացման և աջակցության մասին օրենքում ամրագրված պարտադիր համագործակցության մասին դրույթը ստացավ դրական գնահատական:

Միջազգային համագործակցություն

2013-2015թթ. ազգային ծրագրում ամրագրվում է միջազգային պայմանագրային և (կամ) իրավական դաշտի բարելավման նպատակը, այդ թվում՝ նպատակակետ երկրների հետ թրաֆիքինգի հակազդման մասին համագործակցության պայմանագրերի կնքման, աշխատանքային միգրացիայի տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող երկրների ցանկի մշակման, դիվանագիտական առաքելությունների օգնությամբ աշխատանքի շուկաների ուսումնասիրության մեխանիզմների մշակման, ինչպես նաև աշխատուժի փոխանակման մասին միջպետական պայմանագրերի կնքման միջազգային փորձի ուսումնասիրության միջոցով: Հայաստանի և մի քանի համապատասխան երկրների հետ, այդ թվում՝ Արաբական Միացյալ Էմիրությունների (թրաֆիքինգի դեմ պայքարի մասին), Ռուսաստանի Դաշնության (աշխատանքային միգրացիայի և աշխատանքային միգրանտների շահերի պաշտպանության մասին), Բուլղարիայի, Վրաստանի, Հունաստանի, Իրանի, Սիրիայի Արաբական Հանրապետության և Ուկրաինայի հետ գործում են մի քանի երկկողմ փոխըմբռնման հուշագրեր:

Գործողությունների ազգային ծրագրի միջազգային և

տարածաշրջանային համագործակցության վերաբերյալ 4-րդ բաժնում ամրագրվում է համագործակցությունը թրաֆիքինգի հակազդման ոլորտում հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների հետ միջազգային և տարածաշրջանային մակարդակներով: Սույն գնահատման գործընթացի շրջանակներում չեն ստացվել իրազեկվածության բարձրացման ոլորտում միջազգային և տարածաշրջանային համագործակցության մասին վկայող ավելի կոնկրետ տեղեկություններ: Ընդհանուր առմամբ, հասարակական կազմակերպությունների մակարդակով հարցվածներից մեկը բացատրեց, որ համագործակցությունը Թուրքիայի հասարակական կազմակերպությունների հետ խաթարված է, քանի որ վերջիններս հատուկ չեն զբաղվում թրաֆիքինգի հարցերով, ինչը նշանակում է, որ համագործակցությունը հնարավոր էր իրականացնել միայն ոստիկանության միջոցով, իսկ ոստիկանության հետ զոհերը համագործակցում են որոշակի դժկամությամբ: Հարցազրույցներին մասնակցած անձինք հանդես եկան նույն մեկնաբանությամբ Ռուսաստանի Դաշնության առնչությամբ՝ նշելով, որ այնտեղ քաղաքացիական հասարակությունը համեմատաբար թույլ է, իսկ պետական մարմինների արձագանքը այս խնդրին չի համարվում բավարար: Մյուս կողմից, հարցվածներից մեկը նշեց, որ միմյանց հետ լարված քաղաքական հարաբերություններ ունեցող երկրների հասարակական կազմակերպությունները հաճախ կարող են ավելի արդյունավետ համագործակցել, քան պետությունը ներկայացնող պաշտոնատար անձինք: Միջազգային և տարածաշրջանային համագործակցությունն ամրապնդելու երկրորդ ռազմավարությունը կայանում է նրանում, որպեսզի ընդլայնել և բարելավել համագործակցությունն օտարերկրյա իրավապահ մարմինների հետ, մասնագիտացված միջազգային կազմակերպությունների և դիվանագիտական առաքելությունների հետ: Քրեական արդարադատության ոլորտում ընդհանուր համագործակցության մասին պայմանագրեր են գործում Լատվիայի, Ռուսաստանի Դաշնության, Եգիպտոսի, Կիպրոսի և Լեհաստանի հետ (Arm 28՝ էջ 3): ՀՀ ոստիկանությունը և գլխավոր դատախազությունը կարող են քրեական հետաքննություններին առնչվող տեղեկություններ հաղորդել այլ պետություններին՝ դիվանագիտական ճանապարհներով, Ինտերպոլի ազգային բյուրոյի միջոցով կամ իրենց գործընկերների հետ ուղղակի շփմամբ, ընդ որում ըստ ունեցած տեղեկությունների ուղղակի շփումներն իրականում տեղի են ունենում: Համագործակցությունը բազմաթիվ երկրների հետ հաճախ իրականացվում է հետաքննության խնդրագրերի փոխանակման միջոցով: Հարցվածները նշեցին, որ

համագործակցությունը Թուրքիայի հետ իրականացվում է Ինտերպոլի միջոցով:

Տարածաշրջանային մակարդակով Հայաստանը ներգրավված է Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) բազմակողմ համաձայնագրերի շրջանակներում, որոնցից են՝ Անդամ պետությունների ներքին գործերի նախարարությունների (ոստիկանության) միջև մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ոլորտում համագործակցության մասին պայմանագիրը (2010թ.), ինչպես նաև Անկախ պետությունների համագործակցության անդամ պետությունների միջև մարդկանց թրաֆիքինգի, օրգանների և հյուսվածքների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտում համագործակցության մասին պայմանագիրը (2006թ.): Բազմակողմ այլ կառույցներից են՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ), որն առաջնահերթ է համարում թրաֆիքինգի դեմ ուղղված համատեղ պատասխան միջոցառումները, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունը (ՄԾՏՀ) և Եվրոպական հարևանության քաղաքականությունը, որն իր ռազմավարության մեջ ներառում է համագործակցությունը թրաֆիքինգի հակազդման ոլորտում: 2011 թվականին ընդունվեց Հայաստան-ԵՄ Շարժունակության շուրջ գործընկերությունը, որը որպես բաղադրիչ ներառում էր համագործակցությունը մարդկանց թրաֆիքինգի (և ապօրինի միգրացիայի) դեմ պայքարի ոլորտում: Բացի այդ, Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի երեք գլուխներում անդրադարձ է արվում աշխատանքային միգրացիայի խնդրին: Կնքվել է նաև երկկողմ աշխատանքային հարաբերություններն ամրագրող փոխըմբռնման հուշագիր ԵՄ «Ֆրոնտեքս» գործակալության հետ: Հարցազրույցներին մասնակցած անձինք չեն հիշատակել այս մեխանիզմները և չեն մեջբերել դրանց հիման վրա թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում ծավալված արդյունավետ համագործակցության որևէ կոնկրետ օրինակ:

Համագործակցության և համակարգման ցուցիչներ

		ՇՐՋԱՆԱԿԱՑԻՆ ցուցիչներ		ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՆ ցուցիչներ	
		1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ
5.1	Թրաֆիքինգի հակազդման գործողությունների ազգային ծրագիր	Առկա է թրաֆիքինգի հակազդման գործողությունների ազգային ծրագիր	Գործողությունների ազգային ծրագիրը նախատեսում է ազգային, երկկողմ և տարածաշրջանային ավելի բարձր համագործակցություն	Առկա են գործողությունների ազգային ծրագրի գործնական իրագործման ուղղորդման աշխատանքային ընթացակարգեր	Գործողությունների ազգային ծրագրի իրագործման շրջանակներում շահառուների կողմից օգտագործվում են աշխատանքային ընթացակարգեր
5.2	Ազգային համակարգող կամ զեկուցող	Համապատասխան օրենքը և (կամ) քաղաքականությունը նախատեսում է ազգային համակարգողի և (կամ) զեկուցողի կամ էլ նման այլ պատասխանատուի նշանակում թրաֆիքինգի հարցերի համակարգման համար	Ազգային համակարգողը և (կամ) զեկուցողը ստացել է հստակ լիազորություններ և մշտադիտարկման կարողություններ	Նշանակվել է ազգային համակարգող կամ զեկուցող	Մարդկանց թրաֆիքինգին առնչող բոլոր հարցերի համակարգում
5.3	Համագործակցության պետության, հասարակական կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների և այլ ոչ պետական դերակատարների միջև	Համապատասխան օրենքը և (կամ) քաղաքականությունը նախատեսում է համագործակցություն պետության և ոչ պետական դերակատարների (հասարակական կազմակերպություններ, քաղաքացիական հասարակություն) միջև	Պետության և ոչ պետական դերակատարների միջև առկա են համակարգման պայմանագրեր և (կամ) մեխանիզմներ	Պետություն և ոչ պետական դերակատարները հանդիպում են որևէ գործի շրջանակներում կամ արտակարգ հիմունքներով համագործակցելու համար	Պետությունը և ոչ պետական դերակատարները համագործակցում են առօրյա հարցերով և դրսևորում են նախաձեռնողական մոտեցում
5.4	Թրաֆիքինգի հակազդման երկկողմ և անդրազգային քրեական արդարադատության մարմինների ցանցեր	Առկա են թրաֆիքինգի հակազդման երկկողմ և անդրազգային քրեական արդարադատության մարմինների ցանցեր	Բոլոր հիմնական երկրների հետ գործում են երկկողմ և (կամ) անդրազգային համագործակցություն պայմանագրեր	Կան տվյալներ թրաֆիքինգի հակազդման քրեական դատավարության մարմինների միջև երկկողմ և (կամ) անդրազգային համագործակցության մասին	Երկկողմ և (կամ) անդրազգային համագործակցությունը կրում է նախաձեռնողական բնույթ (ասել է թե՛ գերազանցում է արտակարգ արձագանքը դեպքերին)

5.5	Համագործակցություն երկկողմ և անդրազգային քրեական արդարադատության համակարգից դուրս	Առկա են պայմանագրեր, որոնք սատարում են համագործակցությունը թրաֆիքինգի հակազդման ոլորտում հետաքննության և (կամ) հետապնդման շրջանակներից դուրս	Առկա են երկկողմ և (կամ) անդրազգային պայմանագրեր, որոնք հատուկ անդրադառնում են աջակցության և պաշտպանության և (կամ) թրաֆիքինգի կանխարգելման հարցերին	Կան տվյալներ, որ պայմանագրերը բերում է երկկողմ և (կամ) անդրազգային համագործակցությանը հետաքննության և (կամ) հետապնդման շրջանակներից դուրս	Կան տվյալներ, որ պայմանագրերը բերում է երկկողմ և (կամ) անդրազգային համագործակցությանը՝ աջակցելու և պաշտպանելու և (կամ) թրաֆիքինգը կանխարգելելու նպատակով
-----	--	--	--	---	--

Նշում՝ կանաչով նշված են այն ոլորտները, որոնցում հնարավոր է բարելավում:

3. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարցման շրջանակներում հարցվածներին առաջարկվել է ընտրել երեք առաջնահերթություններ: Նմանապես, Վավերացման աշխատաժողովի մասնակիցները բաժանվել են խմբերի և ստացել են առաջադրանք՝ որոշել թրաֆիքինգի հակազդմանն ուղղված միջոցառումների ոլորտում իրենց կարծիքով երեք առաջնահերթությունները: Ստորև բերված աղյուսակում «●» նշանով ներկայացված են այն առաջնահերթությունները, որոնք հարցվածները և աշխատաժողովի խմբերի մասնակիցները մատնանշել են որպես հակազդման ոլորտի հիմնական առաջնահերթություններ: Թեև արձանագրվել է պատասխանների լայն շրջանակ, սակայն առավել հաճախ մեջբերվող առաջնահերթություններից են՝ «Թ» կետը (բուն պատճառներին անդրադառնալու վերաբերյալ), որը հարցման մեջ ընդգրկվածներից երեքը և Վավերացման աշխատաժողովի երկու խումբ ներառել են երեք առաջնահերթությունների շարքում, ինչպես նաև «Ե» կետը (թրաֆիքինգից տուժած անձանց հասանելի ծառայությունների որակի բարձրացման վերաբերյալ), որը հարցման մեջ ընդգրկվածներից երեքը և Վավերացման աշխատաժողովի մեկ խումբ ներառել են երեք առաջնահերթությունների շարքում:

Նույնացման և ուղղորդման ցուցիչներ

Առաջարկություն	Հարցում	Աշխատաժողով
Ա. Ամրապնդել նույնացման և ուղղորդման մեխանիզմները կամ դրանց իրագործումը	●	●
Բ. Ընդլայնել թրաֆիքինգի զոհերին առաջարկվող աջակցության և օժանդակության ծառայությունների շրջանակը	●●	●
Գ. Ընդլայնել աջակցության և օժանդակության ծառայություններից օգտվելու հնարավորություն ունեցող զոհերի շրջանակը		●
Դ. Ամրապնդել թրաֆիքինգի հակազդման իրավական դաշտը		
Ե. Բարձրացնել թրաֆիքինգի զոհերին հասանելի ծառայությունների որակը	●●●	●
Զ. Ամրապնդել թրաֆիքինգի ջրեականացման և թրաֆիքինգ իրականացողների հետապնդման իրավական դաշտը	●	
Է. Ամրապնդել հետաքննությունը մարդկանց թրաֆիքինգի գործերով (այդ թվում՝ զարգացնելով իրավապահ մարմինների կարողությունները, ինչպես նաև համապատասխան բաժինների ավելի մեծ մասնագիտացման միջոցով)		●

Ը. Ամրապնդել հետապնդումը մարդկանց թրաֆիքինգի գործերով (այդ թվում՝ զարգացնելով դատախազների և դատավորների կարողությունները)		
Թ. Ամրապնդել բուն պատճառների և խոցելիության գործոնների (այդ թվում՝ սոցիալ-տնտեսական գործոններ, խտրականություն և այլն) վերացման ուղղված ջանքերը	● ● ●	● ●
Ժ. Ամրապնդել թրաֆիքինգի վտանգների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված ջանքերը (այդ թվում՝ բարձրացնելով իրազեկման ուղերձների որակը և (կամ) իրականացնելով ռիսկային խմբերի ավելի հասցեական թիրախավորում)	● ● ●	
Ի. Ամրապնդել թրաֆիքինգի խնդրին պահանջարկի տեսանկյունից անդրադառնալու ջանքերը	● ●	
Լ. Ամրապնդել հետազոտությունները և տվյալների հավաքագրումը թրաֆիքինգի վերաբերյալ՝ այն ավելի լավ հասկանալու նպատակով	●	
Խ. Բարելավել համագործակցությունը պետական դերակատարների միջև ազգային մակարդակով		
Ծ. Բարելավել համագործակցությունը պետական և ոչ պետական դերակատարների միջև ազգային մակարդակով		
Կ. Բարելավել համագործակցությունը դերակատարների միջև երկկողմ մակարդակով	● ●	
Հ. Բարելավել համագործակցությունը պետական դերակատարների միջև տարածաշրջանային մակարդակով	● ●	

3.1 Նույնացում և ուղղորդում

Շահառուներին առաջարկվում է ուսումնասիրել հետևյալը.

- ապաստան հայցողների շրջանում թրաֆիքինգի հնարավոր զոհերի նույնացման ամրապնդում՝ նախատեսելով ապաստան հայցողների նախնական գրանցման և հարցազրույցների ընթացքում օգտագործվող ձևաթղթերում այնպիսի հարցեր, որոնք կոչված կլինեն պարզել, թե արդյոք տվյալ անձը ենթարկվել է կամ կարող է ենթարկվել շահագործման, թե ոչ,
- հղում ՄԱԿ ՓԳՀ-ի ուղեցույցներին, այդ թվում՝ «Ուղեցույց թրաֆիքինգի զոհերի և թրաֆիքինգի ենթարկվելու ռիսկ կրող անձանց նկատմամբ միջազգային պաշտպանություն և (կամ) 1951 թվականի կոնվենցիայի և 1967 թվականի արձանագրության 1-ին հոդվածի «ա» մասի 2-րդ կետի կիրառման վերաբերյալ» և Ապաստանի աջակցության եվրոպական գրասենյակի «Հարուկ կարիքներ ունեցող անձանց նույնացման գործիք»՝ որպես Միգրացիոն պետական ծառայության և Հայաստանի Հանրապետության

Նույնացման հանձնաժողովի համար պատշաճ ուղեցույցի մշակման հիմք,¹²

- սահմանային անցակետերի աշխատակիցների դերակատարման ամրապնդում՝ առաջնությունը տալով սահմանների և նույնացման հարցերով միջգերատեսչական աշխատանքային խմբին, որը կոչված է մշակել նույնացման մասնագիտացված ցուցիչներ և պատշաճ ուղղորդման գործիքներ:

«Աշխատանքի պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի մեջբերմամբ Քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 4-րդ մասով հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները նախատեսված են որպես մարդկանց թրաֆիքինգի շահագործական նպատակներից, ուստի շահառուներին առաջարկվում է դիտարկել աշխատանքի տեսուչների կարողությունների վերականգնման և ամրապնդման հարցը՝ նպատակ ունենալով նույնացնել թրաֆիքինգի և շահագործման զոհերին և ապահովել նրանց պատշաճ ուղղորդումը հետևյալ միջոցներով.

- հարկադիր աշխատանքի սահմանվում է Հայաստանի կողմից վավերացված 1930 թվականի ԱՄԿ-ի Հարկադիր աշխատանքի մասին կոնվենցիայի (ԱՄԿ թիվ 29 կոնվենցիա) 2-րդ հոդվածի 1-ին մասով որպես՝ «ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը կորզվում է որևէ անձից պատժի սպառնալիքով, և որի կատարման համար տվյալ անձը հոժարակամ ցանկություն չի հայտնել»,
- աշխատանքի տեսչության համակարգի պահպանում, որը կզբաղվի բոլոր այն աշխատավայրերով, որոնց նկատմամբ կիրառվում են աշխատողների պայմանների և պաշտպանության իրավական դրույթներ՝ Հայաստանի կողմից վավերացված 1947 թվականի թիվ 81 *Աշխատանքի տեսչության մասին կոնվենցիայի* 1-ին և 2-րդ հոդվածների համաձայն,
- ստեղծել պետական և ոչ պետական դերակատարներից, այդ թվում՝ ԱՄԿ-ի ներկայացուցիչներից բաղկացած Աշխատանքային խմբի ենթախումբ, որը կոչված կլինի առաջարկություններ ձևակերպել մինչև հաջորդ

12 Տե՛ս www.unhcr.org/443b626b2.pdf: Տե՛ս նաև Ապաստան աջակցություն եվրոպական գրասենյակի «Հատուկ կարիքներ ունեցող անձանց նույնացման գործիք», հասանելի է հետևյալ կայքում՝ <https://ipsn.easo.europa.eu>:

գործողությունների ազգային ծրագրի պատրաստումը, պարզաբանել աշխատանքի տեսուչների նույնացման և ուղղորդման լիազորությունները, ամրագրել վերջիններիս դերակատարումն աշխատանքային և քրեական օրենսդրական նորմերում, ինչպես նաև ապահովել աշխատանքին և թրաֆիքինգին վերաբերող օրենքների հետևողականությունը,

- հանձնարարել Աշխատանքային խմբի ենթախմբին ձևակերպել ցուցիչներ, որոնք կօգնեն աշխատանքի տեսուչներին նույնացնել հարկադիր աշխատանքի և հարկադիր աշխատանքի նպատակով իրականացրած թրաֆիքինգի դեպքերը, և որոնք հատկապես բնորոշ են Հայաստանի համատեքստին և այն հանգամանքներին, որոնցում դրանք ամենայն հավանականությամբ կարող են պատահել: Ցուցիչները նաև պետք է օգնեն աշխատանքային տեսուչներին տարբերակել հարկադիր աշխատանքի և վատ աշխատանքային պայմանների հետ կապված իրավիճակները:¹³

3.2 Պաշտպանություն և աջակցություն

Երեխաների շահագործման (այդ թվում մուրացկանության համար) խնդրի նկատմամբ ուշադրության աճի լույսի ներքո՝ ստեղծվել Աշխատանքային խմբի ենթախումբ, որը կոչված կլինի ստեղծել հատուկ երեխաների համար նախատեսված նույնացման մեխանիզմ, ուստիս լրացուցիչ առաջարկվում ենք ուսումնասիրել հետևյալը.

- հետազոտել, թե որքանով են առանց ուղեկցության երեխաները հանդես գալիս որպես աջակցության կամ պաշտպանության մեխանիզմների շրջանակներում օգնության կարիք ունեցող հնարավոր կամ իրական խումբ, ինչպես նաև պարզել, թե որքանով են այդ մեխանիզմները բավարարում նրանց հատուկ կարիքները,
- պարզաբանել Նույնացման և աջակցության մասին օրենքի համաձայն առանց ուղեկցության երեխաներին տրամադրվող կացարանի պայմանները, որոնք ըստ օրենքի

13 Տե՛ս այստեղ՝ «Forced Labour and Human Trafficking: A Handbook for Labour Inspectors» (Ժնև, Աշխատանքի միջազգային կազմակերպություն, 2008թ.), հասանելի է հետևյալ կայքում՝ http://www.ilo.org/wcmsp5/groups/public/---ed_norm/---declaration/documents/publication/wcms_097835.pdf

պետք է ապահովեն հիմնական ընտանեկան պայմաններին նմանվող սոցիալական և կենցաղային պայմաններ,

- մշակել հստակ ղեկավար սկզբունքներ, որոնք կոչված կլինեն ապահովել երեխաների պատշաճ աջակցությունն ու պաշտպանությունը՝ վերջիններիս լավագույն շահերի և երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի 1989 թվականի կոնվենցիայի համաձայն երեխաների նույնացման պահից մինչև նրանց հետ կապված ցանկացած դատավարության ավարտը: Նման ղեկավար սկզբունքները պետք է անդրադառնան երեխաների հետ աշխատող քննչական մարմինների դերակատարմանը, նախատեսեն երեխայի համար նպաստավոր դատավարական ընթացակարգեր, երեխաների հետ կապված դատավարության ողջ ընթացքում խնամակալների և այլ փորձագետների նշանակում, ինչպես նաև պետք է ընդգծեն այն հանգամանքը, որ երեխաների լավագույն շահերը գերակայում են քրեական արդարադատության շահերի նկատմամբ,
- ապահովել, որ երեխաների հետ աշխատող խնամակալների և այլ դերակատարների (այդ թվում՝ քննիչների, դատախազների, պետական և մասնավոր սոցիալական հաստությունների աշխատակիցների, ֆիզիկական, ֆիզիկա-սոցիալական, իրավաբանական, կրթական, բնակարանային, առողջապահական ծառայություններ մատուցողների և թրաֆիքինգի մանկահասակ զոհերի հետ աշխատող այլ անձանց) համար պարբերաբար անցկացվեն համապատասխան դասընթացներ:

Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից պատրաստված «Մարդու իրավունքների և մարդկանց թրաֆիքինգի առաջարկվող սկզբունքներ և ուղեցույցներ» փաստաթղթի համաձայն՝ զոհերին մատուցվող իրավաբանական և այլ նյութական աջակցությունն ամրապնդելու համար շահառուներին առաջարկվում է ուսումնասիրել հետևյալը.

- ընդգրկել 2016-2018թթ. գործողությունների ազգային ծրագրի շրջանակներում այնպիսի քայլեր, որոնցով կիրականացվի թրաֆիքինգի զոհերի իրավաբանական աջակցության մատուցման պետական մեխանիզմ, ինչպես նաև ապահովել, որ նման իրավաբանական աջակցությունը լինի անվճար և մատուցվի հնարավորինս սեղմ ժամկետներում՝ տեղեկացնելով զոհերին իրավական

պաշտպանության միջոցներից օգտվելու իրենց իրավունքների մասին մարդավաճառի դեմ իրականացվող ցանկացած գործողությունների ողջ ընթացքում, այդ թվում՝ փոխհատուցում ստանալու նպատակով,

- իրավաբանական օգնության նվազագույն չափանիշի սահմանում՝ ապահովելու, որ իրավաբանական աջակցություն մատուցող մասնագետներն ունենան մարդկանց թրաֆիքինգի ընկալման պատշաճ մակարդակ, իսկ զոհերին մատուցվի իրավական պաշտպանության միջոցներից օգտվելու համար անհրաժեշտ աջակցություն,
- պարբերաբար վերանայել և ըստ անհրաժեշտության թարմացնել թրաֆիքինգի զոհերին փոխհատուցման տրամադրման գործող մեխանիզմները: Մասնավորապես՝ պարզել, թե արդյոք հնարավոր է ամրապնդել ֆինանսավորման աղբյուրներն ու մեխանիզմները 2005 թվականի դեկտեմբերի 16-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավական նորմերի և միջազգային մարդասիրական իրավունքի կոպիտ խախտումների համար իրավական պաշտպանության միջոցի և փոխհատուցման իրավունքի հիմնարար սկզբունքներ և ուղեցույց» փաստաթղթի համաձայն:

Թրաֆիքինգի զոհերին մատուցվող աջակցության և պաշտպանության մշտադիտարկման ամրապնդման համար շահառուներին առաջարկվում է ուսումնասիրել հետևյալը.

- կենսագործել թրաֆիքինգի զոհերին տրամադրվող պաշտպանության և աջակցության, այդ թվում, սակայն ոչ միայն՝ ապաստարանի մշտադիտարկման համար մշակված շրջանակային չափորոշիչները,
- որոշել, թե արդյոք սահմանված չափանիշները հանդես են գալիս որպես մատուցվող ծառայությունների որակի մշտադիտարկման արդյունավետ միջոց, մասնավորապես՝ թրաֆիքինգի մանկահասակ զոհերի առնչությամբ:

3.3 Հետաքննություն և հետապնդում

Թեև Հայաստանի օրենսդրական դաշտում մարդկանց թրաֆիքինգի ամրագրված սահմանումներն ընդհանուր առմամբ համապատասխանում են միջազգային սահմանումներին, սակայն շահառուներին խրախուսվում է դիտարկել հետևյալը.

- քննության առնել այն հարցը, թե արդյոք զոհի կողմից տրված համաձայնության նշանակություն չունենալու հանգամանքը միանշանակ արտացոլված է օրենսդրության մեջ, և արդյոք այդ հանգամանքն անդրադառնում է առաջնագծում գործող պաշտոնատար անձանց կողմից թրաֆիքինգի հնարավոր զոհերի նույնացման վրա,
- քննության առնել այն հարցը, թե արդյոք զոհի կողմից տրված համաձայնության նշանակություն չունենալու հանգամանքը միանշանակ արտացոլված է օրենսդրության մեջ, և արդյոք այդ հանգամանքն անդրադառնում է թրաֆիքինգ իրականացնողների դեմ իրականացվող հետապնդման վրա կամ դժվարություններ է ներկայացնում տվյալ հանցագործության ապացուցային տարրերի ապահովման հարցում,
- վավերացնել և կենսագործել Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան և Սեռական շահագործումից և չարաշահումներից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան:

Թրաֆիքինգի հակազդման, մասնավորապես՝ շահագործական նպատակներով հարկադիր աշխատանքի դեմ ուղղված ջանքերի ամրապնդման համար շահառուներին խրախուսվում է ուսումնասիրել հետևյալը.

- կենսագործել և ուշադրության կենտրոնում պահել Քրեական օրենսգրքի լրամշակումները, որոնք վերաբերում են իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությանը՝ որոշելով, թե արդյոք նման օրենսդրական նորմերն արդյունավետ կերպով ծառայում են իրավաբանական անձանց հետապնդմանը թրաֆիքինգի զոհերի անունից,
- կենսագործել և ուշադրության կենտրոնում պահել այն օրենսդրական նորմերը, որոնց դրույթների ներքո մարդու

իրավունքների պաշտպանն օժտված է օրենքի հորիզոնական խախտումները (ոչ պետական մասնավոր դերակատարների կողմից) քննության առնելու լիազորություններով, և պարզել, թե արդյոք նման օրենսդրական նորմերն իրականում ամրապնդում են թրաֆիքինգի հակազդման կարողությունները, թե ոչ:

Համոզվել, որ աշխատակիցների շրջանում ամրապնդվել է «կազմակերպված հանցավորություն» հասկացության ընկալումը Հայաստանի Հանրապետությունում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման ազգային ծրագրի համաձայն և ներդաշնակեցնել այն ազգային և միջազգային օրենսդրական նորմերի հետ:

- քննության առնել այն հարցը, թե ինչու մարդկանց թրաֆիքինգը չի ընկալվում որպես կազմակերպված հանցավոր խմբերի կողմից իրականացվող հանցատեսակ, չնայած այն հանգամանքին, որ ըստ ունեցած տեղեկությունների՝ ՀՀ օրենսդրությամբ (Քրեական օրենսգրքի 41-րդ հոդված) սահմանված է ավելի ցածր շեմ կազմակերպված հանցավոր խումբ համարվելու համար, քան Անդրազգային հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի շրջանակներում:

Շահառուներին առաջարկվում է ուսումնասիրել քրեական արդարադատության մարմինների աշխատակիցների պատրաստվածության մակարդակի բարձրացումը, որը կոչված է այն դարձնել առավել տեխնիկական և համապատասխանեցված թիրախային լսարանին, հատկապես՝ հետևյալ միջոցներով.

- ներգրավել Արդարադատության ակադեմիան դատախազների և դատավորների իրազեկվածության բարձրացման աշխատանքներում այն իրավիճակների և պայմանների առնչությամբ, որոնք մարդկանց խոցելի են դարձնում թրաֆիքինգի զոհ դառնալու և շահագործական դրության մեջ մտնելու տեսանկյունից,
- քննության առնել այն հարցը, թե արդյոք մարդկանց թրաֆիքինգի և դրա հետ կապված հանցանքների գործերով հնարավոր է ամրապնդել նախաձեռնողական հետաքննությունների և հատուկ հետաքննչական հնարքների, ինչպես նաև զուգահեռ ֆինանսական

հետաքննությունների կիրառումը, իսկ եթե այո, ապա ինչպե՞ս,

- ամրապնդել զոհերի վրա կենտրոնացած, այդ թվում՝ հատուկ խմբերի հետ հարցազրույցներ անցկացնելու քրեական արդարադատության մարմինների աշխատակիցների կարողությունները: Ջերծ մնալ քրեական արդարադատության ընթացակարգերի շրջանակներում կրկին զոհի կարգավիճակում հայտնվելու դեպքերից և պաշտպանել զոհերի իրավունքները՝ առանձնակի ուշադրություն դարձնելով երեխաների հատուկ իրավունքներին ու կարիքներին: Քրեական արդարադատության ընթացակարգերի ողջ ընթացքում պետք է կիրառվեն երեխայի համար նպաստավոր հարցազրույցների անցկացման հնարքներ, իսկ համապատասխան գնահատումների միջոցով պետք է որոշվի, թե արդյոք մարդկանց թրաֆիքինգի հետ կապված քրեական արդարադատության ընթացակարգերում ներգրավված երեխաները կարող են օգտվել նման միջոցառումներից, թե ոչ,
- հաջորդ գործողությունների ազգային ծրագրում արտացոլել կարողությունների բարձրացման աշխատանքները՝ նպատակ ունենալով հայաստանյան համատեքստում մշակել, հարմարեցնել և տարածել հատուկ հետաքննչական հնարքների և զուգահեռ ֆինանսական հետաքննության վերաբերյալ առկա ուսումնական նյութերը,
- ռազմավարական նկատառումներով տարածել նյութեր՝ նպատակ ունենալով կրճատել աշխատակազմի ինտենսիվ շրջանառությամբ պայմանավորված քրեական արդարադատության համակարգի արձագանքի պակասը:

Քրեական դատավարության օրենսգրքով և Նույնացման և աջակցության մասին օրենքով նախատեսված զոհերի և վկաների պաշտպանության մեխանիզմների գործնական կիրառման ապահովման համար շահառուներին առաջարկվում է ուսումնասիրել հետևյալը.

- զարգացնել 2013-2015թթ. գործողությունների ազգային ծրագրով նախատեսված ռազմավարությունը և հասարակական կազմակերպությունների կողմից զոհերի պաշտպանության ուղղությամբ կատարված աշխատանքները՝ սահմանելով զոհերին և վկաներին

սպառնացող վտանգների գնահատման ընթացակարգերը նախքան դատավարությունը, դրա ընթացքում և դրանից հետո, ինչպես նաև կենսագործելով զոհերի և վկաների պաշտպանության ծրագրեր:

3.4 Կանխարգելում

Խոցելի խմբերի իրազեկվածության բարձրացման և թրաֆիքինգի դեմ դրանց իրավագործման նպատակով՝ շահառուներին առաջարկում ենք ուսումնասիրել հետևյալը.

- ձեռնարկել լրացուցիչ միջոցառումներ արտերկրում օրինական կացության, աշխատանքի, ինչպես նաև նպատակակետ երկրներում թրաֆիքինգի և շահագործման ռիսկերի վերաբերյալ Հայաստանից մեկնող հնարավոր միգրանտներին մեկնումից առաջ տեղեկություններ մատուցելու համար, այդ թվում՝ ներգրավելով տարբեր մարզերում գործող միգրացիոն կենտրոնների աշխատակազմի անդամների,
- որպես իրազեկվածության բարձրացման արշավների թիրախ ընտրել առանձին խմբեր, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնություն և Թուրքիա մեկնող սեզոնային միգրանտների խմբեր,
- ուսումնասիրել և ընդլայնել ՀՀ սփյուռքի նախարարության և ՀՀ արտաքին գործերի նախարարության, ինչպես նաև սփյուռքի կազմակերպությունների հնարավոր դերակատարումն արտերկրում գտնվող հայերի շրջանում իրազեկվածության բարձրացման գործում,
- ուսումնասիրել ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում հայկական կրոնական կազմակերպությունների և մասնավորապես՝ Հայ Առաքելական Եկեղեցու հնարավոր դերակատարումն իրազեկվածության բարձրացման, ինչպես նաև թրաֆիքինգից տուժած անձանց խարանավորման նվազեցման գործում:

Սահմանային անցակետերի աշխատակիցների կանխարգելիչ դերակատարումն ամրապնդելու համար շահառուներին առաջարկվում է ուսումնասիրել հետևյալը.

- գնահատել, թե արդյոք սահմանային անցակետերում առաջարկվող տեղեկատվությունը դիտվում կամ օգտագործվում է Հայաստանից մեկնող անձանց կողմից, ինչպես նաև գնահատել, թե որքանով իրատեսական է սահմանային անցակետերում տեղեկատվության մատուցումը Հայաստան մուտք գործող այն անձանց, ովքեր կարող են շահագործման ենթարկվել Հայաստանի տարածքում: Նման տեղեկությունները կարելի է ստանալ Հայաստան վերադարձող անձանց շրջանում անցկացվելիք հարցման միջոցով, որը կոչված կլինի պարզել, թե թրաֆիքինգին առնչվող ինչպիսի տեղեկություններ են ստացվել նրանց կողմից մինչև մեկնումը և մեկնման կետում, ինչպես նաև այն, թե արդյոք նման տեղեկություններն օգտակար են գտնվել նրանց համար, թե ոչ,
- ամրապնդել նույնացմանը նախորդող փուլում նախնական բացահայտման գործընթացը՝ կիրառելով ընդհանրական նկարագրման հնարքները ռիսկային վիճակներում գտնվող անձանց նույնացման նպատակով, բաժանելով նրանց այլ անձանցից և ուղղորդելով նրանց այն աշխատակիցների մոտ, ովքեր կարող են իրականացնել հետագա նախնական բացահայտման աշխատանքներ և այդ անձանց մատուցել լրացուցիչ տեղեկատվություն մարդկանց թրաֆիքինգի հետ կապված վտանգների վերաբերյալ:

Բուն պատճառների և նպաստող գործոնների հայտնաբերման վրա հիմնված խոցելի խմբերի սոցիալական և տնտեսական իրավագործմանն ուղղված միջոցառումներն ամրապնդելու համար շահառուներին առաջարկվում է ուսումնասիրել հետևյալը.

- գնահատել և իրացնել տեղական և տարածաշրջանային սոցիալական կառույցների մարդկային ու ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ սոցիալական վարչությունների, խնամակալության հարցերով հանձնաժողովների, ինտեգրված սոցիալական ծառայությունների և խոցելի խմբերի հետ ուղղակիորեն աշխատող այլ մարմինների ռեսուրսները՝ վերջիններիս կարիքների ու կարողությունների բացերի հայտնաբերման նպատակով,
- քննության առնել այն հարցը, թե արդյոք աշխատանքային խմբում ընդգրկված իրավասու մարմինների կիսամյա կամ տարեկան զեկույցներում ներկայացվում են ըստ սեռի, գենդերային պատկանելության կամ այլ

հատկանիշների դասակարգված պատշաճ և օգտակար տեղեկություններ, որոնց օգնությամբ կարելի է որոշել խոցելիությունը մարդկանց թրաֆիքինգի զոհ դառնալու, թրաֆիքինգին որպես մարդավաճառ մասնակցելու, ինչպես նաև թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց ծառայություններից օգտվելու տեսանկյունից: Նշվածի հիման վրա որոշել, թե արդյոք հնարավոր է կատարելագործել հետազոտությունների անցկացման և տվյալների հավաքագրման ընթացակարգերը,

- հաջորդ գործողությունների ազգային ծրագրում գենդերային պատկանելությամբ պայմանավորված և այլ տեսակի խտրականության հաղթահարմանն ուղղված ռազմավարություններն արտացոլող հետազոտությունների և տվյալների հավաքագրման հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով ռասայական պատկանելության, էթնիկական ծագման, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, բնական կամ սոցիալական ծագման, ունեցած սեփականության, ծննդյան, ազգության, միգրացիոն կարգավիճակի, տարիքի, հաշմանդամության, ապաքաղաքացիության, ամուսնական կամ ընտանեկան կարգավիճակի, սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության, առողջական կարգավիճակի, ինչպես նաև տնտեսական կամ սոցիալական վիճակի հատկանիշով պայմանավորված խտրականությունը:

Աշխատանքի տեսչության վերաբերյալ վերը շարադրված առաջարկությունների կապակցությամբ շահառուներին առաջարկվում է ուսումնասիրել հետևյալը.

- վերանայել աշխատանքի տեսուչների գործունեությունը կարգավորող լիազորությունները, նրանց վերապահված լիազորություններն ու գործառույթները՝ ապահովել բավարար լծակներ այնպիսի հանգամանքների անդրադառնալու համար, որոնք կարող են աշխատողներին խոցելի դարձնել մարդկանց թրաֆիքինգի և շահագործման այլ ձևերի նկատմամբ,
- կենսագործել մեխանիզմ, որը կոչված կլինի արտոնագրել, կարգավորել և կրթել տեղի զբաղվածության գործակալությունները, որպեսզի վերջիններս կարողանան նպաստել արտերկրում հայերի հարկադիր աշխատանքի կանխարգելմանը,

- հայաստանցի միգրանտ աշխատողների զգալի թիվ ունեցող երկրներում նշանակել աշխատանքային հարցերով կցորդներ,
- ստեղծել արտերկրում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ցանց, որը կոչված կլինի աշխատել հայ միգրանտների հետ և կանխել վերջիններիս հարկադիր աշխատանքը և շահագործման այլ ձևերը: Հայ Առաքելական Եկեղեցին արտերկրում իր թեմերի միջոցով կարող է մասնակցել այս գործընթացին համապատասխան դերակատարների հետ միասին:

Ստացված տվյալների վրա հիմնված և առկա տեղեկություններով առաջնորդվող մարդկանց թրաֆիքինգի հակազդումն ամրապնդելու համար շահառուներին առաջարկվում է ուսումնասիրել հետևյալը.

- թվարկել շահառուների տվյալների հավաքագրման և հետազոտությունների կարիքներն ու կարողությունները՝ նպատակ ունենալով որոշել տվյալների հավաքագրման առաջնահերթությունները և մշակել տվյալների հավաքագրման համակարգված և ապահով մեխանիզմները,
- մշակել և պահպանել թրաֆիքինգի վերաբերյալ համալիր և հետևողական տեղեկատվական համակարգ՝ հավաքելով հուսալի վիճակագրական տվյալներ բոլոր հիմնական դերակատարներից և թույլ տալով, որ տվյալների բաշխումը (ըստ տարիքի, սեռի, շահագործման տեսակետի, ծագման և (կամ) նպատակակետ երկրի) ուղեկցվի դրանց պաշտպանության միջոցառումներով:

3.5. Համակարգում և համագործակցություն

Մարդկանց թրաֆիքինգի հակազդման ոլորտում համակարգումն ու համագործակցությունն ամրապնդելու համար շահառուներին առաջարկվում է ուսումնասիրել հետևյալը.

- արդյո՞ք ազգային համակարգողի նշանակումը կամրապնդի ազգային համակարգման և միջազգային համագործակցության գործընթացը, թե աշխատանքային խմբի մեխանիզմը բավարար է,
- արդյո՞ք տեղական կամ տարածքային ինքնակառավարման

մարմինները կարող են ավելի արդյունավետ կերպով ներգրավվել թրաֆիքինգի հակազդման միջոցառումներում:

Միջազգային հասարակական կազմակերպությունների ուժեղ կողմերը զարգացնելու համար հասարակական կազմակերպություններին առաջարկվում է ուսումնասիրել հետևյալը.

- հարաբերություններ հաստատել իրենց աշխատանքի համար կարևոր նշանակություն ունեցող երկրներում իրենց գործընկերների հետ՝ նպատակ ունենալով համագործակցել թրաֆիքինգի վտանգների, ինչպես նաև Հայաստանում և նպատակակետ երկրներում առկա օժանդակ ծառայությունների մասին իրազեկվածության բարձրացման ոլորտում:

Չսահմանափակվելով քրեական արդարադատության մարմինների աշխատակիցներով՝ Հայաստանի ողջ տարածքում թրաֆիքինգի հակազդման ոլորտի շահառուների կարողություններն ամրապնդելու համար առաջարկվում է ուսումնասիրել հետևյալը.

- կենսագործել կարողությունների զարգացման մեխանիզմներ, այդ թվում՝ համապատասխան պետական գերատեսչությունների, օրինակ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի հակազդման ոլորտում ակտիվ զբաղված այլ դերակատարների համար:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Ա. Օգտագործված գրականության ցանկ

Աղբյուր թիվ	Հղում	Հեղինակ, ամսաթիվ
Gen 1	Մարդկանց թրաֆիքինգ վերաբերյալ զեկույց, 2015թ. հուլիս	ԱՄՆ պետդեպարտամենտ, 2015թ.
Gen 2	Գնահատման ամփոփագիր, Թրաֆիքինգի հակազդման միջոցառումների ամրապնդում Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում (Փուլ II)	Աշխատանքի միջազգային կազմակերպություն (ԱՄԿ), 2004թ.
Gen 3	Փաստեր միգրացիայի մասին և միտումներ Հարավ-Արևելյան Եվրոպայում, Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում	Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄԿԿ), 2015թ.
Arm 14	Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 1385-Ա որոշում Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգը հաստատելու մասին	Հայաստանի Հանրապետության կառավարություն, 2008թ.
Arm 15	Թրաֆիքինգի դեմ պայքարի ուղղությամբ ներկայում իրականացվող միջոցառումների գնահատում	Հանա Շնայդրովա, Բլանկա Հանչիլով, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ), 2007թ.
Arm 16	Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքար իրականացնող իրավապահ մարմինների վերապատրաստման կարիքների գնահատման զեկույց	ՀՀ կառավարություն, Նորվեգիայի կառավարություն, Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր, ԱՄԿ, Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոն, ԵԱՀԿ, 2007թ. դեկտեմբեր
Arm 17	Հայաստանի Հանրապետությունում 2013-2015 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիր	Հայաստանի Հանրապետության կառավարության 2013թ. փետրվարի 28-ի թիվ 186-Ն որոշում
Arm 18	ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի՝ 2013 թ.-ի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի ուղղությամբ տարված աշխատանքների վերաբերյալ	Հայաստանի Հանրապետության կառավարություն, 2013թ.

Arm 19	Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի մասին եզրակացություններ, 2014թ.	ԱՄՆ աշխատանքի դեպարտամենտի միջազգային աշխատուժի հարցերով բյուրո, 2015թ.
Arm 20	Հայաստանի կողմից Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Եվրոպայի խորհրդի 2005թ.-ի կոնվենցիայի իրագործման վերաբերյալ զեկույց, ԳԲԵՏԱ (2012թ.)	Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագիտական խումբ (ԳԲԵՏԱ), Եվրոպայի խորհուրդ, Ստրասբուրգ, 21 սեպտեմբերի 2012թ.
Arm 21	Թրաֆիքինգը Հայաստանում. բացատրական ծանոթագրություն թիվ 13/53	Ռուբեն Եգանյան, Արևելյան Միգրացիայի վերաբերյալ կիրառական հետազոտությունների հարցերով կոնսորցիում (CARIM-East), 2013թ.
Arm 22	«Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենք	ՀՀ կառավարություն, ընդունվել է 17 դեկտեմբերի 2014թ.
Arm 23	Հայաստանի Հանրապետությունում 2010-2012 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիր	ՀՀ կառավարության թիվ 1140-Ն որոշում, 3 սեպտեմբերի 2010թ.
Arm 24	Քաղվածքներ ՀՀ Քրեական օրենսգրքից	
Arm 25	«Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքի ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ	Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն, 2014թ.
Arm 26	«Մարդկանց թրաֆիքինգի ռիսկի գնահատում կոմերցիոն սեռական ծառայություններ տրամադրող կանանց միջավայրում» հետազոտության արդյունքներ	Մարիամ Մխիթարյան, 2013թ. («Braind» ընկերություն)
Arm 27	ԳԲԵՏԱ փորձագիտական խմբի հարցաշար՝ Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի իրագործման երկրորդ գնահատում	Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով միջգերատեսչական աշխատանքային խմբի քարտուղար (ՀՀ արտաքին գործերի նախարարության Միջազգային կազմակերպությունների վարչություն Մարդու իրավունքների և հումանիտար համագործակցության բաժին), 2015թ.
Arm 30	«Փորձարկային ուսումնասիրություն Հայաստանում հարկադրի աշխատանքի և աշխատանքային թրաֆիքինգի վերաբերյալ»	ԵԱՀԿ, ՄԱՆ պետդեպարտամենտի Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ ոլորտում միջազգային համագործակցության բյուրո, 2015թ.

Նշում՝ Gen = ընդհանուր բնույթի հղում

Arm = Հայաստանի Հանրապետությանը վերաբերող հղում

Բ. Հարցազրույցներին մասնակցած շահառուներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ		
Պետական դերակատարներ	Միջազգային կազմակերպություններ	ՀԿ-ներ և այլ կազմակերպություններ
ՀՀ Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքեր	Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ ոլորտում միջազգային համագործակցության բյուրո (Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանություն)	«Ժողովրդավարությունն այսօր» ՀԿ
Հայաստանի Հանրապետության Քննչական կոմիտե	Աշխատանքի միջազգային կազմակերպություն (ԱՄԿ)	«Հույս և օգնություն» ՀԿ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Երևանում ԵԱՀԿ գրասենյակ	Անկախ փորձագետ
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	ՄԱԿ ՓԳՀ	«ԱՄՔՈՐ»
ՀՀ արդարադատության նախարարություն		
Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ		
ՀՀ գլխավոր դատախազություն		
ՀՀ ոստիկանություն		
ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչություն		
ՀՀ Միգրացիոն պետական ծառայություն		

Գ. Հարցազրույցների անցկացման գործիք-ձևանմուշ

Հարցազրույցների անցկացման գործիք-ձևանմուշ

Երկիր՝ Ավստրալիա

Հարցազրույց թիվ Երկրի առաջին երեք տառերը + հարց + թիվ, օրինակ ԱՎՍհարց1

Հարցազրույցների անցկացման գործիք-ձևանմուշ

Հրահանգներ հարցազրույցն անցկացնող անձի համար

1. Հարցազրույցը նշեք առանձին կողով. Օրինակ՝ երկրի առաջին երեք տառերը + հարց(ազրույց) + թիվ Օրինակ՝ ԱՎՍհարց1):
2. Հարցազրույցի մեկնարկից առաջ մասնակիցների համար ընթերցեք տեղեկատվական ծանոթագրությունը: Մասնակիցներին առաջարկեք վերցնել հարցազրույցի արձանագրության տպագիր և (կամ) էլեկտրոնային տարբերակը: Համոզվեք, որ Ձեզ մոտ կան բավարար քանակությամբ տպագիր օրինակներ:
3. Տվեք 1.1 և 1.2 հարցերը՝որոշելու, թե հարցերի դր խմբերն եք պատրաստվում տալ հարցվածներին:
4. Հարցերի յուրաքանչյուր խումբը տալիս անհրաժեշտության դեպքում օգտագործեք կետ առ կետ կազմված հրահանգները:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծնորհակալություն այս ուսումնասիրությանը մասնակցելու համար: Նախքան հարցազրույցին անցնելը կցանկանայի ներկայացնել Ձեզ որոշ լրացուցիչ տեղեկություններ:

Նախապատմություն

Ես անկախ խորհրդատու եմ և Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) հանձնարարությամբ իրականացնում եմ ուսումնասիրություն [նշել ՄՄԿ-ի կոնկրետ գրասենյակը]:

Այս ուսումնասիրության նպատակն է նախ վերլուծել թրաֆիքինգի հակազդման դաշտը, տեղեկություններ ստանալ որոշակի արդյունքների ապահովմանն ուղղված ապագա միջամտությունների կազմակերպման համար, ինչպես նաև ապահովել առավել ամբողջական մոտեցում թրաֆիքինգի հակազդման ոլորտում՝ ազգային, իսկ հնարավորության դեպքում նաև տարածաշրջանային մակարդակով:

Այսօրվա հարցազրույցի նպատակն է իմանալ Ձեր կարծիքը մարդկանց թրաֆիքինգի շուրջ Ձեր երկրում ստեղծված իրավիճակի, դրան ի պատասխան ձեռնարկվող միջոցառումների, ինչպես նաև այն հարցի վերաբերյալ, թե ինչպես կարելի է ամրապնդել հակազդման նման միջոցառումները:

Ուսումնասիրությունը հաջողված կլինի, եթե մենք լսենք Ձեր առավել անկեղծ պատասխանները: Խրախուսում ենք արտահայտվել հնարավորինս անկեղծ, ընդ որում այստեղ նախատեսված չեն ճիշտ կամ սխալ պատասխաններ:

Ակնկալվում է, որ հարցազրույցը կտևի մոտավորապես 60 րոպե: Մեր զրույցի ընթացքում ես կանեմ որոշ գրառումներ:

Մասնակցության հետ կապված ռիսկերն ու առավելությունները

Գոյություն ունի մի փոքր վտանգ, որ հետազոտական թիմի անդամներից բացի՝ որևէ մեկը նույնպես իմանա հարցերին Ձեր տրված պատասխանների մասին, այնուամենայնիվ, մենք համապատասխան քայլերի կդիմենք Ձեր գաղտնիությունն ապահովելու համար: Ձեր պատասխաններ չեն տարածվելու հետազոտական թիմի շրջանակներից դուրս: Ձեր կողմից տրամադրվելիք ցանկացած տեղեկություն համադրվելու է այլ տեղեկությունների հետ և վերջնական գնահատման զեկույցում Ձեզ որևէ կերպ չի վերագրվելու:

Այս ուսումնասիրության մասնակցելու արդյունքում Դուք չեք ստանա որևէ ուղղակի առավելություններ, սակայն հուսով ենք, որ Դուք գոհունակություն կզգաք նպաստելով բացթողումների, կարիքների և առաջնահերթությունների բացահայտմանը, ինչպես նաև կաջակցեք թրաֆիքինգի հակազդման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների ամրապնդման աշխատանքներին:

Լրացուցիչ տեղեկություններ ուսումնասիրության վերաբերյալ

- Ունե՞ք որևէ հարցեր այս ուսումնասիրության կամ հարցազրույցի վերաբերյալ:
- Կցանկանա՞ք արդյոք ստանալ այս տեղեկությունների տպագիր կամ էլեկտրոնային օրինակը:

Եթե այս հարցազրույցի հետ կապված որևէ լրացուցիչ մեկնաբանություններ կամ դիտողություններ ունեք, ապա խնդրում ենք կապվել [մուտքագրեք մանրամասն հարցազրույցներ անցկացնող անձի անունն ու կոնտակտային տվյալները]:

Եթե այս ուսումնասիրության հետ կապված որևէ լրացուցիչ հարցեր կամ բողոքներ ունեք, ապա խնդրում ենք կապվել [մուտքագրեք մակրամասն հարցազրույցներ անցկացնող անձի անունն ու կոնտակտային տվյալները]:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Երկիր՝	
Հարցազրույց անցկացնող անձի անուն՝	
Հարցազրույց անցկացնող անձի կազմակերպություն՝	
Հարցվողի անուն (կամընտրական)՝	
Հարցվողի կազմակերպություն՝	
Հարցվողի պաշտոնական կարգավիճակ՝	
Հարցազրույցի անցկացման ամսաթիվ և ժամ՝	
Հարցազրույցի ձևաչափ՝	
Մասնակիցների քանակն ու սեռը՝	

1. Ներածական հարցեր

1.	Հարցվողի ընդհանուր բնութագիր
1.1.	Ինչպիսին է Ձեր պաշտոնական կարգավիճակը: Որո՞նք են Ձեր առաջնային աշխատանքային պարտականությունները: <i>Պարասխան</i>
1.2.	Ինչպիսի բնույթի աշխատանք եք կատարում մարդկանց թրաֆիքինգի հակազդման ոլորտում: <i>Պարասխան</i>
Ծրագիր	<p>Հրահանգներ հարցազրույցն անցկացնող անձի համար՝ Հարցվողի վերը շարադրված պատասխանների հիման վրա ընտրեք հարցերի 2-ից 3 խումբ (2-6 ստորև բերված հարցերի խմբերից), որոնք պետք է տրվեն հարցվողին ի հավելումն հարցերի 7-րդ և 8-րդ խմբերի: Ջնջեք Ոչ / Այո պատասխաններն ըստ անհրաժեշտության:</p> <ol style="list-style-type: none"> Թրաֆիքինգի շուրջ ստեղծված իրավիճակ և միտումներ Ոչ (բաց թողնել) / Այո (անցնել 2-րդ բաժնին): Նույնացում և ուղղորդում Ոչ (բաց թողնել) / Այո (անցնել 3-րդ բաժնին): Պաշտպանություն և աջակցություն Ոչ (բաց թողնել) / Այո (անցնել 4-րդ բաժնին): Հետաքննություն և հետապնդում Ոչ (բաց թողնել) / Այո (անցնել 5-րդ բաժնին): Կանխարգելում Ոչ (բաց թողնել) / Այո (անցնել 6-րդ բաժնին): <p>Անկախ վերը տրված պատասխաններից՝ բոլոր մասնակիցներին պետք է տրվեն հարցեր հետևյալ բաժնիներից.</p> <ol style="list-style-type: none"> Համագործակցություն շահառուների շրջանում Այո (անցնել 7-րդ բաժնին): Եզրափակիչ հարցեր Այո (անցնել 8-րդ բաժնին):

2. Թրաֆիքինգի շուրջ ստեղծված իրավիճակ և միտումներ

2.	Հարավային Կովկասի երկրներում թրաֆիքինգի շուրջ ստեղծված իրավիճակ
2.1	Թրաֆիքինգի ինչպիսիք մուտքային, ելքային և (կամ) տարանցիկ ուղիներ գոյություն ունեն Ձեր երկրում, տարածաշրջանում կամ ենթատարածաշրջանում: Որո՞նք են հիմնական աղբյուր, տարանցիկ և նպատակակետ երկրները կամ վայրերը:
	<i>Պատասխան</i>
2.2	Որո՞նք են շահագործման հիմնական ձևերը, որոնց հանդիպում եք Ձեր աշխատանքում: Որո՞նք են դրանցում ներգրավված հիմնական ոլորտները (ասել է թե՛ ինչ տեսակի աշխատանքի համար են շահագործվում մարդիկ)
	<i>Պատասխան</i>
2.3	Որո՞նք են զոհերին ներգրավելու հիմնական մեթոդները, որոնց դիմում են թրաֆիքինգ իրականացնողները:
	<i>Պատասխան</i>
2.4	Ինչ է իրենից ներկայացնում առանձին թրաֆիքինգ իրականացնողների կամ նրանց խմբերի հիմնական ընդհանրական բնութագիրը:
	<i>Պատասխան</i>
2.5	Ինչ է իրենից ներկայացնում զոհերի ընդհանրական բնութագիրը (օրինակ՝ տարիք, գենդերային պատկանելություն, ազգություն և այլն):
	<i>Պատասխան</i>
2.6	Ինչպե՞ս են փոխվում ուղիներն ու միտումները: Ձեր կարծիքով ինչու՞ են դրանք փոխվում: Ձեր կարծիքով արդյո՞ք թրաֆիքինգն իրենից ներկայացնում է աճող, թե նվազող հիմնախնդիր: Գուցե ո՛չ մեկը, ո՛չ էլ մյու՛սը: Ինչու՞:
	<i>Պատասխան</i>

3. Նույնացում և ուղղորդում

3.	Թրաֆիքինգի (հնարավոր) զոհերի նույնացման և ուղղորդման իրավական և քաղաքական դաշտը
3.1	<p>Ինչպե՞ս են իրավասու մարմինները տեղեկանում թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձի գոյության մասին, որպեսզի օգնեն նրան:</p> <ul style="list-style-type: none"> ● Ո՞վ է զբաղվում զոհերի նույնացմամբ: (Օրինակ՝ ինքնանույնացում, ընկերներ, ընտանիքի անդամներ, ոստիկանություն, սահմանապահներ, աշխատանքի տեսուչներ կամ հյուպատոսարաններ)
	<i>Պատասխան</i>
3.2	<p>Ո՞ր իրավասու մարմիններն են օժտված անձին պաշտոնապես թրաֆիքինգի զոհ համարելու լիազորությամբ:</p> <ul style="list-style-type: none"> ● Որտեղի՞ց են նրանք ստանում իրենց լիազորությունները: Օրինակ՝ օրենքի, քաղաքականության ներքո: ● Ի՞նչ իրավունքներ է նախատեսում պաշտպանական կարգավիճակը համապատասխան անձի համար (օրինակ՝ սոցիալական աջակցություն և պաշտպանություն, կացության թույլտվություն, աշխատանքի թույլտվություն, այլ իրավունքներ)
	<i>Պատասխան</i>
3.3	<p>Ինչպիսի՞ չափանիշներ են (օրինակ՝ ցուցիչներ) օգտագործվում են թրաֆիքինգի զոհերի նույնացման համար:</p> <ul style="list-style-type: none"> ● Արդյո՞ք օգտագործվում են նախնական բացահայտման ստուգման ցանկեր կամ նույնացման այլ գործիքներ: ● Ո՞վ է օգտագործում դրանք, և ինչպե՞ս են այդ ստուգման ցանկերը տարածվում: ● Որքանո՞վ են դրանք արդյունավետ: Արդյո՞ք դրանք ըստ հարկի արտացոլում են բոլոր զոհերի ընդհանրական նկարագրերը: ● Ցուցիչներից որո՞նք են առավել արդյունավետ Ձեր երկրի համատեքստում:
	<i>Պատասխան</i>
3.4	<p>Ո՞ր միջոցներին են դիմում զոհերը ինքնանույնացման համար (օրինակ՝ թեժ գծեր, տեղեկատու վահանակներ, հայտարարություններ):</p> <ul style="list-style-type: none"> ● Որքանո՞վ են դրանք արդյունավետ: ● Զոհերի ո՞ր տոկոսն է նույնացվում այս միջոցներով:
	<i>Պատասխան</i>

3.5	<p>Արդյո՞ք ազգային և տարածաշրջանային մակարդակով գործում են ուղղորդման մեխանիզմներ նույնացման, ուղղորդման և աջակցության համար:</p> <ul style="list-style-type: none"> ● Ո՞ր գերատեսչությունները կամ հաստատություններն են ներգրավված: ● Ինչպե՞ս են ամրագրված նման մեխանիզմները (օրինակ՝ փոխըմբռնման հուշագրեր, օրենսդրական նորմեր): ● Արդյո՞ք այս մեխանիզմները գործնականում իրագործելի են և արդյունավետ: Ինչու՞ կամ ինչու՞ ոչ: ● Արդյո՞ք առկա են վիճակագրական տվյալներ նույնացված անձանց քանակի վերաբերյալ:
	<i>Պատասխան</i>

4. Պաշտպանություն և աջակցություն

4.	Թրաֆիքինգի զոհերի պաշտպանության և աջակցության իրավական և քաղաքական դաշտ
4.1	<p>Ո՞ր հաստատություններն են ներկայումս աջակցություն և պաշտպանություն մատուցում թրաֆիքինգի զոհերին:</p> <ul style="list-style-type: none"> ● Որտեղի՞ց են նրանք ստանում իրենց լիազորությունները: Օրինակ՝ օրենքի, քաղաքականության ներքո:
	<i>Պատասխան</i>
4.2	<p>Ինչպե՞ս են նման ծառայությունների կարիք ունեցող անձինք կապվում պաշտպանության և աջակցության մատուցողների հետ:</p>
	<i>Պատասխան</i>
4.3	<p>Պաշտպանության և աջակցության ինչպիսի՞ ծառայություններ են մատուցվում թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց: Օրինակ՝</p> <ul style="list-style-type: none"> ● Ապաստարան, բժշկական և հոգեբանա-սոցիալական աջակցություն ● Մտորումների շրջան ● Իրավաբանական օգնություն ● Կացության թույլտվություն ● Փոխհատուցում ● Վերականգնում, վերադարձ և վերաինտեգրում (աշխատանքի տեղավորում, վերապատրաստում)
	<i>Պատասխան</i>

<p>4.4</p>	<p>Ինչպե՞ս են զոհերին մատուցվող ծառայությունները պայմանավորված կամ տարբերակված հետևյալի հիման վրա.</p> <ul style="list-style-type: none"> ● Շահագործման տեսակ, որին նրանք ենթարկվել են (օրինակ՝ սեռական, աշխատանքային կամ այլ) ● Տարիք (օրինակ՝ երեխաներ կամ մեծահասակներ) ● Գենդերային պատկանելություն (օրինակ՝ տղամարդիկ կամ կանայք) ● Ազգություն կամ կարգավիճակ (օրինակ՝ քաղաքացի կամ ոչ քաղաքացի, կանոնավոր կամ անկանոն միգրանտ) ● Իրավապահ մարմինների հետ համագործակցելու պատրաստակամություն ● Այլ գործոններ կամ սահմանափակումներ (օրինակ՝ արդյո՞ք զոհերը պետք է գտնվեն ապաստարաններում, արդյո՞ք ապաստարանների համակարգից դուրս գտնվող զոհերը նույնպես կարող են օգտվել համապատասխան ծառայություններից, Արդյո՞ք այդ անձինք պաշտոնապես պետք է ճանաչվեն թրաֆիքինգի զոհ):
	<p><i>Պատասխան</i></p>
<p>4.5</p>	<p>Արդյո՞ք գործում են մշտադիտարկման համակարգեր, որոնք կոչված են ապահովել աջակցության և պաշտպանության ծառայությունների բավարար մակարդակը (օրինակ՝ չափանիշներ, արտաքին գնահատման ծրագրեր, զոհերի արձագանքի գրանցման մեխանիզմներ):</p> <ul style="list-style-type: none"> ● Ինչպիսի՞ չափանիշներով է իրականացվում մշտադիտարկումը: ● Որքան՞ով են դրանք արդյունավետ: Արդյո՞ք ծառայությունները պատշաճ են և համապատասխանում են առկա կարիքներին: ● Ինչպիսի՞ թերություններ կան նման ծառայություններում: Որո՞նք են հայտնաբերված բացթողումները:
	<p><i>Պատասխան</i></p>
<p>4.6</p>	<p>Որո՞նք են ֆինանսավորման աղբյուրները (կառավարություն, նվիրատու կազմակերպություն, մասնավոր աղբյուր): Արդյո՞ք նման ծառայությունների ֆինանսավորումը բավարար է: Արդյո՞ք ֆինանսավորումը կայուն է կամ ժամկետային (օրինակ՝ կապված է որևէ առանձին ծրագրի հետ):</p>
	<p><i>Պատասխան</i></p>

5. Հետաքննություն և հետապնդում

5.	<p>Թրաֆիքինգի դեպքերի հետաքննության և հետապնդման իրականացման իրավական և քաղաքական դաշտ</p>
5.1	<p>Ո՞ր հաստատություններն են ներգրավված մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեպքերի հետաքննության և հետապնդման գործընթացում:</p> <ul style="list-style-type: none"> ● Արդյո՞ք գոյություն ունեն մասնագիտացված իրավապահ մարմինների ստորաբաժանումներ, դատախազներ կամ դատական մարմինների ներկայացուցիչներ, ովքեր զբաղվում են թրաֆիքինգի գործերով: ● Որտեղի՞ց են նրանք ստանում իրենց լիազորությունները: Օրինակ՝ օրենքի, քաղաքականության ներքո:
	<p><i>Պատասխան</i></p>
5.2	<p>Արդյո՞ք օրենսդրական դաշտը պատշաճ կերպով անդրադառնում է թրաֆիքինգին և դրան առնչվող խնդիրներին (օրինակ՝ շահագործում, հարկադիր աշխատանք, ստրկություն, սեռական շահագործում, կանանց դեմ ուղղված խտրականություն և բռնություն, միգրանտների իրավունքների խախտումներ)</p> <ul style="list-style-type: none"> ● Որո՞նք են հայտնաբերված բացթողումները և մարտահրավերը: ● Ինչպիսի՞ նշանակություն ունի միջազգային իրավական դաշտը:
	<p><i>Պատասխան</i></p>
5.3	<p>Թրաֆիքինգի դեպքերի և դրա հետ կապված հանցագործությունների հետաքննության, հետապնդման և դատապարտման քանի՞ դեպք է արձանագրվել է երկրում:</p> <ul style="list-style-type: none"> ● Արդյո՞ք այդ թիվն աճում է, թե նվազում: Ինչու՞:
	<p><i>Պատասխան</i></p>
5.4	<p>Իրավական ո՞ր նորմերը կամ դրույթներն են առավել հաճախ օգտագործվել թրաֆիքինգի գործերով հետապնդում իրականացնելու համար:</p> <ul style="list-style-type: none"> ● Ձեր կարծիքով ինչու՞ են օգտագործվել հենց այս նորմերը: ● Որո՞նք են համապատասխան իրավական դրույթների կիրառման հիմնական մարտահրավերները (օրինակ՝ սահմանման ընկալում, շահագործմանը տրված համաձայնության նշանակության չունենալու հանգամանքի ընկալում և այլն):
	<p><i>Պատասխան</i></p>

5.5	<p>Արդյո՞ք գործում են վերապատրաստման և (կամ) կարողությունների ձևավորման մեխանիզմներ, որոնք նախատեսված են քրեական արդարադատության մարմինների աշխատակիցների ընկալումը խթանելու համար:</p> <ul style="list-style-type: none"> ● Արդյո՞ք իրավապահ մարմինների աշխատակիցները, դատախազները և դատավորներն անցնում են պարբերական վերապատրաստում: ● Արդյո՞ք թրաֆիքինգի հակազդման վերաբերյալ վերապատրաստումն ընդգրկված է քրեական արդարադատության մարմինների աշխատակիցների համար հաստատված ուսումնական ծրագրում (օրինակ՝ ոստիկանության ակադեմիաներում, բուհերի իրավաբանական ֆակուլտետներում և արդարադատության ակադեմիաներում): ● Արդյո՞ք նման ուսուցանումը պատշաճ է և արդյունավետ:
	<i>Պատասխան</i>
5.6	<p>Արդյո՞ք գործում են համապատասխան մեխանիզմներ, որոնք կոչված են խթանել համագործակցությունն իրավապահ մարմինների աշխատակիցների, դատախազների և դատավորների, ինչպես նաև համապատասխան ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունների միջև՝ նպատակ ունենալով աջակցել և պաշտպանել զոհերին և վկաներին դատավարության ընթացքում:</p>
	<i>Պատասխան</i>
5.7	<ul style="list-style-type: none"> ● Արդյո՞ք հետաքննության և հետապնդման միջոցառումները պատշաճ են և արդյունավետ: ● Արդյո՞ք իրականացվում են նախաձեռնողական հետաքննություններ: ● Արդյո՞ք օգտագործվում են հատուկ հետաքննչական հնարքներ և (կամ) զուգահեռ ֆինանսական հետաքննություններ: ● Արդյո՞ք հետաքննության և հետապնդման միջոցառումները կենտրոնացած են զոհերի վրա:
	<i>Պատասխան</i>

6. Կանխարգելում

6.	Մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման իրավական և քաղաքական դաշոյ
6.1	Ո՞ր հաստատություններն են աշխատում թրաֆիքինգի և դրա հետ կապված շահագործման կանխարգելման ուղղությամբ: <ul style="list-style-type: none"> ● Որտեղից են նրանք ստանում իրենց լիազորությունները: Օրինակ՝ օրենքի, քաղաքականության ներքո:
	<i>Պատասխան</i>
6.2	Արդյո՞ք թրաֆիքինգի կանխարգելման համար իրականացվում են գանգվածային լրատվամիջոցների և իրազեկվածության բարձրացման ծրագրեր : Եթե այո, ապա ո՞վ է նման ծրագրերի թիրախը, և ո՞րն է դրանց շրջանակներում հաղորդվող ուղերձը: <ul style="list-style-type: none"> ● Որքանով արդյունավետ են նման ջանքերը:
	<i>Պատասխան</i>
6.3	Արդյո՞ք գործում են ծրագրեր, որոնք կոչված են մեղմացնել խոցելիության գործոնները և ստեղծել ապրուստի այլընտրանքային միջոցներ ռիսկային դրության մեջ գտնվող անձանց համար (օրինակ՝ ծննդի գրանցում, աղքատություն, թերզարգացում, խտրականություն) <ul style="list-style-type: none"> ● Որքանով են արդյունավետ նման ջանքերը:
	<i>Պատասխան</i>
6.4	Արդյո՞ք ձեռնարկվում են միջոցառումներ, որոնք կոչված են անդրադառնալ պահանջարկին (օրինակ՝ շահագործական բնույթի ծառայությունների համար): Արդյո՞ք գործում են սոցիալական և տնտեսական ծրագրեր, որոնք կոչված են հակազդել շահագործական աշխատանքային գործելակերպը:
	<i>Պատասխան</i>
6.5	Արդյո՞ք ձեռնարկվում են սահմանների կառավարման միջոցառումներ, որոնք կոչված են կանխել սահմանի հատմամբ թրաֆիքինգի իրականացումը: Արդյո՞ք սահմանված են ռազմավարություններ, որոնք կոչված են ապահովել կանոնավոր միգրացիայի հնարավորություններ և նվազեցնել խոցելիությունը թրաֆիքինգի նկատմամբ:
	<i>Պատասխան</i>
6.6	Արդյո՞ք հետազոտական հաստատություններն ակտիվ զբաղվում են մարդկանց թրաֆիքինգի բուն պատճառների և նպաստող գործոնների ընկալման և հետազոտության ամրապնդմամբ: Որո՞նք են նման հետազոտությամբ հայտնաբերված բացթողումները:
	<i>Պատասխան</i>
6.7	Արդյո՞ք կանխարգելման միջոցառումները պատշաճ են: Եթե ոչ, ապա որո՞նք են հայտնաբերված բացթողումները: Ինչպիսի՞ թերություններ են հայտնաբերվել նման միջոցառումներում:
	<i>Պատասխան</i>

7. Համագործակցությունը շահառուների շրջանում (գործընկերություններ)

7.	Ազգային, երկկողմ, տարածաշրջանային, ենթատարածաշրջանային գործընկերություններ, ցանցեր և համագործակցություններ
7.1	<p>Արդյո՞ք ազգային մակարդակով գործում են թրաֆիքինգի հակազդման ռազմավարության համակարգման, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներ (օրինակ՝ գործողությունների ազգային ծրագիր):</p> <ul style="list-style-type: none"> ● Ո՞վ է ներգրավված (օրինակ՝ կառավարություն, քաղաքացիական հասարակություն, արհմիություններ): ● Ո՞ր ուղղություններով են նրանք համագործակցում (օրինակ՝ նույնացում, ուղղորդում, պաշտպանություն, աջակցություն, հետաքննություն, հետապնդում, վերադարձ, վերաինտեգրում և այլն): ● Արդյո՞ք իրագործման մեխանիզմը մշտադիտարկվում և գնահատվում է կանոնավոր կերպով (օրինակ՝ մարդու իրավունքների հարցերով զբաղվող որևէ հաստատության կամ մարդու իրավունքների պաշտպանի կողմից): ● Արդյո՞ք կառավարությունը ֆինանսավորում է համակարգման մեխանիզմը: ● Կարո՞ղ եք բերել արդյունավետ համագործակցության որոշ օրինակներ:
	<i>Պատասխան</i>
7.2	<p>Արդյո՞ք գոյություն ունեն երկկողմ, տարածաշրջանային կամ ենթատարածաշրջանային մեխանիզմներ թրաֆիքինգի հակազդման գործող ռազմավարության համակարգման, մշտադիտարկման և գնահատման համար (օրինակ՝ իրավական հարցերում փոխադարձ աջակցության պայմանագրեր, արտահանձնման մասին պայմանագրեր կամ փոխըմբռնման հուշագրեր):</p> <ul style="list-style-type: none"> ● Ո՞վ է ներգրավված (օրինակ՝ մասնագիտացված բաժիններ, դիվանագիտական առաքելության աշխատակազմ, հասարակական կազմակերպություններ) ● Ո՞ր ուղղություններով նրանք համագործակցում (օրինակ՝ նույնացում, ուղղորդում, պաշտպանություն, աջակցություն, հետաքննություն, հետապնդում, վերադարձ, վերաինտեգրում և այլն): ● Արդյո՞ք գոյություն ունեն դատական և իրավապահ մարմինների միջև անդրազգային համագործակցության մասին որևէ պայմանագրեր, որոնք անցնում են պարբերական գնահատում: ● Կարո՞ղ եք բերել արդյունավետ համագործակցության որոշ օրինակներ:
	<i>Պատասխան</i>

7.3	Որքանով արդյունավետ և կայուն (կամ հակառակը) նման գործընկերությունները: Եթե ոչ, ապա որո՞նք են հայտնաբերված բացթողումները: Ինչպիսի՞ թերություններ կան նման ծառայություններում:
	<i>Պատասխան</i>

8. Եզրափակիչ հարցեր

8.	Վերջնական առաջարկություններ
8.1	Ձեր կարծիքով որո՞նք են թրաֆիքինգի արդյունավետ հակազդման հիմնական մարտահրավերներն ու արգելքները (օրինակ՝ ռեսուրսների պակաս, կարողություններ, քաղաքականություններ, ընթացակարգեր, արձանագրություններ, քաղաքական կամք):
	<i>Պատասխան</i>
8.2	Որո՞նք են թրաֆիքինգի հակազդման գործողությունների ամրապնդման վերաբերյալ Ձեր հիմնական առաջարկությունները:
	<i>Պատասխան</i>
8.3	Կան արդյո՞ք որևէ այլ հարցեր, որոնց կցանկանայիք այսօր պատասխանել: Ինչպե՞ս կպատասխանեիք այդ հարցերին:
	<i>Պատասխան</i>
8.4	Կարող՞ք եք արդյոք առաջարկել որևէ գործընկերոջ, ով Ձեր կարծիքով կցանկանար մասնակցել կարճ (20-րոպեանոց) այս թեմայով ինքնուրույն էլեկտրոնային հարցմանը:
	<i>Պատասխան, էլեկտրոնային փոստ</i>

Եզրափակիչ հրահանգներ հարցազրույց անցկացնող անձին

- Շնորհակալություն հայտնել մասնակցին հատկացված ժամանակի համար:
- Ստորև նշել հարցազրույցի վերաբերյալ որևէ այլ (ներքին) դիտողություններ

Հարցազրույց անցկացնող անձի դիտողություններ, մեկնաբանություններ, նշումներ (օրինակ՝ հիշեցումներ հեղափոխության մասին):

Դ. Հարցման գործիքի ձևանմուշ

Հարցման գործիքի ձևանմուշ
 Հարցում թիվ Երկրի առաջին երեք տառերը + հարց + թիվ,
 օրինակ՝ ԱՎՍհարց1

ՀԱՐՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ

Կարիքների գնահատում Հարավային Կովկասի երկրներում թրաֆիքինգի հակազդման միջոցառումների ոլորտում

Ձեզ առաջարկվում է մասնակցել համացանցային հարցմանը, որը նվիրված է Հարավային Կովկասի երկրներում թրաֆիքինգի շուրջ ստեղծված իրավիճակին և թրաֆիքինգի հակազդման միջոցառումներին:

Նախապատմություն և նպատակ

